

ԱՐՁԱԿ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ





Հեղինակը՝ 1960ական թուականներուն

ՀԱՅԿԱԶԵՆՑ ՅԱՐԱՓՈՓՈՒՅ ԴԱԻՕՆ



Մենք թիւով չորս հոգի էինք, չորս անբաժան ընկերներ: Մեր հայրենիքէն հեռու օտար երկնքին տակ, պարզ ու անպաճոյճ սենեակի մը մէջ, սեղանի մը շուրջ բոլորուած՝ քարտէսի մը վրայ բիծ մը կը փնտուէինք, որ աստե՞օք մեր ծննդավայրն էր, ուր մենք մեր մանկութիւնը եւ պատանեկան օրերը ապրեր էինք:

Երկար փնտուտութէ ետք յանկարծ մեզմէ տարեցը իր ցուցամատը կէտի մը վրայ սեղմելով՝ բացագանչեց.

— Ահաւասիկ, կը տեսնէ՞ք այս մանր կէտը որ քարտէսին վրայ հիւլէի մը մեծութիւնը հազիւ ունի, ան իմ ծննդավայրս է:

— Անո՞նք:

— Ինչ կ'ուզէք կոչեցէք. աստե՞ն մը Հերոսաւան կը կոչէին, որովհետեւ այդ փոքր գիւղը աւելի շատ հերոսներ տուեր է աշխարհին՝ քան այն բոլոր մեծ քաղաքները, որ այս քարտէսին վրայ մեծատառ գիրերով յիշուած են:

Բայց ատրկա իր պատմութիւնն ունի: Հին աստե՞նները գիւղին մէջ ո՛վ որ ժանգոտած դանակ մը շարժէր, որեւէ հրազէն օդին մէջ պարպելու ըլլար, զայն անմիջապէս կը հերոսացնէին:

Մեզմէ տարեցները կը պատմեն, թէ գիւղին ծայրը, ապառաժներու վրայ կար խրճիթ մը, որուն մէջ կ'ապրէր Հայկազ աղբարը իր բարեպաշտ կնոջ հետ, որուն անունն էր Հայկուհի: Անոնք իրենց պատանեկան հասակին սիրահարուեր եւ ամուսնացեր էին, եւ բախտաւորուած էին չորս մանչ զաւակներով, որոնց կրտսերը հազիւ մէկ ամսական՝ քալել կը փորձէ: Իսկ իր մէկ տարեկանին հոս հոն կրակ կը նետէ եւ կրակի հետ խաղալու իր փափաքէն չի հրաժարիր:

Մտողքը, ապշահար կը դիտեն իրենց որդւոյն անբնականօրէն յանդուգն քայլերը: Կը նկատեն նաեւ որ նա կանխահասօրէն խօսելու եւ ինքնագովութեան փորձեր ալ կ'ընէ, այս բոլորին հետ կը նշմարեն անոր մէջ ինքնագովութեան մարմաջ մը:

Դաւօն գարմանալիօրէն կը զանազանուէր ուրիշ փոքրիկներէ իր այլազան յատկութիւններով: Իր եղբայրները աւելի հանդարտաբարոյ եւ շրջահայեաց էին: Անոնք գործի մը նախաքայլերուն եւ անոր հետեւանքին այնքան կարեւորութիւն կուտային՝ որքան անոր ծրագրին ու գործադրութեան յատակագծին: Մինչդեռ իրենց կրտսեր եղբայրը միշտ անպէտ խաղալիքներու ետեւէն էր: Ան ձեռքը ժանգոտ զմեղի մը ունէր միշտ, որուն հետ կը խաղար եւ անով իր ընկերներուն կը սպառնար, երբ զբօսանքի աստե՞ն չհամաձայնէին իրեն հետ:

Երբ անոր կը հարցնէին թէ, — Դաւօ, երբ մեծնաս ի՞նչ պիտի ըլլաս, ան կը պատասխանէր.

— Ազգս ու հայրենիքս պիտի փրկեմ:

Անցնող օրերուն հետ՝ Հայկազենց յարափոփոխ Դաւօն մեծցաւ, ու դարձաւ իր ազգին մեծ ցաւ:

Թէեւ ազգ եւ հայրենիք իր շրթներէն չէր հեռացներ, բայց իր սրտին մէջ ազգ ու հայրենիք տեղ չունէին: Կամ այնքան տեղ ունէին, որ կրնար անոնց անունով գրաւ մը կամ շաքարի կտոր մը շահիլ օտար դրացիներէն:

Դաւօն ամէն խաղի կամ գործի մէջ կ'ուզէր տիրապետել իր ազգակից ընկերներուն եւ ամբողջ գիւղին վրայ: Իսկ միւսները կ'ուզէին որ ամէնքն հաւասար աշխատէին, բոլորին բարիքին համար: Եւ Դաւօ գտաւ օտար անառակ ընկերներ, անոնցմով իր գիւղացիները վախցնելու եւ գիւղապետ դառնալու համար:

Դաւօն որքան մեծցաւ՝ այնքան աւելի գինովցաւ իշխելու փառքով, մոռցաւ իր ծնողքը եւ հաւատքը, մոռցաւ իր ազգն ու հայրենիքը: Գնաց եւ իրեն համար ընտրեց նոր միջավայր մը, միանալով միջազգային ընկերութիւններու, որոնք կ'ուզէին առնել ինչ որ իրենցը չէր, նոյնիսկ գողնալով եւ սպաննելով:

Ժամանակ մը վերջ Դաւօն փափաքեցաւ, որ շրջակայ գիւղերն ալ իրեն ենթարկուին եւ սկսաւ պտտիլ: Գացած տեղերը կը քարոզէր թէ վանքերու հաւերն ու խոզերը իրենցն են: Սէրը ազատ պէտք է ըլլայ կ'ըսէր: Եւ երբ տեսաւ, որ մեծ դժգոհութիւն ու բողոք կը բարձրանար՝ պատուիրեց լռեցնել չհամակերպողները: «Եթէ չենք կրնար գրչով լռեցնել մեր հակառակորդները՝ պէտք է որ գէնքով լռեցնենք», կը պոռար: Որոշումը քուէարկուեցաւ եւ միջոցը Դաւօնի գործելու եղանակը մնաց միշտ:

Դաւօն իր վնասակար արկածներով այնքան չարիքներ գործեց, որ իր հին ընկերներէն շատեր սկսան իրմէն հեռանալ:

Օրին մէկը իր հօրեղբայրը փորձեց խրատել զայն.

— Դաւօ, տղա՛ս, մինչեւ ե՞րբ դուն այս անխելք գործերդ պիտի շարունակես. արդէն գիւղին խաղաղութիւնը խանգարուած է: Գիւղացիք մտահոգութեան մատնուած են: Քու ներկայ դիրքդ մեզ անդունդը կրնայ տանիլ: Սա օտար չարագործ ընկերներուդ փէշերը ձգէ: Քու գիւղացիներուդ տէրէպէյի ըլլալու սէվտայէդ վա՛ղ անցիր: Խելքի եկուր եւ ազգակից ընկերներուդ խառնուէ՛. մարդ եղիր, մարդավայել բաներ ըրէ՛: Վախցիր Աստուծոյ եւ քուկիներուդ դատաստանէն:

Դաւօն թէեւ ականջները կախած լսեց իր հօրեղբօր խօսքերը, բայց մէկէն դէմքը բարկութենէն ծամածռեց, անպատկառ խօսքերով վիրաւորեց իր հօրեղբայրը եւ սպառնաց լռեցնել զայն, եթէ ան որեւէ առթիւ միջամուխ ըլլար իր գործերուն:

Անցան օրեր ու տարիներ, Դաւօն ազատ ու համարձակ շարունակեց իր արկածախնդիր գործունէութիւնը: Օր մը գիւղին քահանային մօրուքը խուզել տուաւ իր մէկ հրահանգը չկատարելուն համար: Օր մը եկեղեցիին սրբազան գոյքերը վերցնելով աճուրդի հանեց, պատրուակելով թէ իր ընկերներուն ստամոքսը աւելի կարեւոր է քան եկեղեցապատկան բոլոր մասունքները: Եւ ատեն ատեն բարի, բայց ազատամիտ վարժապետներ անզգամօրէն անդի դէմը զրկեց իրենց ազատախոհութեան եւ մտածելու տարբերութեան համար:

Ատեն մը ետք Հայկազենց յարափոփոխ Դաւօն իր գործունէութեան դաշտը փորձեց ընդարձակել, ուզելով ուրիշ տեղեր ալ սեփական կեդրոններ հաստատել, ունենալու համար եկամուտի աղբիւրներ:

Ի հեճուկս իր ողջախոհ քննադատներուն, ան միացեր էր ու կը գործակցէր միջազգային ընկերութեան մը, որուն կ'անդամակցէր նաեւ բարբարոս ճանչցուած դէմք մը, որուն համար ըսուեր էր թէ «հոն ուր որ իր ոտքը կը կոխէ՝ խոտ չի բուսնիր»:

Դաւօն կը մտածէր որ եթէ ինք իր եղբայրակցութիւնը շարունակէր ոճրագործներուն հետ՝ ինք ապագայ վտանգներէ զերծ կրնար մնալ եւ մեծ շահեր ու փառքը կ'ապահովէր: Բայց այս անգամ ալ իր հաշիւը սխալ դուրս եկաւ, որովհետեւ օտար ոճրագործները, ընդհանուր կողոպուտի եւ սպանութեան ատեն՝ խտրի չդրին Դաւօի խումբին եւ անոր ազգակիցներուն մէջ:

Բայց իր գիւղը կործանող սոսկալի հարուածը զինք չզգաստացուց: Ան քանի մը տարի ետք նորէն գործակից դարձաւ ջարդարարներուն, որ գիւղին աւերակներուն վրայ իշխելու շնորհքը ըրին իրեն:

Դաւօն միշտ մէկ նպատակ կը հետապնդէր առանց միջոցի մէջ խտրութիւն դնելու. ան կը փորձէր իշխել բոլորին, եւ ով որ իր մենատիրութեան չենթարկուէր՝ մութին մէջ դանակ մը կը նետէր անոր կռնակին:

Իր բոլոր գործերը կը ձախողէին եւ ամէն անգամ՝ օտար արկածախնդիր ընկերներու Ալօքի մը կը միանար, նոր ձեռնարկ մը փորձելու համար:

Եւ ամէն անգամ որ Հայկազենց Դաւօն «քարվան մը զարնէր» կամ հակառակորդ մը լռեցնէր՝ գինիի դիրտը խմողի մը նման կատարեալ կը գինովնար: Իր աչքերը կը կարմրէին, իր բերանը կը փրփրէր, իր բարեկամներն ու չարեկամներն կը շփոթէր:

Հայկազենց Դաւօն օտար մեղսակիցներու գործակցութեան մոլեռանդ հաւատացող մը ըլլալուն՝ մոռցեր էր իր ցեղակիցներուն դէմ բնաջնջումի անմարդկային վճիռները: Մոռցեր էր ահաւոր զոհերու արեան գնով իր վերաշինուող գիւղն ու հայրենիքը:

Միջազգային Ալօքը իրեն ցոյց տուած էր յատակագիծ մը որուն մէջ իր երագներուն իրականացումը կը տեսնէր, — բռնի տիրապետել իր գիւղին, ուրկէ վռնտեր էին զինք իր ազգակիցները:

Այժմ ան ամէն գնով կ'ուզէր, կ'երագէր վերադառնալ հոն: Ինչ փոյթ, եթէ օտար չարագործները նորէն քանդէին զայն եւ հարազատի արիւնը հոսէր ծննդավայրին փողոցներէն: Կը բաւէր որ իր փառքին հասնէր եւ գիւղին տէրը դառնար:

— Տղա՛ք, ահա ինչ որ մեծերէս լսեր եմ Հայկազենց յարափոփոխ Դաւօի կեանքին մասին, ըսաւ մեր ընկերը եւ վերջացուց իր հետաքրքրական պատմութիւնը:

ԽԱՉԱՏՈՒՐ ՏԻԳՐԱՆ

«Պայքար», Մայիս 20, 1958

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ ՍԻՒՆԱԿԸ



Ֆրանսահայ ծանօթ եւ համակրելի գրող Պր. Լեւոն Մօզեան հետաքրքրական յօդուած մը ունէր «Պայքար»ի Ապրիլ 12ի թիւին մէջ, ուր կը նկարագրէր տիտուր պատկերը Փարիզի շրջակայքը գտնուող Հայց. Առաքելական եկեղեցիի մը, որ «միայն մէկ հաւատացեալ» ունեցեր է Կիրակի օր մը: Չէին յիշուած դպրապետ, դպրաց դաս, սարկաւազներ կամ ժամկոչ: Ուրեմն պէտք է ենթադրել թէ անոնք իսկ բացակայ էին: Եւ ահա «խորհրդանշական պատկերին» մէջ կը տեսնուի «մէկ եկեղեցի, մէկ քահանայ եւ մէկ հաւատացեալ»:

Նման յուսալքիչ պարագայի մը մէջ որեւէ քահանայ պատարագել պիտի չուզէր, քանզի հովիւ մը առանց հօտի հովուութիւն չի կրնար ընել:

Բայց մենք կը խորհինք, թէ Պր. Մօզեան իր յօդուածով Հայց. Եկեղեցւոյ ապագային վերաբերմամբ իր սրտցաւ մօտեցման եւ իր իրաւատեսութեան եւ նախատեսութեան հետ՝ խառնել է նաեւ քիչ մը շատ յոռետեսութիւն: Ան այնքան ճշուէր է այդ կամ անոր նման ուրիշ եկեղեցիի մը հօտէն լքուած ըլլալու ողբալի պատկերէն, որ հետեւցուցեր է, թէ բոլոր հայ եկեղեցիներն ալ շուտով պիտի ենթարկուին այդ բախտին: Բայց մենք գիտենք շատ եկեղեցիներ հոս, որոնք հաւատացեալներով կը լեցուին ամէն Կիրակի, եւ այդ հոծ հաւատացեալներուն հարիւրին երեսունը նոր սերունդի ներկայացուցիչներ են:

Եկեղեցաշինութեան համար մեր բարոյական եւ նիւթական գոհողութիւնները թող անօգուտ վատնում չնկատուին, որովհետեւ եկեղեցին ալ նման ուրիշ հաստատութիւններու եւ քիչ մ'ալ աւելի նպաստեր է հայուն կեդրոնացման եւ գոյատեւման: Եթէ ան փոթորիկի բռնուած է այսօր՝ մենք մէկ մարդու նման պէտք է մեր ոյժերը համադրենք, զայն պաշտպանելու եւ աւելի զօրացնելու համար:

Եթէ եկեղեցին իր հնադարեան հմայքէն եւ ազդեցութենէն բան մը կորսնցուցեր է, աշխատինք անոր շնորհելու, անոր վերադարձնելու իր կորուստը:

Երբ հիւանդ մը կ'ունենանք, եւ հակառակ որ բժիշկին զեկուցումները այնքան ալ յուսադրական չեն, գիտենք նաեւ թէ ուշ կամ կանուխ այդ հիւանդութեամբ ան պիտի մեռնի, սակայն անոր կեանքը երկարելու համար մեր նիւթական ու բարոյական գոհողութիւնները չենք դադրեցնել եւ անոր համար ծախսելու ատեն չենք մտածել թէ աւելորդ մսխումներ են: Այդպէս ըլլալու է նաեւ մեր հաստատութիւններուն համար ծախսուած դրամները.— Կը ծախսենք եկեղեցաշինութեան համար, դպրոցներու համար, միշտ լաւագոյն յոյսերով:

Պր. Մօզեան ունի մանաւանդ գործնական եւ օգտակար թելադրութիւններ, որոնք պէտք է լրջօրէն վերցնել: Հայը կրնայ եւ պէտք է բարձրագոյն կրթարաններ հաստատել Ամերիկա կամ այլուր, նոյնիսկ եկեղեցիներուն յարակից, ազգապահպանման ջանքերուն իբրեւ ամէնէն զօրաւոր ազդակը:

ԽԱԶԱՏՈՒՐ ՏԻԳՐԱՆ

«Պայքար», 1958

ՀԱՅ ԱՍՏԵՂԱՑ ԿԱՐԱԻԱՆԸ



Վերջերս էբիլենցի (Բժ. Ա. Ս. Աբէլեան) «Նօթեր ու Խոհեր» սիւնակին մէջ, ձեր սիւնակագիրը մոմի աղօտ լոյսով համաշխարհային արժէք ունեցող «գրական տիտաններ» կը փնտռէր բանակ մը հայ գրագէտներուն մէջէն:

Իր նոյն սիւնակով, ուրիշ ատեն ալ, էբիլենց զգայացունց ահագանգով մը հայ գրոց-բրոցներէն կը խնդրէր, որ անպայման հրապարակ գան եւ մատնանշեն գէթ մէկ հաստ հայ գրագէտ, որ կարելի ըլլար գրական տիտան մը համարել:

Բայց ի՞նչպէս կարելի է համոզել մէկը, երբ անոր մէջ արդէն կազմաւորուած է այն հաւատքը, թէ՛ հայ երկնակամարին վրայ կարելի չէ գտնել հայ գրագէտ մը, որ իբրեւ գրական տիտան իր տեղը ունենայ համաշխարհային հռչակ վայելող գրագէտներու հոյլին մէջ:

Հայ ազգը ունեցեր է եւ ունի իր փնտռած տիտանները, հակառակ անոր որ այս տիտանները արտադրող մեր ազգը հինգ հարիւր տարուան գերութեան պատմութիւն ունի: Մեր գրագէտները ճգներ եւ շարունակ ստեղծեր են շատ արժէքաւոր գործեր:

Նախ քան Հայ աստեղաց կարաւանին մաս կազմողները հոս յիշելը, պէտք է ըսենք, թէ՛ եթէ հայ գիրն ու գրականութիւնը կարդացուէր բազմամիլիոն անգլիախօս եւ ֆրանսախօս ժողովուրդներու կողմէ, մենք վստահ ենք, թէ մեր գրողներէն շատեր, անոնց կողմէ գրական առաջին մրցանակին պիտի արժանանային: Կամ եթէ հայը ունենար գէթ հարիւր տարուայ խաղաղ կեանք մը, օժտուած պետական կազմով, որ թոյլատու ըլլար ազատ ասպարէզ իջնելու՝ արուեստի բոլոր ճիւղերուն մէջ, այն ատեն էբիլենց պիտի ընդունէր ու ապա խոնարհէր Շնորհալիին հանճարեղ ստեղծագործութիւններուն առջեւ: Հապա Նարեկացիին, ան որ իր կոթողական «Նարեկ»ովը մշտապէս ներշնչեր է հայ սերունդներ, որոնք շնորհիւ «Նարեկ»ին, ինքզինքնին մօտիկ զգացեր են Աստուծոյ եւ անոր գրքին ընթերցումով ապրեր են իբրեւ իրաւ քրիստոնեաներ ու լաւ հայեր:

Հապա՞ Սայաթ Նովան, որուն շունչը այնքան թարմ է այսօր, որքան էր իր ապրած դարուն: Ան տիտան մըն էր իր դարուն եւ տիտան մըն է այսօր, քանի որ իր խօսքերը բոլոր դարերուն եւ հանուր մարդկութեան համար գրուած են:

«Ամեն մարթ չի՛ կանա խըմի իմ ջուրն ուրիշ ջըրեմ է,
Ամեն մարթ չի կանա կարթա իմ գիրն ուրիշ գըրեմ է»:

Ահա՛ Սայաթ Նովան իր պարզութեան ու վեհութեան մէջ:

Խաչատուր Աբովեան եթէ անգլիացի, ֆրանսացի կամ գերմանացի ծնած ըլլար, ան իբր միջազգային դէմք պիտի կարդացուէր ու փառաբանուէր բոլորէն:

Գանք անմահն Պետրոս Դուրեանին, որուն «Տրտունջ»ը միջազգային գրականութեան գոհարներէն մէկն է անտարակոյս: Այս հանճարեղ պատանին եթէ

անգլիացիի գաւակ ըլլար, անոնք իրենց գաղթավայրերուն մէկ մասը Պետրոսին պիտի տրամադրէին: Սակայն մենք գիտենք, թէ այդ մեծարժէք տաղանդին հանդէպ ինչ վերաբերմունք ցոյց տուինք:

Յիշե՞նք մեր մօտիկ անցեալին զոհերը, որոնք իրենց հանճարին փայլուն ճաճանչովը հայուն երկնակամարը լուսաւորեցին: Օրինակ՝ Դանիէլ Վարուժանը, որ իր երեսուն տարեկան հասակին մարտիրոսացեր էր արդէն, սակայն ան իր այդ տարիքին մէջ իսկ հայուն տուած էր չորս հատոր արժէքաւոր երկեր, մէկը միւսէն գերազանց իրական տաղանդի մը դրոշմով: (Վարուժանի «Հացին Երգը» վերջերս թարգմանուեցաւ Փրանսերէնի): Ըսէ՛ք, ինդրեմ, գրական տիտան մը ըլլալու համար անպայման հայը օտար լեզուներով պէտք է գրէ . . . :

Հայ հանճարեղ բանաստեղծներու եւ գրագէտներու շարքը թուելը կրնայ մեզի շատ հեռուները տանիլ: Սիամանթօ, Ռ. Սեւակ, Թլկատինցի, Ռ. Չարդարեան եւ դեռ շատ ու շատ ուրիշներ, որոնք քանի մը տարուայ կեղծ սահմանադրութեան տրամադրած ազատութեան ընթացքին հեւ ի հեւ արտադրեցին, որքան որ ժամանակը թոյլատու գտնուեցաւ իրենց . . . :

Եղիշէ Չարենց մը եթէ այս դարուն Ամերիկայի գաւակը եղած ըլլար, կամ եթէ իր քերթուածները անգլերէն գրուած ըլլային, անգլիախօս աշխարհը անոր արձանը պիտի կանգնէր իր բոլոր գրադարաններուն ճակատի դրան առջեւ:

Աւետիք Իսահակեանը իր բանաստեղծութիւններով, իր պատմուածքներով ու հեքիաթներով համարժէք է միջազգային ոեւէ համբաւաւոր գրագէտի:

Աճառեանի նման լեզուագէտ բանասէր գիտուն մը ոեւէ ազգ չէ ունեցած:

Գնահատենք ու գոհանանք հայ գրագէտներով: զգուշանանք հայ տաղանդները թերզնահատելէ:

Նախ նկատի ունենանք մեծ ազգաց գրագէտներու նիւթական պայմանները, անոնց ապրած միջավայրը եւ վայելած ազատութիւնը, անոնց լայն հորիզոնը, որուն մէջ ծնած ու մեծցած են եւ ապա միայն բաղդատենք հայ գրագէտին վիճակուած ճակատագիրը օտար գրողներուն հետ, այն ատեն միայն պահանջկոտ ըլլանք:

Մենք վստահ ենք, թէ՛ եթէ հայ հանճարը ազատութեան երաշխաւորութիւնը վայելէր անցեալին մէջ եւ կամ անոր ապրած միջավայրն ու պայմանները թոյլատու ըլլային անոր ազատ ստեղծագործութեան, ան այսօր՝ միջազգային հորիզոնին վրայ իր տիտան հասակով շուք պիտի ձգէր իր օտար գրչեղբայրներուն վրայ:

Թէեւ յարգելի էբիլեցի նախանձախնդրութեան ոգին գովելի է, սակայն չափով մը կը վնասէ հայագգի տաղանդաւոր գրագէտներու վարկին: Իր մօտեցումը հարցին՝ բարենիշ մը չի ապահովեր իր իմաստութեան: Մենք պէտք չունինք պահանջկոտութեան. հայը պէտք ունի միայն լաւ բրորականտիսդներու:

Քիչ մը լուրջ մտածենք եւ ամէն գնով մեր տաղանդներու վեհութեանց վնասաբեր չըլլանք: Չզուշանանք յոռետես մտածումներէ կամ ստորադասի արտայայտութիւններէ, քանի որ մեր դարաւոր թշնամին մեր այդ արտայայտութեանց մէջ նիւթ կրնայ գտնել մեր բանակ մը կազմող իրապէս որակաւոր եւ արժէքաւոր գրողները վարկաբեկելու համար:

Վերոյիշեալ քանի մը անունները մէկ փոքր մասը միայն կը կազմեն հայ աստեղաց կարաւանին: Եթէ եղածները գնահատենք, օր մը լաւագոյնները կրնանք ունենալ:

«Նոր Աշխարհ», Հոկտեմբեր 10, 1959

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ



Կը յուսանք թէ մօտալուտ է այն օրը, երբ Միացեալ Նահանգաց եւ Խորհրդային Միութեան պետական վարիչներուն նոր մերձեցումով եւ բարելաւուող փոխյարաբերութեան շնորհիւ՝ պիտի հարթուին ներկայիս անոնց մէջ գոյութիւն ունեցող վէճերը եւ հետզհետէ պիտի քանդուին այն պատուարները, որոնք ցարդ որպէս աղէտալի խոչընդոտներ՝ արգելք հանդիսացեր են ցանկալի խաղաղութեան:

Ժողովուրդներ, ըլլան արեւելքի մէջ թէ արեւմուտքի՝ միշտ խաղաղութիւն երազեր են: Իցիւ թէ արեւելքի եւ արեւմուտքի այս նոր մօտեցումով անոնք յաջողին տեւական խաղաղութիւն մը հաստատել:

Երանի թէ իմաստուն համաձայնութեամբ մը ներկայիս գոյութիւն ունեցող կարգ մը կործանարար ու ահուելի զէնքերը թաղել կարենան ովկէանոսներուն ամենախոր յատակը, որպէսզի ժողովուրդները բնաջնջուելու սարսափելի հեռանկարէն ազատ ապրին:

Եւ որքան բաղձալի է, որ դիւանագէտներ իրենց առաձգական քաղաքականութիւնը պահ մը մոռացութեան տան, եւ փոխան «դիւանագիտական խաղերուն» մէկգմէկու շահերը նկատի ունենան ի սէր միջազգային բարեկամութեան եւ ի շահ մարդկային յառաջդիմութեան:

Երանի թէ ծայրայեղ ազգայնամոլութեան ոգիին տեղ որդեգրուի համերբայրական եւ համերաշխութեան նոր ոգին, ներկայ հրատապ հարցերը լուծելու եւ ցանկալի խաղաղութիւն մը շնորհելու մարդկութեան:

Անշուշտ Միացեալ Ազգաց հաստատութիւնը իր գոյութիւնով մասամբ մեղմացուցեր է մօտալուտ պատերազմի մը վախը: Սակայն կը ստիպուինք մտածելու, որ եթէ ազգերու մէջէն անվստահութեան ոգին չխափանուի, Միացեալ Ազգաց հաստատութիւնը գալիք պատերազմի մը արգելք չի կրնար հանդիսանալ՝ մինչեւ որ աշխարհի մեծ պետութիւնները իրենց փոխադարձ կասկածներուն եւ թշնամութեան պատճառները չվերացնեն եւ խաղաղօրէն ապրիլ որոշեն իրենց եւ ամբողջ մարդկութեան բարիքին համար:

Մենք վստահ ենք թէ դարուս մարդկութիւնը խաղաղութիւն կը ցանկայ: Եւ եթէ այս պահուն քուէարկելու իրաւունքը տրուի անոնց, անոնք պատերազմը օրէնքէ դուրս պիտի հռչակեն, խուսափելու համար բնաջնջման ահաւոր ու դաժան ճակատագիրէ մը: Եւ արդէն անոնք իրենց այս ցանկութիւնը յաճախ լսելի կ'ընեն աշխարհի բոլոր մամուլներուն մէջ:

Միթէ ատենը չէ՞ որ դիւանագէտներ համագործակցին, եւ միասնաբար աշխատին ու քրտնին աշխարհի խաղաղութեան համար: Որպէսզի բոլոր նորագոյն գիւտերն ու ստեղծագործութիւնները օրհնութիւն մը եւ իրաւ յաղթանակ մը արձանագրեն իրենց համար: Եւ այս իրաւ յաղթանակով մարդութեան շնորհէն խաղաղութիւն, առատութիւն եւ երջանկութիւն:

Որքան ցանկալի է, որ ներկայ դիւանագէտներ հոգեփոխութիւն մը ունենան, որպէսզի միշտ շահամոլութեան ստուերներով եւ ուրուականներով չ'առաջնորդուին: Եթէ ոչ մարդկութիւնը կրնայ զրկուիլ ներկայ գիտութեան բարիքներէն ու խոստացուած խաղաղութիւնը, առատութիւնն ու երջանկութիւնը լոկ երազ կրնան մնալ:

Երբ մօտիկ ապագային ազգերու առաջնորդներու քրտնաջան աշխատութիւնով խաղաղութիւնը հաստատուի, այն ատեն խաղաղատենչ ժողովուրդներ խելայեղօրէն պիտի ծափահարեն ու ողջունեն անոնց եղբայրասիրական ու խաղաղասիրական ոգին:

Մինչ այդ՝ ոչ միայն մտածենք ու բաղձանք խաղաղութեան՝ այլ խօսինք ու աշխատինք անոր գաղափարին ամրանալուն եւ իրականանալուն մասին:

«Պայքար», Նոյեմբեր 13, 1959

ՓԱ՛ՌՔ ՔԵՉ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻ



Փա՛ռք ու պատի՛ւ քեզ, հայ ժողովուրդ. փա՛ռք քու մեծատաղանդ ու վեհաթուրիչ մտքիդ: Փառք քու խաղաղասէր ու մարդասէր ոգիիդ եւ քու երկնատուր ձիրքերուդ:

Ովսանան՛ քու երկարատեւ ու բեղուն կեանքիդ, լուսաւոր ու ճարտար մտքիդ եւ շինարար ձեռքերուդ:

Դուն որ մեծ խաչեալին նման բիւրաւոր անգամներ խաչուեցար, բայց եւ ոչ մէկ ոտիս քեզ կրցաւ մահացնել, որովհետեւ դուն բոլոր Աստուածներու նման անմահ ես . . . : Փա՛ռք քու անմահութեանդ:

Դարերու ընթացքին անվեհերօրէն կուրծք տուիր մահացու զէնքերու, ընդվզեցար չար ոտխներու դաւադրութեանց դէմ, բարի եւ առաքինի օրինակներով մարտնչեցար բոլոր դարերու չարագործներուն դէմ, խափանելու համար չարութիւնն ու բռնութիւնը: Դարձար առաջին քրիստոնեայ ազգը եւ քու վեհաշունչ չարականներովդ նուաճեցիր մարդկանց հոգիները:

Փա՛ռք, հոգիներ վերացնող ու մխիթարող օրհնածիր այդ սրբազնագոյն ու քաղցրալուր երաժշտութեանդ:

Բարութեանդ ու կրօնքիդ թշնամի վոհմակներ միշտ քեզ հալածեցին, հաւատքիդ խորանը քանդուեցաւ քու ոգիիդ տիրանալու համար: Բայց դուն անհաւասար ոյժերու դէմ պատերազմեցար, ու թէեւ Ֆիզիքապէս պարտուեցար բայց հաւատքդ յաղթեց, ու մինչեւ այսօր քու անսասան կամքովդ ու ոգիովդ յաղթական՝ միշտ կը յառաջանաս դէպի նոր ու պայծառ արշալոյսներ:

Դուն որպէս հնամեայ ժողովուրդ, որ կը սիրէր շինարար ու ստեղծագործող կեանքը, ապրեցար խոհալովը խաղաղասիրական ու մարդասիրական ոգիին: Փա՛ռք ու հազար ովսանայ այդ վեհական ու եզական մեծ ոգիիդ:

Խաչը լանջիդ «խաղաղութիւն եւ մարդոց մէջ հաճութիւն» քարոզեցիր. խաչը ուսիդ դուն զանգուածօրէն Գողգոթայէն վեր բարձրացար, հոն անգամ մը եւս խաչուելու: Բայց հոն Գողգոթային կատարը «ահաւոր բան մը» տեղի ունեցաւ եւ այդ վերջին խաչելութենէն վերապրողներ ուխտեցին եւ վճռեցին ա՛լ չխաչուիլ:

Հոգեփոխութիւն մը տիրեց անոնց էութեանը, անոնք վճռեցին կեանքի դառնութեան վերջ տալ. նոր շունչ մը, նոր տեսիլք մը երեւան եկած էր նոր խոստումներով, մարդասիրական ու համայնասիրական նոր ձեւերով ու արտայայտութիւններով: Եւ դուն, ո՛վ տառապակոծ ժողովուրդ, քու գոյութեանդ ապահովութեան համար կեանքիդ լուսավառ աստղը քու վերածնունդդ հնարաւոր դարձնող մեծ աստղին շողերուն կապեցիր:

Եւ ահա նոր շունչիդ եւ նոր կեանքիդ քառասուներորդ յոբելեանովդ արդէն հաստատեցիր աշխարհին թէ՛ ազատութեան եւ ապահովութեան մէջէն ստեղծագործող ու շինարար ժողովուրդներէն մէկն ես դուն:

Փա՛նք քու գոյութեանդ, արդարամիտ, խղճամիտ, բայց չարութեանց ու անարդարութեանց դէմ յաւէտ ընդվզող, ո՛վ «փոքր ածու»:

Չորս տասնեակ տարիներ, թէեւ աննշան թիւ, սակայն դուն այդ աննշան թիւերուն վրայ բազմապատկեր ես նշանաւոր վերելք՝ գիտական ասպարէզին մէջ, արդիւնաբերական շինարարութեանց մէջ, նաեւ լուսաւորութեան մարզին մէջ, ուր յառաջացեր ես անբարդատելիօրէն:

Փա՛նք քու վերելքիդ, եւ աշխատաւոր ձեռքերուն, որոնք անձնագոհ ջանքերով իրականացուցին ու հարթեցին վերելքի ճանապարհը:

Հայ մշակոյթը իր ոսկեդարէն յետոյ շատ մութ ու լոյս օրերէ անցաւ: Թէպէտ ծաղկեցաւ լուռ եւ մունջ, բայց այսօր, ան կրկին իր ոսկեդարը կ'ապրի: Հայ իմացականութիւնը անգամ մը եւս լծուած է գմայլելի, հերոսական նուաճումներու.— կը ստեղծե՛ն, կը գրե՛ն, կը թարգմանեն անընդհատ ու անդադար, միշտ լուսաւորելով իրենց շրջապատը, տարածելով նաեւ այդ լուսաւորութեան շողերը սփիւռք, ուր կ'ապրի հայու հոգիին մէկ մասը միշտ անբաժան իր հայրենի հողէն ու շողերէն:

Ո՛վ հայ ժողովուրդ, քու մեծութեանդ ու անսասանութեանդ առջեւ խոնահելով կը մրմնջեմ միշտ՝ փա՛նք, պատի՛ւ ու բիւր ովսաննա՛ յաւերժական հոգիիդ:

«Պայքար», Դեկտեմբեր 9, 1960

ԶԻՆՈՒՈՐԻ ՄԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԷՆ



Հաւատացեալներ երբ եկեղեցիէն դուրս ելան, անոնց մէջէն իր նրբաճաշակ սեւազգեստին մէջ թաղուած, տիրադէմ, այլ շնորհալի կին մը, յանկարծ ինծի մօտենալով անակնկալօրէն թուղթէ տրցակ մը երկարեց ինծի եւ «Ահա՛ իմ սրտահատորէս ինծի մնացած միակ յիշատակը, ա՛ռ, կարդա՛ եւ մտածէ՛» սրտմաշուփ բառերը ըսելով, անհետացաւ ամբոխին մէջ:

Շուարած, անկիւն մը քաշուելով դիտեցի թուղթէ տրցակին պատառիկները, որոնք բիւր անգամ թղթատուած էին:

Անոր թերթիկներուն վրայ տեղ տեղ աղի արցունքի հետքեր կային:

Անոր հնամաշ ու փլփլած էջերուն մէջ անթեղուած էին մտածող զինուորի մը մտքի կայծերը, որոնց լոյսը դեռ աշխարհին չէր յանձնուած:

Թղթածրարը ինծի յանձնող կիւնը՝ ինծի անծանօթ որդեկորոյս մայր մըն էր, որուն վիշտը բոլոր սգաւոր մայրերու վիշտին նման խոր ու ահաւոր է ցկեանս: Արդէն թերթեւ մօտեցումով մը կարելի է հասկնալ որդեկորոյս մայրերու վիշտին ու սուգին ահաւորութիւնը, հոգ չէ թէ անոնք ինչ ցեղի, գոյնի ու կրօնքի ալ պատկանին: Անոնք իրենց հոգեմաշ զգացումներով չեն տարբերիլ իրարմէ: Անոնց աչքերուն մէջ արցունքի լճակներ կան անվերջ: Ու ես ըմբռնելով վշտահար մայրերու սեւ ու տխուր զգացումները, վարանոտ ու դողդոջուն մատներով կը թղթատեմ զինուորին յուշատետրը, որ հետեւեալ տողերով սկսած էր.

— Այսօր ես քսան տարեկան եղայ. մայրս զիս գրկեց, այտերս համբուրեց եւ տխրեցուցիչ բաներ մը փսփսաց ահանջիս:

— Տղա՛ս, այս վայրկեանիս աշխարհը նորէն հրճիգներու ձեռքերուն մէջ վառօդէ գնդակ դարձած է. անոնց մէկ անգգոյշ վարմունքին հետեւանքը կրնայ շատ աղէտաբեր ըլլալ մարդկութեան համար: Դուն որ դեռ կեանքի մուկ ծալքերուն անծանօթ դեռատի ծաղիկ մ'ես, քու ներաշխարհը չփոթորկելու համար կը զգուշանամ գուշակել թէ ի՞նչ ահաւոր եւ ահռելի բաներ կրնան պատահիլ, եթէ . . .

Առանց մօրս հետ համաձայն գտնուելու, փորձեցի զինք հանդարտեցնել, ըսելով թէ ամէն գուշակութիւն ճիշդ չ'ըլլար . . . եւ ինչ որ պիտի պատահի, թող պատահի, ո՛չ ինք եւ ո՛չ ալ ես աղէտին առաջքը կրնանք առնել:

Ան պահ մը անել կացութեան մատնուելէ ետք ըսաւ.

— Անշուշտ աղէտին առաջքը չենք կրնար առնել, բայց չէ՞ որ մայր եմ. չէ՞ որ իմ արիւնս է որ երակներուդ մէջ կը շրջի: Չէ՞ որ իմ առողջութիւնս, նոյնիսկ կեանքս կապուած է քու գոյութեանդ հետ: Ըսենք թէ աշխարհը բռնկի եւ քեզի վնաս մը հասնի, այն ատեն ե՛ս է որ պիտի տառապիմ, ե՛ս է որ տիւ ու գիշեր արցունք պիտի թափեմ ու արցունքոտ աչքերով պատկերիդ պիտի նայիմ առանց կարօտս յազեցնելու:

Եւ որպէսզի մայրս իր չար խորհուրդներէն ազատուի, խնդրեցի որ մեր դրացի Տիկին Արաքսիին հանդիպի: Այս ըսելով տունէն դուրս նետուեցայ:

Կիրակի էր:

Փողոցի անկիւնը հազիւ դարձած, տեսայ որ մարդիկ դանդաղ քայլերով ու խստադէմ — ոմանք եկեղեցի կ'երթային եւ ոմանք ալ եկեղեցիէն տուն:

Իսկոյն ես իւրովի մտածեցի. արդեօք ինչո՞ւ այս ամբողջ իր սովորական գուարթուկները կորանցուցած կ'երեւի. եւ ուրիշ փողոցի անկիւնը դառնալով շտապեցի դեղարանը, ուր խումբ մը մարդիկ հաւաքուած կը վիճէին:

Երբ հոն հասայ եւ թերթին վերտառութիւնը կարդացի, ամբողջ մարմնովս ցնցուեցայ: Ու փոխանակ արիւնս երակներուս մէջ սառելու սկսաւ հոն եռալ ու կեդրոնանալ գանկիս մէջ: Միթէ՞ կարելի է հաւատալ թէ՛ «Ճափոն Փըրլ Հարպըրը ռմբակոծած է»: Իսկոյն մտածեցի թէ անոնք դաւաճանած են մեզի եւ ինքնաբերաբար մրմնջացի. «Վայ անիծեալներ, դուք ձեր ըրածին պատիժը պիտի կրէք»:

Այդ պահուն լսեցի որ վիճողներէն մին իր ձայնին ամբողջ ոյժովը կը գոռար.

— Բարեկամներ, սա մեր կառավարութիւնը անխոհեմ ու զարմանալի բաներ կ'ընէ. ինչո՞ւ երկաթի աւելորդ փշրանքները անոնց տրամադրեց, որ անոնք ալ անոնցմով ռումբեր պատրաստեն ու մեր գլխուն թափեն:

— Կ'երեւի դուն առեւտրական հոգեբանութենէն բան չես հասկնար, աւելցուց ուրիշ մը: Մենք այդ անպէտ երկաթէ փշրանքներուն փոխարէն անոնցմէ ստացած ենք մետաքս, որ պիտանի կերպաս է անկարգելներ շինելու:

— Շատ հաւանական է որ մեր կարգ մը պաշտօնեաներն ու զինուորները զինով ու քնած էին, վրայ բերաւ ուրիշ մը:

Ես ա'լ չկրցայ համբերել եւ մէջ մտայ.

— Բարեկամներ, սխալը ուր ալ ըլլայ մեղադրանքի խօսքերու համար շատ ուշ է . . . ձեզի պահեցէք ձեր քննադատութիւնները, ու երբ տուն երթաք ձեր որդիներէն պահանջեցէք որ անմիջապէս զինուորագրուին:

Ու ինքս շտապեցի տուն:

Կ'երեւի մայրս դրացի Տիկին Արաքսիէն լսած էր պատերազմի հրդեհին ծաւալման լուրը, քանի որ երբ զիս տեսաւ, իր աչքերէն արցունքի կայլակներու տեղատարափ մը սկսաւ տեղալ:

— Մա'յր, պարապ տեղը քո արցունքներդ մի վատներ, ես արդէն որոշած եմ վաղն իսկ մեր կառավարութեան կոչին պատասխաներով զինուորագրուել:

Կարծես լախտ մը իջաւ մօրս գլխուն: Խեղճը անակնկալ հարուածէն նուաղեցաւ ու ինկաւ գետին: Ես, անփորձ մի պատանի, պահ մը շուարեցայ, վայրկենապէս չկրցայ որոշել ընելիքս: Կարծես թէ կուփամարդիկ մ'ալ իմ գլխուս գօրաւոր հարուած մը իջեցուցած էր, եւ ես մշուշին մէջ կը տատանուէի: Բարեբախտաբար, այդ կացութիւնս կարճ տեւեց: Մօտեցայ մօրս, վերցուցի զինք ու բազուկներուս մէջ առնելով համբուրեցի իր դալկահար ճակատը: Ուշաբերեցաւ, բացաւ աչքերը: Ես իսկոյն խնդրեցի որ իր անխորհուրդ զաւկին ներէ:

* * *

Անցան քանի մը ամիսներ: Զինուորական համազգեստիս մէջ ես դարձեր էի մերթ հպարտ եւ մերթ մտածող զինուոր մը:

Օր մը, ռազմափորձի ատեն, իմ մէկ հարազատ ընկերս արկածամահ եղաւ: Անկէ ետք, ես ռազմափորձի օրերը կ'ատէի: Կ'ատէի նաեւ մահացու բոլոր գործիքները: Ատեն ատեն կը մտածէի թէ արդեօք չկա՞յ աներեւոյթ ոյժ մը, որ

իր միջամտութեամբ կրնար մարդկութիւնը խնայել այս ահուելի աղէտէն, որ պարզապէս իր երեւոյթով մարդասպանութենէ չէր տարբերեր:

Պատերա՛զմ . . .

— Ահա բառ մը — ատեն ատեն կը մտածէի — եւ այդ բառը իր խորքին մէջ ունի մարդն իր նմանը տանջելու, ողջակիզելու եւ սպաններու թոյլտուութիւնը: Նաեւ մէկ երկրի մը բանակները ուրիշ երկիրներ արշաւելու, քանդելու իրենց իշխանութիւնը բռնադատելու իրաւունքը: Եւ նոյնիսկ թոյլատու է աղքատին հասցը խլելու ու զայն սովահար ընելու անմիտ ու անմարդկային օրինազանցութիւններու:

Պահեր կային որ երեւակայութիւնովս տուն կը վերադառնայի, խաղաղ կեանքիս ու դպրոցական օրերուս յուշերով կ'ուզէի փարատել պատերազմի վախը իմ մէջէս, բայց կրկին իմ ներքին մարդս ինծի կ'ուզէր յիշեցնել թէ՛

— Պատերազմի ընթացքին շինարարութիւններ կը դադրին եւ մարդիկ յաղթելու ու գերելու մարմաջէն տարուած կը մոռնան ամէն բարի մտածում: Ճշմարտութիւնը կ'ուրացուի, արդարութիւնը կը խափանուի եւ թշնամի բանակներ մէկ բանի վրայ կը կեդրոնացնեն իրենց միտքը, ոյժին, եւ այդ բերտ ոյժով փճացնել միմեանց, մոռնալով իրենց Աստուծոյն կողմէ դրուած պատուէրը՝ «Մի՛ սպաններ» . . . :

* * *

Զրոյց մը կը շրջի այս օրերս, չեմ գիտեր որքան իրական է: Կ'ըսուի թէ հրահանգ եկած է որ մեզ ռազմաճակատ փոխադրեն: Կ'երեւի ատոր համար էր որ քանի մը օր առաջ մեր գնդապետը գումարտակի տղոց խրախուսիչ պատգամներ տուաւ: Ու յետոյ մեր յիսնապետը, որ ողնայար ունի բայց խելքով քիչ մը տկար է, ռազմաշունչ ազդարարութիւն մը ըրաւ: Ահա՛ իր բառերով.

— Տղաք, երբ ռազմաճակատ փոխադրուիք, ձեր բարի զգացումները ձեր հին կօշիկներուն հետ, ձեր ետեւ թողուցէք: Մէկ բան մի՛ մոռնաք. եթէ դուք թշնամի գինուորները չսպաննէք, անոնք ձեզ պիտի սպաննեն: Ողջ մնալու, ապրելու եւ ձեր սիրելիները կրկին անգամ կենդանի աչքերով տեսնելու համար, պէտք է քաջ ըլլաք եւ անխիղճ ու անխնայ՝ թշնամիին հանդէպ: Պէտք է գիտնաք թէ՛ Աստուած իսկ քաջերուն հետ է եւ զանոնք միշտ կը պաշտպանէ: Ա՛յսքան:

Անուրանալի է թէ մեր յիսնապետին խօսքերուն մէջ ճշմարտութիւն կար. բայց մէկ կէտ մը կայ որ վիճելի է: Ան ըսաւ թէ՛ «Աստուած քաջերուն հետ է», չէ՞ որ գողերու եւ չարերու մէջ ալ քաջեր կը գտնուին: Հարց է թէ միթէ անո՞նք ալ նոյն Աստուծոյ պաշտպանութիւնը կը վայելեն: Այս եւ նման մտմտութիւններով կրկին սկսայ մտածումի անհունութեան մէջ տարուբերուիլ, պատերազմ արդարացնելու պատճառներ որոնելով: Վերջապէս եզրակացուցի թէ՛ եթէ թշնամին մեր նաւատորմիդին վրայ չյարձակէր, ես պատճառ պիտի չունենայի գինուորական համազգեստ եւ զէնք կրելու:

* * *

Քանի մը շաբաթներէ ի վեր է որ արդէն խաղաղական ովկիանոսի բիւրաւոր կղզիներէն մէկուն վրայ կը գտնուինք: Իմ գինակից ընկերներս անհամբեր կը սպասեն օր առաջ կրակին մէջ նետուիլ: Ես, պատերազմները անբանաւոր գտած եմ ու կ'արօթեմ որ հրաշքով մը վերջանայ բոլոր թշուառութեանց ծնունդ տուող այս անխմաստ պատերազմը, առանց մէկ կաթիլ աւելի արիւն թափուելու:

Քանի մը օր է, որ հեռաւոր կղզիներու մէջէն թնդանօթներու անընդհատ որոտումները մինչեւ մեր ականջներուն կը հասնին: Եւ արդէն բաւական ատենէ ի վեր է որ քունս խանգարուած է: Իմ հոգեկան դրութեանս անծանօթ են իմ ընկերներս եւ տակաւ զիս կը ծաղրեն: Այսօր խնդրեցի յիսնապետէն որ մատուանապետին խօսի իմ մասին:

Կ'երեւի թէ յիսնապետը առանց ժամանակ վատնելու պէտք եղածը մատուանապետին ըսած էր: Մատուանապետը եկաւ եւ մենք պահ մը վրանին տակ երբ առանձնացանք, ան իր ձեռքը ուսիս վրայ հանգչեցուց եւ զիս խրախուսելու համար՝

— Զինուորին համար ամօթ է վարանոտ ու վախկոտ ըլլալ, ըսաւ. զինուոր ըսածը սիրտ ունենալէ աւելի լեարդ ունենալու է եւ ժամանակները կշռելու ու դատելու միտք: Տե՛ս Աստուածաշունչը, որուն վրայ երդում կ'ընենք ու երդում կ'առնենք, անոր էջերը պատերազմի յիշատակութիւններով լեցուն են: Օրինակ՝ Գիրք Մնացորդացի մէջ մենք կը կարդանք (Բ. Գիրք Մնացորդաց ԻԶ. 6). «Ու ելաւ Փղշտացուց հետ պատերազմ ըրաւ, եւ Գէթի պարիսպը, Յաբնէի պարիսպը ու Ազովտոսի պարիսպը փլցուց»: Ուրեմն ինչպէս որ անոնք իրենց ժամանակներուն իրենց թշնամիներուն պարիպները քանդելով յաղթեցին, այժմ մենք ալ մեր թշնամիներուն հանդէպ անողորմ ըլլալու ենք: Մենք պէտք է քանդենք անոնց նաւատորմիղի պարիսպը, պէտք է նուաճենք անոնց բանակը, որպէսզի անոնք անգամ մըն ալ չյանդգնին ու չերագեն մեր երկրին վրայ յարձակելու, եւ որպէսզի մենք գերին չըլլանք մեզմէ ստորադաս ժողովուրդի մը:

Իր խօսքերէն պահ մը քաջալերուեցայ: Բայց երբ ան մեկնեցաւ, ես կրկին սկսայ մտածել թէ՛

Բնականոն կեանքի մէջ կեանք մը փճացնելը ոճրագործութիւն կը համարուի, իսկ պատերազմի մէջ կեանքեր խլել, քաղաքներ կործանել հերոսութիւն կը նկատուի եւ կուրծքեր կը զարդարուին: Ի՛նչ հակասութիւն:

Երկու տասնեակ կեանքի օրերուս՝ տանը մէջ, դպրոցին մէջ, նաեւ եկեղեցույ խորանէն անդադար լսեցի «Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն», իսկ այժմ ինծի կը քարոզուի ու կը պարտադրուի որ այդ բոլորին հակառակը ընեմ:

* * *

Քանի մը օր առաջ կռիւի մասնակցեցայ եւ կռուի այդ թոհուբոհին մէջ նոնակ մը պայթեցաւ: Տարաբախտաբար նոնակէն շերտ մը խենթ արտոյտի պէս երեսիս ցատկեց: Փշրեց վարի կզակս, խլեց շրթներս եւ ապա անօգնական գիւնովի մը պէս գետին փռուեցայ, մատնելով զիս արիւնաթաթախ եւ անխօս վիճակի մը:

Զինուորին յուշերը հոս ընդհատուած էին, բայց առանձին ծրարի մը վրայ գրուած կար «Մօրս, եթէ հայրենիքիս ու մարդկութեան համար իմ կեանքս գոհաբերեմ»:

Դողահար մատներով պահարանը բացի, մինչ այդ սիրտս այնքան գօրաւոր կը բաբախէր որ կարծես կուրծքս փշրելով դուրս կ'ուզէր փախչել: Արդէն թուղթի փոքր կտոր մը պահարանէն դուրս լոյս աշխարհին եկած էր եւ որուն վրայ կը կարդացուէր.

«Սիրելի մայր,

«Եթէ զինակից ընկերներէս որեւէ մէկը ողջ առողջ տուն վերադառնայ, իմ յուշերս ու այս նամակս քեզի պիտի յանձնէ:

«Հաւատա՛ մայր, որ ես իմ հայրենիքս այնքան սիրեցի որ համոզուեցայ թէ այդ հայրենիքին համար կեանք մը գոհելը շատ շա՛տ քիչ է:

«Սակայն ատեն մը ետք համոզուեցայ թէ միայն մենք չենք որ սիրով ու առանց սակարկութեան մեր կեանքը կը գոհենք մեր հայրենիքին համար: Այլ բոլոր անոնք որոնք հայրենիք մը ունին ողջ երկիրքին տակ, եւ անոնք որոնք հայրենիքին մէջ ունին տուն մը, մայր, հայր, քոյր, եղբայր եւ ազգականներ, որոնց ապագայ ապահովութեան համար կեանք մը գոհելը պարտականութեանց է՛ն ազնուագոյնը կը նկատուի մինչեւ իսկ մեր թշնամի գինուորներուն կողմէ:

«Բայց, միթէ լաւագոյն կերպը ա՞յս է: պէ՞տք է որ մարդիկ պատերազմին նոյնիսկ աննշան բաներու համար: Միթէ շա՞տ է խնդրել որ մարդիկ այնպէս դաստիարակուին որ միշտ խաղաղութեան մասին մտածեն: Փոխանակ մարդ մարդը ատելու, բոլոր մարդիկ պատերազմը ատեն: Արդեօք կարելի չէ՞ որ քաղաքական հարցերը իմաստութեամբ եւ եղբայրօրէն կարգադրուին, որպէսզի բիւրաւոր ծաղիկ կեանքեր խնայուին, եւ ա՛լ աշխարհի վրայ պատերազմի ճակատը գոհուող գինուորներ եւ սգաւոր մայրեր չըլլան:

«Ուստի, ո՛վ մայր, քու կեանքի բոլոր օրերուդ ճիգ ու ջանք մի խնայեր այս աշխարհին յաւերժական խաղաղութիւն մը նուիրելու: Հաւատա՛ մայր, երբ պարտականութիւնդ լիովին կատարած՝ աչքերդ յաւիտենապէս փակես, ես առաջինը պիտի ըլլամ քեզ դիմաւորող՝ որդիդ . . . »:

«Պայքար», Նոյեմբեր 11, 1961

ՄԵԾԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ



Օգոստոսի տաք Կիրակի մըն էր. ջերմաչափի կարմիր սնդիկը հասեր էր իր գագաթնակէտին. օդի տամկութիւնը դարձեր էր շատ նեղիչ: Գուցէ այդ պատճառով էր որ քաղաքը գրեթէ դատարկուած էր իր բնակչութենէն: Այդ օր, ոմանք քաշուած էին լեռները, ոմանք անտառներու ծառերուն շուքը նախընտրած էին գովանալու համար. իսկ շատեր ալ գովաստուն ծովեզերքը:

Այս վերջիններուն մէջ կը գտնուէին ութ տարեկան աշխոյժ եւ անհանդարտ Ջաւէնը, իր մօրը՝ Տիկին Արեգնազին հետ եւ Տիկին Նուարդ եւ իր եօթը տարեկան աղջիկը:

Տիկին Նուարդ իր աղջկան՝ Չուարթին լողազգեստը յանձնեց, «զգուշութիւնը բէ որ վտանգ մը չպատահի» ըսելով:

Չուարթ, իր լողազգեստը հագած՝ Ջաւէնին միացաւ եւ երկուքը միասին վազելով ծովը մտան:

Տիկին Նուարդ, Տիկին Արեգնազին քով իր կիսամերկ մարմինը աւազին վրայ քիչ մը անհոգօրէն տարածեց. իր այդ անհոգութեան համար, Տիկին Արեգնազ թեթեւ դիտողութիւն մը ըրաւ. «Բա՛, աղջիկ, ամօ՛թ է, ինքզինքդ քիչ մը հաւաքէ»:

Տիկին Նուարդ՝ այդ դիտողութիւնը չսիրեց, տեղէն ելլելով կարճ շրջան մը ըրաւ եւ կրկին եկաւ իր տեղը եւ նոյն դիրքով երկնցաւ:

Ջաւէն եւ Չուարթ, ատեն մը ջուրին մէջ մնալէ ետք, քաշուեցան անկիւն մը եւ աւազահատիկներով սկսան մեծկակ բլուրներ շինել: Երկար ժամանակ անոնք շինեցին ու քանդեցին, ապա՝ բլրաշինութեան ու քանդումի խաղէն ձանձրացած, անոնք բուռներով լեցուն աւազ նետեցին մէկգմէկու վրայ: Այս նոր խաղը զիրենք այնքան հետաքրքրեց որ անոր վտանգաւոր ըլլալը բոլորովին մոռցան: Յանկարծ, Չուարթ իր ձեռքերը աչքերուն տարաւ եւ սուր ճիչ մը արձակեց, աղաղակելով՝ «Մամա աչքերս, մամա աչքերս»:

Ջաւէն իր սխալը զգաց ու նետի պէս աներեւութացաւ այդ վայրէն:

Բազմութիւն մը հաւաքուեցաւ Չուարթին շուրջ: Տիկին Նուարդ խելայեղ վազրի մը պէս վազեց իր աղջկան քով: Ճեղքեց բազմութիւնը, գրկեց իր հոգեհատորը, ամէն ճիգ թափեց հանդարտեցնելու զայն, բայց ամէն հնարամտութիւն, ամէն ճիգ ապարդիւն անցան, քանի որ Չուարթ դեռ մէկ ձայնով կը ճչար ու կ'աղերսէր՝ «Ո՛ւհ, մամա աչքերս, աչքերս»:

Այս իրարանցումին մէջ, յանկարծ ծերուկ մը, ամբոխը մէկդի հրելով, մօտեցաւ աղջկան եւ դառնալով Տիկին Նուարդին՝ «Բանի՛ դեռ ուշ չէ, քանի դեռ յոյս կայ, այս փոքրիկը պէտք է դարմանատուն հասցնել»:

— Բայց դուք ո՞վ էք, պարոն:

— Իմ ով ըլլալս ձեզ թող չհետաքրքրէ, ձեր աղջկան աչքերն են կարեւորը, պատասխանեց ծերուկը, ապա աւելցուց, ես բժիշկ եմ:

Կառքը եկաւ: Անոնք երեքը միասին կառք մտան: Կառքին անիւնները սկսան թաւալիլ եւ գրեթէ ակնթարթի մը մէջ հասեր էին դարմանատուն:

Զաւէն, որ անյայտացեր էր, իր թաքստոցէն դուրս գալով իր մօրը միացաւ: — Տղաս ի՞նչ ըրիր Ձուարթին. ան ինչո՞ւ անդադար կուլար ու կ'աղաղակէր՝ «Աչքե՛րս, աչքե՛րս»:

— Մամա, աւագին հետ կը խաղայինք, ան ինծի աւագ նետեց, ես ալ ասիերս լեցուցի եւ իրեն նետեցի:

— Վա՛յ աչքդ չելլէ, հիչ մարդ մարդու աչքերուն աւագ կը նետէ՞ . . . :

— Բայց մամա, ես իմ աչքերս փակեր էի, ու չէի գիտեր որ անոր աչքերը բաց էին, եղաւ Զաւէնին մանկական պատասխանը:

Տիկին Արեգնազ օգնեց Զաւէնին որ զգեստները հագնի եւ անոնք տուն երթալու համար հանրակառք մտան:

Տիկին Նուարդ՝ իր աղջիկը դարմանատան բժիշկներուն գութին եւ հոգածութեան յանձնած՝ տուն եկեր էր արդէն:

Մասնագէտ բժիշկներ ամէն կարելի միջոց փորձեր էին Ձուարթին աչքերուն լոյսը փրկելու համար: Բայց Ձուարթ, այդ ահաւոր ցաւի ազդեցութեան տակ, անընդհատ կ'աւաղէր եւ կուլար: Եւ բժիշկներուն դէմ ակամայօրէն ըմբոստացած՝ զայրագին կը խնդրէր որ աչքերուն ցաւը քիչ մը մեղմացնեն:

Բժիշկներու երկարատեւ խնամքին շնորհիւ Ձուարթին աչքերուն ցաւը թէեւ գրեթէ անցած էր, սակայն դարմանատան բժշկական կազմը այն եզրակացութեան հասած էր թէ՛ կարելի չէր ամբողջովին բժշկել անոր աչքերը: Հետեւաբար, որոշուեցաւ հետեւեալ գիրը յղել Տիկին Նուարդին.

«Տիկին Հայրապետեան,

«Այս դարմանատան բժշկական կազմը իր ամէն կարելին փորձեց ձեր աղջկան աչքերուն լոյսը փրկելու համար: Բայց ցաւով եւ ամօթով կուզանք տեղեկացնել մեր ձխողանքը: Ձեր աղջկան աչքերուն եղջերաթաղանդը վնասուեր է, ուստի մենք առ այժմ ասկէ աւելին չենք կրնար ընել: Գուցէ մօտաւոր ապագային գիտութիւնը նոր հնարաւորութիւններով մեզ օժտէ, այն ատեն կրկին կը փորձենք օգտակար ըլլալ այս հէք աղջկան:»

Տիկին Նուարդ նամակը կարդաց, պայուսակին մէջ տեղաւորեց զայն եւ գնաց Տիկին Արեգնազին մօտ: Երկու բարեկամուհիներ տխուր միջադէպէն ի վեր առաջին անգամն էր որ կը տեսնէին գիրար:

Տիկին Արեգնազ, զանգակին ձայնը առնելուն պէս, դուռը բացաւ եւ Տիկին Նուարդը ներս հրաւիրեց: Տիկին Նուարդ, շեմին վրայ կեցած, ցաւագին եւ հոգեխուով բռնեց իր ներքին թոյնը թափեց եւ անէծքի ու յանդիմանութեան խօսքեր շուայլելէ ետք յարեց.

— Շնորհիւ քու տղուդ անխելքութեան, աղջիկս իր կեանքի բոլոր օրերուն մէջ կո՛յր պիտի մնայ, կո՛յր:

Այդ պահուն, Զաւէն դուրս եկաւ իր ննջասենեակէն:

— Մամա, ես յանցաւոր եմ, ես պէտք չէ որ անոր աչքերուն աւագ նետէի: Ան իմ քոյրս էր, իմ խաղընկերս . . . :

Տիկին Արեգնազ, Զաւէնը գրկելով, անոր աչքերը համբուրեց:

— Ախ, իմ անխորհուրդ տղաս, ըսաւ, հիմա որ եղածը եղեր է, պէտք է որ մէկ բան խոստանաս ինծի. երբ մեծնաս պէտք է որ միշտ օգնես այդ հէք աղջկան. մի՛ մոռնար, դուն այն ինչ որ խլեցիր իրմէ, պէտք է անոր վերադարձնես:

— Մամա՛, մամա, ճիշդ հիմա որոշեցի, ես աչքի տոթթոր պիտի ըլլամ:

Մայր եւ որդի կրկին ողջագուրուեցան:

Ձուարթ ատեն ատեն դարմանատուն այցելեց, բայց բժշկութիւն եւ գիտութիւն անկարող եղան անոր աչքերուն լոյս շնորհել:

Եւ գարունները իրարու յաջորդելով ծաղկեցան, ու ծաղիկներ խամրեցան, եւ օրեր, ամիսներ, տարիներ նահանջեցին եւ սրբութեամբ թաւալեցան մոռացութեան մշուշին մէջ եւ անհետացան առ յաւիտ: Տարիներու թաւալումին հետ շատ բան մոռցուեցաւ. բայց Ձաւէնն՝ Ձուարթին առթած վիշտը չմոռցուեցաւ: Ձաւէն իր մտքէն երբեք չէր հեռացներ այդ պարագան: Գիտէր թէ ինքն էր որ անոր աչքերուն ճրագը մարեց: Ամէն անգամ որ տեսնէր զինք, կը խղճահարուէր:

— Ա՛խ, եթէ միջոց մը ըլլար, կը մըմնջէր շարունակ:

Արդէն տասնեւութ գարուններ թաղած էր, եւ ան այժմ առոյգ պատանի մըն էր դարձեր: Բժիշկ ըլլալու ծրագիրը ա՛լ աւելի կը գերէր զինք: Ան գիշեր ցերեկ կը սերտէր, մեծ ու հռչակաւոր բժիշկ մը ըլլալու վառ յոյսերով գինուած:

Իսկ Ձուարթ, իր ուսումը ստանալու համար ատենէ մը ի վեր յանձնուած էր կոյրերու յատուկ դպրոցի մը. ան առաջին քանի մը շաբաթներուն իսկ վարժուած էր մատներու շօշափումով արագօրէն կարդալ այն ցցուն գիրերը, որոնք խաւաքարտերու վրայ կը գտնուէին: Ան իր ուշիմութեամբ գրաւած էր իր ուսուցչուհիներու ուշադրութիւնն ու հետաքրքրութիւնը:

Ձաւէն՝ բարձրագոյն վարժարանը աւարտած՝ կը հետեւէր համալսարանի դասընթացքներուն: Համալսարանի երկու տարիները արդէն սահեր էին: Բայց իր կրթաթոշակը լման վճարելու դժուարութեանց կը մատնուէր: Որոշեց համալսարանի նախագահին ներկայանալ, ժամադրութիւն խնդրեց, չմերժուեցաւ: Եւ երբ ան նախագահին գրասենեակը կը գտնուէր՝

— Պարոն նախագահ, ըսաւ, մեր չքաւորութեան պատճառաւ ինծի համար անկարելի է այլեւս ուսումնա շարունակել: Հայրս պատերազմի դաշտին վրայ իր կեանքը զոհեց իր երկրին համար, մօրս վաստակով եւ այլ եկամուտներով մենք հագիւ կրնանք օրը օրին ապրիլ:

Նախագահը անոր ուսումնատենչութեան ու յառաջդիմութեան ծանօթ ըլլալով՝

— Այդ ձեր վերջնական որոշումը թող չըլլայ, ըսաւ. հաւանական է որ կերպով մը ձեզի օգնենք, որպէսզի դուք ձեր հետապնդած գիտութենէն չզրկուիք:

Համալսարանը անմիջապէս մասնաւոր յատկացումներով նպաստեց Ձաւէնին. շնորհիւ այդ յատկացումներուն, ան սկսած էր հետեւիլ բժշկական մասնագիտութեան:

Ան մերթ ընդ մերթ Ձուարթին դպրոցը կ'այցելէր: Երկուքնին միասին պարտէզ կ'իջնէին:

Անոնք կ'անդրադառնային իրենց մանկութեան օրերու խաղերուն եւ երբ իրենց վերջին աղէտաւոր խաղին շուրջ թեթեւօրէն ակնարկութիւն կ'ըլլար, այն ատեն՝ Ձաւէն՝ ցաւագին շեշտով մը՝

— Ձուարթ, եթէ միայն գիտնայիր թէ այս ձեր սեւ կացութիւնը որքան կը ճմլէ հոգիս, եւ երբ կը մտածեմ թէ քու ամբողջ դժբախտութեանդ պատճառը այս իմ չար ձեռքերս եղան, եւ թէ այդ անփոխարինելի կորուստին պատճառով դուն դատապարտուեցար ահաւոր մթութեան մը . . .

— Ո՛հ, Ձաւէն, այդպէս մի՛ արտայայտուիր, մի՛թէ այդ մտածումով կացութիւնը կը փոխուի՞: Մոռցի՛ր այդ սեւ անցեալը, ես այսօր իմ հոգեկան աչքերովս շատ բան կրնամ տեսնել: Իմ ողջ զգայարանքներս զիս կրնան առաջնորդել: Ես

ներկայ իմ կացութենէս դժգոհութիւն մը չունիմ: Թէպէտ ձեզ չեմ տեսներ, բայց ձեր ներկայութիւնը կը զգամ: Ձեր ձեռքերու հպումը անկարելի է որ ուրիշներու հետ չփոթեմ: Ձեր հոգին, ձեր դէմքը նոյն իսկ կրնամ նկարագրել, մըմնջեց Ձուարթ:

Երբ Ձուարթ իր տպաւորութիւններն արտայայտեց, Ձաւէն իրմէ իմացաւ իր կարգ մը բարեմասնութիւններուն շուրջ, կամ աւելի ճիշդը՝ ծանօթացաւ Ձուարթին երեւակայած անձին, որ ինքն էր, իր ամբողջ էութեամբ:

Արագաթաւալ ժամանակը քանի մը գարուններ եւս անհետացուցեր էր մութ անցեալին մէջ: Հիմա Ձաւէն հիւանդանոցի մը մէջ ուսանող-բժիշկներէն մէկն էր:

Մասնաւոր մտերմութիւն մը ստեղծուած էր իր եւ բժշկապետին միջեւ: Հիւանդանոցի բոլոր օժանդակ ոյժերը յարգանք եւ ակնածանք կը տածէին բժշկապետին հանդէպ: Ձաւէն՝ բժշկապետին հետ՝ քանի մը անգամ ներկայ եղած էր վիրաբուժական գործողութիւններու: Արձանագրած յաջողութիւններ ու ձախողութիւններ: Օր մը, բժշկապետին հետ եղած մէկ պահուն, Ձաւէն յանկարծ այսպէս խօսեցաւ.

— Տոբթոր, դուք կոյր աղջիկը կը ճանչնաք չէ՞, անոր կոյր ըլլալուն պատճառը ե՛ս եղած եմ: Կը տեսնէ՞ք այս անիծեալ ձեռքերս. անոնցմով աւագ նետեցի անոր աչքերուն մէջ: Այն օրերուն, բժշկութիւնը չկրցաւ անոր աչքերուն լոյսը փրկել: Այժմ, գրեթէ քսան տարի է որ լուսագուրկ կը տառապի ան, իմ մանկական անխոհեմութեանս պատճառով: Արդ, քանի որ գիտութիւնը մեզի նոր հնարաւորութիւններ ընծայած է, ես վստահ եմ թէ վիրաբուժական գործողութիւնով մը մենք պիտի կրնանք անոր գէթ մէկ աչքին լոյս շնորհել: Չէ՞ք խորհիր:

— Շատ հաւանական է, ըսաւ բժշկապետը, բայց յարմար եւ առողջ ակնագունդի կը կարօտինք, անոր ակնակապիճին մէջ թաղելու եւ պատուաստելու համար:

— Կանչեցէք զինք, քննեցէք անոր աչքերը, վերահաստատեցէք անոնց վիճակը եւ քննեցէք նաեւ իմ աչքերս . . . :

— Դուք գիտէ՞ք թէ ի՛նչ թանկագին գոհողութիւն է որ կ'առաջարկէք . . . :

— Այո՛, պատասխանեց Ձաւէն. գիտեմ եւ պատրաստ եմ այդ գոհողութիւնն ընելու, եթէ գիտութիւնը պիտի կրնայ նոր յաղթանակ մը տանիլ եւ լուսաւորել այն սեւ աշխարհը, որուն մէջ կ'ապրի այդ խեղճ աղջիկը:

Բժշկապետը իսկոյն կանչեց Ձուարթը եւ երկար խորհրդակցութենէ ետք, ապահովցուց զինք որ ամէն կարելիութիւն կար առողջ ակնագունդով փոխարինելու եւ լուսագուրկ աչքի մը լոյս շնորհելու:

Ձաւէն երբ կրկին Ձուարթին այցելեց, Ձուարթ պատմեց բժշկապետին հետ իր տեսակցութիւնը եւ անոր յուսատու խոստումները: Յետոյ՝

— Ձաւէ՛ն, դուք ալ բժշկութիւն կ'ուսանիք, միթէ՞ այդպիսի հրաշագործութիւն կարելի՞ է:

— Եթէ գոյութիւն չունենար, բժշկապետը պիտի չթելադրէր: Կը խնդրեմ նաեւ որ չերկմտիք: Գացէք այդ մեծանուն բժիշկին, այն հաստատ համոզումով եւ այն խոր ու սուրբ հաւատքով թէ՛ դուք ձեր աչքին լոյսը պիտի վերստանաք եւ քանի մը շաբաթէն տուն պիտի դառնաք: Ես ալ արդէն այս քանի մը ամիսները հեռաւոր նահանգի մէկ հիւանդանոցի մէջ բժշկական փորձառութիւնս պիտի շարունակեմ, մասնագիտութիւնս կատարելագործելու համար:

* * *

Քանի մը ամիսներ ետք, վիրաբուժական գործողութիւնները շատ յաջող կերպով վերջացեր էին: Զուարթին աչքի վիրակապերը վերցուցած էին արդէն: Գիտութիւնը նոր յաղթանակ մը եւս արձանագրած էր: Տեղական թերթեր, հսկայ վերտառութիւններով, կ'ողջունէին գիտութեան այս նոր ու լուսաւոր յաղթանակը:

Զուարթին շուրջը սպիտակագգեստ բոյժքոյրեր կը վիտային, միշտ խնդակցելով եւ մաղթելով լաւագոյն ու արեւշատ օրեր:

Բժշկապետը երբ վերջին անգամ ըլլալով Զուարթին սնարին քով կեցած անոր որպէսութիւնը կը հարցնէր, Զուարթ անոր ձեռքը սեղմելով իր երախտագիտութիւնը կը յայտնէր, խնդրելով որ աչք մը զոհաբերող անձին անունը յայտնէին իրեն:

— Անոր անունը ձեր անունին հետ հիւանդանոցի արխիւին մէջ կը պահուին: Շատ հաւանական է որ այդ անձանօթին ծանօթանաք օր մը:

— Կը խնդրեմ որ գէթ այս քանի մը երախտագիտական խօսքերս յանձնուին իրեն, աղերսեց Զուարթ:

Բժիշկը նամակը առաւ եւ «ինձ կ'արտօնէ՞ք որ կարդամ» հարցուց:

— Անշուշտ, անշուշտ . . .

Երբ բժիշկը պահարանը բանալու վրայ էր, երիտասարդ բժիշկ մը եկաւ եւ իր մօտ կեցաւ, այն ատեն բժշկապետը սկսաւ կարդալ.

«Իմ անձանօթ բարերարիս,

«Ով իմ անձանօթ բարերարս. երախտապարտ եմ ձեր զոհաբերութեան ոգիին համար: Շատ շնորհակալ եմ որ ինձի շնորհեցիք այս դարուս ամենէն հրաշալի եւ մեծագոյն նուէրը: Երկար ատեն մթութեան մէջ ապրելէ ետք, այս լուսապայծառ նուէրը պաշտելու շափ գնահատելի է:

«Երէկ ինձի շնորհած ձեր աչքով իմ մայրս տեսայ. վերջին անգամ որ տեսած էի զինք, ան ոսկեգոյն մազեր ունէր. սակայն, ան ինձի համար շատ տառապելուն՝ վարսերը արծաթի փոխուեր էին:

«Տարիներով կարօտն ունէի ճրագի աղօտ լոյսին, արեւի պայծառ դէմքին, լուսնի անաղարտ երեսին եւ երկինքի աստղերու արծաթահոս շողերուն, եւ դուք, ձեր ասպետական զոհաբերութեամբ, այս ամէնքը շնորհեցիք ինձի:

«Հազար, հազար շնորհակալութիւն ձեր ինձի շնորհած թանկագին լոյսին համար, հաւատացէք ո՛վ բարերարս, ո՛վ անձանօթ ասպետ, թէ՛ ձեր այս շնորհքին համար միշտ պատրաստ եմ իմ կեանքս անգամ ձեր երջանկութեան համար զոհելու:

«Երախտագիտական զգացումներով՝ մնամ միշտ՝

ԶՈՒԱՐԹ»

Բժշկապետը երբ նամակին ընթերցումը աւարտեց, երկարեց զայն իր քով կեցող երիտասարդ բժիշկին՝ յարելով՝

— Ա՛ռ, այս նամակը քեզի ուղղուած է, Զաւէն:

Զաւէն ընդունեց նամակը եւ մօտեցաւ Զուարթին եւ անոր վարդաթերթ շրթներուն համբոյր մը դրոշմեց: Ապա մրմնջեց.

— Հիմա խիղճս հանդարտ է, Զուարթ:

ՊԱՏԱՆԻ ՄԱՐՏԻԿ



Թռչնարանէն խոյս տուող մողորեալ թռչնիկի մը նման հոս հոն կը խար-
խափէր պատանի Մարտիկ: Ան կը պատկանէր այն ազնուատոհմ ազգին, որ քանի
քանի անգամներ մարտիրոսացեր էր իր հաւատքին ու իր հայրենի նուիրական
վայրերուն ու սրբութիւններուն համար: Ինքն ալ անողորմ բախտին մարտիրոս
մը, աւագանի անունով ալ Մարտիրոս՝ որ մարդոց նախասիրութեան տեղի տալով
դարձեր էր Մարտիկ:

Այս անծանօթ միջավայրին մէջ ան դալար ճիւղ մը կ'որոնէր իր թեւերուն
հանգիստ տալու, իր սիրտը տաքուկ բոյնի մը կարօտն ունէր եւ իր հուժիւնը
արգահատանքով գեղուն նայուածք մը կը փնտռէր ինքզինքը ապահով զգալու
խորհուրդով:

Ատենը մէյ մը կ'երթար բազմամարդ փողոց մը եւ կը դիտէր ծովածաւալ
ամբօխը, անոնց մէջէն բարերարի մը հանդիպելու յոյսով:

— Միթէ այս ամբօխին մէջ մէկ հատ մարդ չկա՞ր, որ մէկ ակնարկով
կարողանար հասկնալ իմ անտանելի վիճակս, կը մտածէր Մարտիկ:

Եւ մասամբ յուսախաբ, անտեսելով զինք շրջապատող ամբօխը, աղերսական
նայուածք մը նետեց Երկինք ու բարձրաձայն արտասանեց.

— Աստուած իմ, Աստուած, բարերար՛ր Աստուած, ամէն քաղցրութեան լեղի
ես խառնած:

Ու շարունակեց.

— Տէ՛ր, կեանքի բաժակիս մէջ աւելի դառնութիւն խառնած ես քան
անուշութիւն: Բայց ինչո՞ւ այս անհաւասարութիւնը, Տէ՛ր:

Այն ատեն ներքին ձայն մը զինք սաստելով կ'ըսէր.

— Հաւատա՛ թէ ամէն յաջողութիւն ժամանակի եւ անդուլ աշխատանքի կը
կարօտի:

Բայց պատանի Մարտիկ կեանքի ծովուն մէջ նոր մտած էր եւ ամէն թեթեւ
ալիք մահացու կը թուէր անոր: Եւ կեանքը ապրիլը, որ մեծագոյն յաղթանակն
է մեր գոյատեւման ընթացքին, իրեն համար այնքան ալ կարեւոր չէր այդ
յաղթանակին արժանանալու, քանի որ իրեն կը պակսէին փորձառութեան
անցեալ մը եւ կեանքը ապրելու եւ դժուարութիւնները յաղթահարելու իմաս-
տութիւնը:

Յիշեց հայ վարժարանը, յիշեց ինչ որ սորված էր հոն, եւ մանաւանդ Դանիէլ
Վարուժանի «Լոյսը», զոր հազար անգամ արտասանած էր, կրկին հոգեւին սկսաւ
մըմնջել.

« . . . եւ իմ հոգւոյս մէջ արթնցաւ
Պանդուխտի տեճ մը անորոշ ու լկիչ
Դէպի գաւառ մ'անճանօթ, լի արեւով .
Եւ արդ կ'երթամ դէպի աղբի՛ւրը լոյսից: »

Եւ աւելցուց.

— Չէ՞ որ մարդկային միտքը անհորիզոն է եւ եթէ անոր անհունութիւնը գիտութեան լոյսով չորոգուի, այն ատեն մարդ կոչուած արարածը անասունէն պիտի չզանազանուի: Ո՛վ մարդկութիւն, ես կարօտն ունիմ այդ լոյսին, կարեկցեցէք եւ օգեցէք ինձի որ՝ «ես երթամ դէպի աղբիւրը լոյսին»:

Մարդիկ շուարած կը դիտէին զայն առանց իր խօսքերը հասկնալու եւ առանց կարեկցութեան:

— Ի՞նչ ընելու եմ որ մարդիկ իմ վիճակս հասկնան, իմ կացութեանս մտերմանան եւ իմ սրտիս իղձերը իմանան: Ամէն քայլափոխի այս մտատանջութիւնով կը տառապէր պատանի Մարտիկ:

Յանկարծ մտաբերեց որ իր ծանօթներէն մէկը իրեն ըսած էր թէ՛ այս երկրին մէջ աղքատներ գոյութիւն չունին: Եւ թէ՛ բոլոր մեծ քաղաքներու մէջ բարեսիրական հաստատութիւններու գրասենեակներ կը գտնուին որոնք յօժար են իրեն օգնելու եթէ դիմում կատարուի:

Իր որոշումը եղած էր բացասական:

— Չէ՛, չէ՛, ես հայ եմ, իմ հայ պատուոյս չեմ ձգեր ձեռք կարկառել օտար հաստատութիւններէ որոգումութիւն ստանալու: Այդ կերպը մուրացկանութիւն է ու ես մուրացկանութիւնը կ'ատեմ:

Եւ ան այսպէս օր մը դժգոհ ու տխուր, օր մըն ալ յուսալից եւ ուրախ, կը դիմէր քաղաքի երեւելի հայերուն, որպէսզի գործ մը հայթայթեն իրեն, բայց բոլորին ալ պատասխանը նոյնը եղած էր.

— Այ տղայ, մի՛ յուսահատիր, անշուշտ Աստուած ողորմած է:

— Աստուած ողորմած էր երէկ ու չորրմեցաւ. այսօր կրկին պէտք է անոր ողորմութեան սպասեմ: Բայց ո՛վ անկարեկիր մարդիկ, նախ մարդը՝ մարդուն, եւ հայը՝ հայուն թող գթայ եւ ողորմի, յետոյ սպասենք Աստուծոյ ողորմութեան, կ'եզրակացնէր Մարտիկ:

Օրին մէկն ալ խրատատու պարոն մը առանց ձեռքը իր գրպանը տանելու՝

— Գիտես, Մարտիկ ճան, ցաւով ու քրտինքով եւ ատեն ատեն ալ արցունքով շահուած յաղթանակները միշտ աւելի գնահատելի եղած են, քան ուրիշներու օգնութեամբ դափնեպսակի տիրանալը, փիլիսոփայեր էր:

— Այդ փիլիսոփայութեան դէմ եմ, որովհետեւ ատեն կայ որ առանց ուրիշի մը օգնութեան անհատը անկարող կ'ըլլայ ճարելու այն բոլոր բաները որոնք կենսական են անհատին գոյատեւման: Յաւով, քրտինքով ու արցունքով շահուած յաղթանակները կրնան նաեւ ըլլալ մահացու: Ես կ'ըզմամ ապրելով յաղթել, արդէն ցաւ, վիշտ, տառապանք, արտասուք միշտ ալ իմ կեանքէս անբաժան եղած են, ինչու որ անկարեկիր սրտերու հանդիպեցայ ու իմ շրջապատս որոնցմէ կախուած էր իմ յաջողութիւնս ու ձախողութիւնս, յանկարծ ոստրէներու պէս իրենց պատեանին մէջ քաշուելով խրուեցան անյատակ ովկիանոսի աւազներուն մէջ: Սրտակիցներս անգամ ասուպներու պէս անհունին մէջ ինկան ու կորան: Եւ լուսնակը որ իմ ցաւերուս միակ միւթարիչը եղած էր, ան իսկ՝ իր գթառատ շողերէն զրկեց զիս ամպերու սեւ շղարշ մը պահելով իր դէմքին: Թող ամէնքը զլանան իրենց օգնութիւնը, իրենց ժպիտը, իրենց լոյսը, ի հեճուկս այս բոլոր գրկանքներուն ես պիտի «երթամ դէպի աղբիւրը լոյսին»: Մարտիկ այսպէս եզրափակեց իր երկարաշունչ տրտունջը:

Թէեւ մարդիկ հետեւած էին անոր հուսկ բանքին, բայց զլացեր էին իրենց ողորմութիւնը:

Մարդկային այս անողորմ կեցուածքը պատանի Մարտիկին մէջ կուտակեր էր ապրելու ու գոյատեւելու հզօր տենչ մը: Ա՛հ, եթէ միայն ջուրով եւ օդով կարելի ըլլար ապրիլ, ան պիտի մերժէր մարդոցմէ եկած ամէն ողորմութիւն: Խուսափելու համար ունայնամիտ եւ ունայնատենչ մարդոց ճնշիչ եւ շանթա-հարող նայուածքներէն, ան իսկոյն որոշեց հեռանալ այդ անողորմ մարդոցմէն ու քաշուիլ իր ննջասենեակը, որուն մէկ անկիւնը կար անզարդ սեղան մը:

Մօտեցաւ այդ անզարդ սեղանին, թուղթ եւ գրիչ առնելով սկսաւ գրել:

— Ծճմարտութիւն է թէ՛ սեւ բախտին անխնայ մէկ հարուածով ես դարձած եմ անօգնական:

Ծճմարտութիւն է թէ՛ քանի՛ քանի գիշերներ պարապ ստամոքսով անկողին մտած եմ քնանալու եւ անօթութենէ չեմ կրցած քնանալ:

Ծճմարտութիւն է թէ՛ մարդկային հաւաքականութեան մէջ բարերարներ անպակաս են, բայց ես չունիմ իրենց հասցէն:

Ծճմարտութիւն է թէ՛ ովկիանոսներու ջուրը անսպառ է, բայց երբ չէ կարելի գործածել զայն, ուստի անօգուտ, նոյնպէս մարդկային գութն ալ անարժէք է երբ սրտերու մէջ վանդակուած կը մնայ:

Այս իմաստասիրական քանի մը տողերէն ետք, գրիչը պատանի Մարտիկին ձեռքէն վար սահեցաւ եւ ան պարապ ստամոքսով մահճակալին վրայ տա-րածուեցաւ, գէթ իր երազներով հասնելու իր ցանկութիւններուն ու միշտ ճախրելու «դէպի աղբիւրը լոյսին»:

ՂԱՐԻՊ ՊԼՊՈՒԼ

«Պայքար», 1961

ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ԵՐԿԻՆՔԻՆ ՏԱԿ



Վերջին քանի մը տարիներուն, ամերիկեան մամուլը եւ մասնաւորապէս կարգ մը գրական ու գեղարուեստական հանդէսներ յաճախակի անդրադարձումներ եւ գովաբանական ու գնահատական խօսքեր նուիրեցին հայազգի հռչակաւոր նկարիչ Արշիլ Կորկիին (Ռստանիկ Մանուկ Ատոյեան):

Ո՞վ է այս անուանի նկարիչը, որ յանկարծ, իր մահէն քանի մը տարի ետք, իր նկարչական արուեստին շնորհիւ յարուսթեան արժանանալով կ'անմահանայ:

Արշիլ Կորկիին ծանօթացայ երեսունական թուականներուն, նկարիչ Ենովք Տէր Յակոբեանի միջոցաւ: Կորկին, իր տիտան հասակով եւ ծանրախոհ երեւոյթով, դիտողին վրայ այն տպաւորութիւնը կը թողուր թէ՛ ինքը բացառիկ դէմք մըն էր, բայց չար բախտին բերումով պարտաւորուած էր իր կենսունակ ոյժերը տրամադրել գործարանային աշխատանքի, ի խնդիր պատառ մը հացի:

Ան «պատեհութիւններով լեցուն» այս երկիրը եկած էր քսանական թուականներուն, տեղւոյն լեզուին անծանօթ. բայց կարճ ժամանակի մէջ տիրացած էր լեզուին եւ մասնաւոր նկարչութեան վերաբերեալ գրականութեան:

Արդի նկարչութիւնը որ կը կոչուի նաեւ վերացական ու ստեղծագործական նկարչութիւն՝ իր հիացումին ու պաշտամունքին առարկան դարձաւ:

Ծանօթ էր աշխարհի բոլոր մեծ նկարիչներու գործերուն, մասնաւորապէս վերացական ու ստեղծագործական նկարչութեան վարպետ Փիքասոյին: Փիքասոն թէեւ վերացական դպրոցին կը պատկանէր, բայց ունէր նաեւ ակադեմական նկարներ ալ, որոնք ներկայացուած էին արդիական շունչով:

Եթէ հարց տրուէր իրեն, թէ հասարակութիւնը ի՞նչպէս պիտի հասկնայ իր նկարչութիւնը, անոր պատասխանը եւ բոլոր արդի նկարիչներու պատասխանը կ'ըլլար թէ՛ բանաստեղծութիւն մը կամ դասական գրականութիւն մը ինչպէս որ կը կարդան ու կ'ըմբռնեն, այնպէս ալ արդի նկարչութիւնը թող ըմբռնեն ու մեկնաբանեն: Եթէ գրագէտ մը պարտաւոր չէ իր գործերը մեկնաբանելու, նկարիչն ալ ազատ ըլլալու է այդ պարտաւորութենէն: Արուեստը չի բացատրուիր, ինչպէս պտուղներու համերը չեն բացատրուիր, այլ համտեսելով կը զգանք անոնց համը:

Հոս տեղին է որ իր կեանքէն դրուագ մը պատմեմ:

Գարնան գեղեցիկ օր մը, Չարլս Րիվըրի գետեզերքը իր նկարակալը հաստատելով, ան կը սկսի իր ստեղծագործական նկարչութեան: Հազիւ թէ իր վրձինը իր երանգապնակին ներկերուն մէջ թաթխած, բնութենէն պատառիկներ գետեղելու իր պաստառին վրայ, այդ պահուն

— Հէյ, ուրկէ՞ եկած ես:

Մօրուսաւոր Կորկին, իր հարցասէր բարեկամին դառնալով, իր սարսափազդու նայուածքը անոր վրայ գամելով՝

— Ե՛ս. ես երկինքէն եկած եմ, կ'ըսէ:

Ու վերստին կը սկսի նկարել:

Ոստիկանը կրկին կը հարցնէ՝

— Հէ՛յ, ես լուրջ կը խօսիմ եւ լուրջ պատասխան կ'ուզեմ. ուրկէ՞ եկած ես: Կորկի ոստիկանին դառնալով՝

— Բոլոր արուեստագէտները երկինքէն եկած են. անոնք հասարակածին չեն: Ոստիկանը կը նեղանայ եւ կ'ազդարարէ որ անառակութեան չտանի իրենց խօսակցութիւնը:

Այն ատեն հայազգի նկարիչը հոգեխուով եւ յուզումնալից խօսքերով կը պատասխանէ.

— Կը տեսնես որ ես նկարիչ եմ, նկարիչ մը բոլոր երկիրներու մէջ իրաւունք ունի իր նկարակալը հաստատել ուր որ յարմար կը տեսնէ: Արուեստագէտներ համայն աշխարհի գաւակներն են. անոնք որեւէ ազգի սեփականութիւն չեն: Ո՛չ մէկ երկիր մէջ անոնց նկարելու եւ արտայայտուելու իրաւունքը կաշկանդուած է: Դուն ոստիկան ես. ես նկարիչ եմ, նկարելը յանցանք չէ, ուստի դուն ալ իրաւունք չունիս զիս խանգարելու, քանի որ ստեղծագործական աշխատանքի ծուած եմ:

Երեսունական թուականներէն ի վեր քանի, քանի՛ ցուցահանդէսներու ներկայ եղած եմ, արդի նկարչութեան մասին գաղափար մը կազմելու համար:

Դեռ ամիս մը առաջ, ցուցահանդէսի մը մէջ նկատեցի մեծ պաստառ մը, որ ամբողջութեամբ կապոյտ ներկով ծեփուած էր եւ պաստառի հեռաւոր մէկ մասին վրայ կարմիր գնդակ մը նկարուած կը տեսնուէր: Նկարիչին մօտենալով ըսի.— Խնդրեմ պարոն, ձեր այս նկարը կրնա՞ք բացատրել:

Եւ նկարիչը պատասխանեց՝

— Կապոյտը երկինքն է եւ կարմիր գնդակն ալ արեւն է որ մայր կը մտնէ:

Նկարը ինծի չի խօսիր, հոգիս չի յուզեր, բայց հեղինակին հոգին չվրդու-վելու համար կ'ըսեմ՝ «Օ՛հ» . . . :

Անշուշտ արդի նկարչութեան մէջ ալ կան նկարներ, որոնց էութեան կը ջանաս թափանցել հետախոյզ աչքերով, քանի որ հոն կը տեսնես գիծերու համաչափութիւն եւ գոյներու ներդաշնակութիւն:

Ֆիզիքական ու հոգեկան տառապանքները, նաեւ կեանքի ընթացքին բազմազան յուսախաբուցութիւններ պատճառ դարձան որ մեր հայազգի մեծ նկարիչը Արշիլ Կորկի վերջ տար իր բեղմնաւոր կեանքին:

Իր մահէն ետք, իր մէկ բարեկամը եւ իր սանուհին, գինք անմահացնելու վսեմ նպատակով, անոր կեանքն ու գործը հանրութեան յանձնեցին, երկու հրատարակութիւններով:

Անոր ստեղծագործ վրձինը հայ ազգին կը պատկանէր, հայ ազգը հպարտ է իրմով եւ անմահութեան յանձնած իր գործերով:

«Պայքար», Ապրիլ 1962

ՄԱՐԴԸ՝ ՈՐ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԵՂԾՈՒԱԾ



Դարերու ընթացքին, բազմազազար իմաստուններ հազարապատիկ կերպերով ջանացեր են մեկնաբանել մարդը: Նաեւ աշխարհը որուն մէջ կ'ապրի ու կը գոյատեւէ ան դարերով:

Սակայն մինչեւ օրս մարդը իր էութիւնով կը մնայ անըմբռնելի, իր նկարագիրով անհասկնալի: Իր գործունէութիւնով անբացատրելի առեղծուած արարած մըն է ան:

Այս խորհրդաւոր էակը որ բանականութիւնով կը կառավարուի եւ բանականութիւնով կը կառավարէ բնութեան մէջ գտնուող բոլոր տարրերը, ինչպէ՞ս կարելի է ներկայացնել:

Մարդը: Այո՛, մարդը որ իր ընկերային յարաբերութեանց մէջ ինքզինք կը հակասէ իր իսկ երկկերպ ու երկերեսանի հակապատկերներով: մարդը որ մերթ մեզի կը ներկայանայ իր առաքինութիւններով: եւ իր պարզ ու անկեղծ վարմունքներով կը գրաւէ մեր սէրը: կը խանդավառէ մեր հոգին: իսկ պահ մը ետք իր տգեղ ու անհաճելի տկարութիւններով եւ բացորոշ թերութիւններով կը շէջնէ ու կը խրաչեցնէ իր բարեկամները:

Մարդը, որ անվիճելիօրէն Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած է, ինչո՞ւ օժտուած պիտի չըլլար բիւրապատիկ առաքինութիւններով: Ո՞վ արտօնէր Սատանային որ մարդուն ներաշխարհին մէջ ցկեանս բնակութիւն հաստատէր:

Եթէ մարդուն հոգին Երկինքին կը պատկանի եւ Երկինքն ալ մարդուն հոգիին, ուրեմն Սատանայի մը գոյութիւնը ժխտական բան է:

Նկատելի է որ մարդ արարածը տակաւ աւելի չարութեանց հակամէտ է, բայց ընդունելի է նաեւ որ բարի եւ հօգօր ոյժ մը գոյութիւն ունի իր մէջ որ ատեն ատեն Սատանայի մը չարաղէտ գործերը իր ատենին կը սանձէ:

Բայց ինչո՞ւ մարդը ատելութեան մէջ աւելի ուժեղ ու անյաղթելի կը դառնայ: կ'ըլլայ աւելի համարձակ, յանդուգն, անվախ, կռուազան: Իսկ իր բարի գործերով, միշտ անաղմուկ եւ աննշմարելի, կ'անհետի պատմութեան մշուշին մէջ:

Հանդիպած ենք մարդոց, որոնք շահ փնտռած են իրենց փոխյարաբերութեանց մէջ: Իրենց ծառայութիւնը տկարին ու թշուառին իսկ զլացեր են: Եւ երբ իրենց յարաբերութիւնը շահ մը չէ ապահովեր, իրենց հարազատներն անզամ լքեր եւ անհետացեր են:

Կեանքի փորձառական համալսարանը մեզի սորվեցուցած է, թէ՛ մարդիկ խառնուածքով ու մտածելակերպով կը տարբերին իրարմէ: Արդարեւ, հետաքրքրական կէտը այդ տարբերութեանց մէջն է: Քանզի անոնց մտածելու կերպի տարբերութիւնը զիրենք կը մղէ հակամարտութեանց: Եւ անոնց այդ հակամարտութենէն յաճախ կը ծնին բարենպաստ պայմաններ: Բայց աւա՛ղ որ

նոյն մտածելակերպի տարբերութիւններէն ծագեր են նաեւ պատերազմներ, որոնց հետեւանքներն եղած են ցաւ, թշուառութիւն, համաճարակ եւ մահ:

Մարդկային արարածը, որ ինքզինք յաճախ կատարեալ էակ կը կարծէ, ինչո՞ւ իր բարեմասնութիւններուն զուգահեռ պիտի ունենայ նաեւ նկատելի եւ արհամարհելի թերութիւններ, որոնցմով ան միշտ պիտի մնայ անմեկնաբանելի առեղծուած մը:

«Պայքար», Յունիս 1962

ՔԱՒԱՐԱՆԸ



Յանձնարարագիր մը ձեռքս առած Պ. քաղաքի մէջ պողոտայի մը երկայնքին կը շրջիմ:

Քարաշէն շէնքերու թուանշաններուն ընթերցումը քիչ մը տաղտկալի կը թուի: Վերջապէս նշանատախտակի մը վրայ կը կարդամ թիւ 108:

Մտովի կ'ըսեմ՝ այս ըլլալու է այն քաւարանը, որուն մէջ քանի մը օրեր իմ մեղքերս քաւելու համար պիտի տանջուիմ ու ապաշխարեմ: Կը մտնեմ ներս:

Բոյժքոյր Աննա զիս գուրգուրանքով կ'ընդունի, կարծես ես իր մէկ սիրելի եղբայրն ըլլայի: Ես ալ պատեհ առիթէն կ'օգտուիմ եւ ցոյց կուտամ հայու ազնիւ զգացումներս եւ յարգանքներս:

Բարեսիրտ բոյժքոյրը կը հրահանգէ որ իրեն հետեւիմ: Կանգ կ'առնենք գրասենեակի մը դրան մէջ: Ձիս կը յանձնէ հոն նստող իր մէկ պաշտօնակիցին: Մէկ նայուածք մը կը նետեմ շիւ քարտուղարուհիին վրայ: Իսկոյն կը տրամաբանեմ թէ ատենօք երկնաբնակ հրեշտակ մըն է եղեր, սակայն իր արարիչին դէմ ըմբոստանալով սատանայի վերափոխուեր է արարիչին հրահանգով:

Անոր կաւէ հուրիւնը, իր անհաղորդ ու հեզնող անհատականութիւնը վայրկեանի մը համար զիս կ'ահաբեկեն: Ինքնիրեն՝ — Աստուած իմ, ի՞նչ չարութիւն գործեցի որ զիս այս սաղայէլին յանձնեցին:

Յանկարծ խիստ շեշտով մը հարց կ'ուղղէ ինծի.

— Անունդ ի՞նչ է . . .

— Արարատ Մասիսեան . . .

— Քանի՞ տարի է այս երկիրը կը բնակիս . . .

— Քառասուն տարի:

— Եւ այսքան երկար տարիներ այս երկրին բարիքները վայելեր ես, ու դեռ այդ տարօրինակ անունը կը կրես. ինչո՞ւ:

— Նոր անուն մը որդեգրելուն մէջ շահաւէտ պատճառ չգտնելուս համար:

— Ո՞ր երկրէն եկած ես . . .

— Հայաստանէն:

— Ո՞ւր կը գտնուի յիշած այդ երկիրը:

— Եղեմի Դրախտը՝ ուր Աստուած իր հրաշակերտ ձեռակերտը — մարդը — ստեղծեց. կանխամարդուն այդ դրախտը մաս կը կազմէ Հայաստանին. եւ Արարատ լեռը, ուր քառասուն օրուան ջրհեղեղէն ետք Նոյեան տապանը իր հանգիստը առաւ, այդ վեհանիստ ու պանծալի լեռը պատմականօրէն Հայաստանին եւ հայ ժողովուրդին կը պատկանի:

Քարտուղարուհին ջղագրգիռ եւ հոգեխուով երեւոյթ մը առնելով՝

— Դուք ի՞նչ գիտէք եղեմ դրախտի եւ Աստուծոյ ստեղծագործութեան մասին:

— Օրիորդ, վայրկեան մը խնդրեմ. մենք հայերս առաջին քրիստոնեայ ազգն ենք: Մենք ամէն ազգերէ առաջ ընդունեցինք Քրիստոսի սուրբ հաւատքը, եւ

Սուրբ Գիրքին տուինք Աստուածաշունչ անունը, անուն մը որ ոչ մէկ ուրիշ լեզուով կարելի է նման իմաստ տալ: Յետոյ երբ Աստուած Ադամը ստեղծեց, կարճ ժամանակ մը ետք Ադամ իր մենութենէն դժգոհ՝ խնդրեց Աստուծոյ որ իրեն պէս, իրեն լեզուէն հասկցող ընկեր մը շնորհէ: Եւ Աստուծոյ պատասխանը Ադամին՝ մեր նախամայրը Եւան եղաւ: Աշխարհի առաջին հանելուկը որ մինչեւ այս դարուս հոգեբան մասնագէտներ չեն կրցած հասկնալ ու լուծել:

Այս խօսքերս ա՛լ աւելի գրգռեցին քարտուղարուհին, եւ յանկարծ իր աթոռէն որոտընդոստ վեր ցատկելով՝ շատախօս անպիտան, հարցումներուս ուղղակի եւ կարճ պատասխանեցէք ըսաւ:

— Ո՞վ է ձեր բժիշկը . . .

— Իմ բժիշկս պարզ բժիշկ մը չէ, այլ ան առաքեալ մըն է, եւ շատ խոնարհ ծագումով հայ մը:

Քարտուղարուհին անզուսպ վազրի մը նման իր յօնքերը պուստեց, աչքերուն մէջ ատելութեան բոցերը թեւ առին ու սկսան բոցավառիլ ու բարձրանալ. ան պատրաստ էր զիս յօշոտելու, զիս վառելու եւ մոխրի վերածելու. արդէն իր այդ հոգեվիճակը անփութօրէն ինձ յայտնեց ըսելով՝ մի՞թէ դուք հայերդ ուրիշներու դէմ նախապաշարուած էք որ այսքան սերտօրէն կապուած էք իրարու:

— Ո՛չ, նախապաշարուած չենք, այլ սակաւաթիւ ազգ մը ըլլալնուս համար իրարու կ'օգնենք: Անցեալին մէջ մեծ պետութիւններու վրայ մեծ յոյսեր դրինք: Անոնք միշտ մեծ, մեծ յոյսերով օրօրեցին մեզ. մենք այդ օրօրները լսեցինք ու քնացանք, բայց երբ Առաջին Աշխարհամարտին ահաւոր փոթորիկ մը եկաւ եւ հայուն արեւը փոքր աստղի մը վերածեց, այդ մեծերը մէյ մէկ աթոռներ գրաւեցին ու նստան, թողուցին որ ժողովուրդ մը ամբողջ փոթորիկէն փճանայ: Բարեբախտաբար հայոց աչքերը Արարատի գագաթէն շատ վեր Լուսաւորչի կանթեղը տեսան, կանթեղ մը որ նախախնամութեան կարգադրութեամբ յաւիտենապէս պիտի վառի եւ լուսաւորէ հայուն ճանապարհը: Եւ այդ ահաւոր թուականին հայը կրկին Նոյ Նահապետի դաշտերն ու այգիները վերագրաւեց եւ սկսաւ այգեմշակութեան: Այդ օրերէն քառասուն տարի անցեր է արդէն, եւ այդ կարճ միջոցին մէջ հայը արդէն միջազգային առաջնակարգ մրցանակներու արժանացած գիտնականներ ու երաժշտագէտներ ունի:

— Ա՛լ կը բաւէ, ո՛հ գլուխս . . . ըսելով կանչեց բոյժքոյր Աննան եւ հրահանգեց որ զիս թիւ 2 սենեակը առաջնորդէ:

Բոյժքոյր Աննա զիս առաջնորդեց առանձին սենեակ մը, որուն մոխրագոյն պատերն ու անախորժ մթնոլորտը Արարատի ծանրութեամբ սկսան հէք հոգիիս վրայ ճնշել:

Ուրեմն առաջին արարուածին վրայ մթաստուեր մը իջած էր, եւ քարտուղարուհին իմացած էր իմ ի՛նչ ըլլալս եւ ո՛վ ըլլալս:

* * *

Առանձնասենեակս նստած՝ ծանր խորհուրդներ, ահաւոր պատկերներ մերթ ընդ մերթ գանկէս ներս կը խուժէին եւ ապա դուրս կը փախչէին: Յանկարծ անխաբոյն մարդ մը, որուն նմանը Տանթէի դժոխքին մէջ միայն կարելի է հանդիպիլ, ներս մտնելով հրամայեց՝ հանուէ՛:

Եւ ասեղներու խայթոցները բիւրաւոր մեղուններու կիժերուն պէս մտան ու ելան, տեղի տալով նորերու: Եւ երբ ասեղներու արարողութիւնը վերջացաւ, մարմնոյս այդ մասը թթիւմորի պէս սկսաւ վեր բարձրանալ:

Տանթէի երեւակայութենէն ծնած այդ ահուելի արարածը իր առաքելութիւնը վերջացուցած՝ «դուն լաւ կ'ըլլաս» ըսելով սենեակէս հեռացաւ:

Մտածեցի աչքերս փակել, քիչ մը մրափելու համար, կամ պահ մը ինքնամփոփուիլ ու մտածել կարենալու՝ վաղուան իրադարձութիւններու մասին: Եւ հազիւ այդ փափաքներս գործադրելու պատրաստուած, դալկահար պատանի մը որ շատ կը նմանէր Պետրոս Դուրեանի նկարին, ինձ մօտեցաւ եւ՝

— Դուք ի՞նչ բանի համար եկած էք հոս . . .

— Եկած եմ որ . . .

— Ոչինչ, մէկ քանի օրէն տուն կ'երթաք:

— Տոքթոր, դուք շատ կը նմանիք հայ անմահ բանաստեղծի մը որ իր պատանի հասակին մէջ գլուխ-գործոցներ յանձնեց հայ գրականութեան, սակայն իր կենդանութեան չգնահատուեցաւ եւ կարծես իբր բողոք սպառազային յանձնեց իր հետեւեալ սողերը.

«Ծաւերը զիս մերժեցին
Քնար մ'ունցի սուկ» – ըսին,
Մի՞ն՝ «դողդոջ է, գոյն չունի» –
Միւսն ալ ըսաւ – «կը մեռնի»:

«Ոչ ոք ըսաւ «նէք տղայ
Արդեօք ինչո՞ւ կը մխայ,
Թերեւս ըլլայ գեղանի
Թէ որ սիրեմ՝ չի մեռնի»:

«Ոչ ոք ըսաւ «սա տղին
Պատուեց սիրտը տրտմագին,
Նայինք ինչե՞ր գրուած կան . . . :
Հոն հրդեհ կայ, ոչ մատեան:»
«Հոն կայ մոխիր . . . յիշատակ . . .»

Այցելուս խոր լռութեամբ զիս լսելէ ետք, «ես երբ Պէյրութ դպրոց կը յաճախէի, մենք յաճախ Դուրեանի քերթուածները կ'արտասանէինք», ըսաւ:

Զարմա՛նք: Հոս քաւարանին մէջ հայո՛ւ կը հանդիպիմ. խեղճ հայեր, աշխարհի ո՞ր անկիւնը ձեր վեհաշուք ներկայութիւնը չէ վայելած:

Չէի կրնար հաշտուիլ, թէ այս ուսանող բժիշկը հայ էր, սակայն այն նախադասութիւնը զոր հայերէն արտասանեց, անոր ալիքները անթել հեռագիրի մը ալիքներուն պէս իմ հայու հոգիիս ընդունարանին բախեցաւ.

— Տոքթոր, ուրիշներ ալ այդ նմանութիւնը տեսած են ձեր մէջ:

— Այո, շատեր ինծի ըսած են թէ՛ Փիզիքապէս հայ հանճարեղ բանաստեղծին կը նմանիմ: Բայց ես ատով չեմ շփացած:

— Տոքթոր, ի՞նչ է ձեր առաքելութիւնը:

— Քեզմէ արիւն պիտի առնեմ:

— Աղբա՛ր, հայը հայուն արիւնը . . .

— Հանդարտէ, Պր. Մասիսեան. քանի որ դուք վաղը գործողութեան պիտի ենթարկուիք, շատ կարեւոր, նոյնիսկ անհրաժեշտ է ձեր արեան քննութիւնը, որպէսզի երբ արիւնի պէտք զգաք ձեզի համանման արիւն ներարկուի:

Բժիշկին խօսքերը թմրեցուցիչ դեղերու պէս զիս հանդարտեցուցին, եւ պատանի բժիշկը ինծի առողջութիւն եւ բարեբախտութիւն մաղթելով շիշին մէջ հայու արիւնը առած հեռացաւ:

Ես անգամ մը եւս յանձնուեցայ մենութեան ովկիանոսին, միշտ յուսալով թէ պիտի կրնամ լողալ դէպի առողջութեան նաւահանգիստը:

Բայց յանկարծ իմ պատկից սենեակէն վայնասուն մը փրթաւ: Եօթանասուն տարեկան հրեայ մը չեմ գիտեր իր որ մեղքին համար եկած էր հոն. բարձրադպրակ կը մոնչէր թէ՛ «Ես հազարաւոր էլքըրներով հողեր ունիմ Պլորիտայի մէջ . . . : Ես թըրներով դրամ ունիմ դրամատուներու մէջ . . . : Ես հարուստ մարդ եմ, չեմ, չեմ ուզեր այս աշխարհէն հեռանալ»:

Բոյժքոյր Աննան, որ կարծես այլեւս զիս մոռցած էր, հարեւանիս վայնասունը լսելուն քովս փութաց՝ «Դուն վախնալու պատճառ մը չունիս, ըսաւ, գիտես կան մարդիկ որ բնականէն մահուան շուքէն միշտ կ'ահաբեկին եւ անտեղիօրէն կ'աղմկեն»:

— Բոյժքոյր Աննա, քիչ առաջ ալ թիւ 4 սենեակէն հայրենաբաղձ ուղերձ մը կ'արտասանէր մէկը . . .

— Հա, հա, այդ մէկը իր հայրենիքի կարօտովը կը տառապի. երբ կը խօսի՝ իր հայրենիքի մասին կը խօսի, երբ կը քնանայ իր հայրենիքը կ'երագէ, հայրենասիրութիւնը անոր համար գաղափար է, իտէյալ է, շատ հաւանական է որ հայ է . . .

— Ո՛հ, անոր մտածումներուն մի՛ դպչիք, թողէ՛ք որ երագէ իր հայրենիքը, հայրենիք երագելը ունայն բան չէ նժդեհ անձերու համար. պանդուխտ մարդը իր մտածումները հայրենի արեւին հետ կապելով կը մխիթարուի: Ան իր երագներով իր հայրենաբաղձութեան կարօտը կը յագեցնէ. թողէ՛ք, թողէ՛ք որ երագէ այդ պանդուխտ հայը:

Թիւ 5 սենեակէն ալ ձայն մը կը լսուի. «Եկէք, ինծի եկէք բոլորդ ալ, կ'ըսէ ան, այսօր իմ կտակս պիտի կարդամ ձեզի» եւ դողդոջուն ձեռքերով եւ իր ամբողջ մարմնովը երերտկալով կը յաջողի պատառիկ մը թուղթ հանել իր բարձին տակէն, ու՝ «երբ ես մեռնիմ իմ շիրմաքարս թող գինիի կամ գարեջուրի տակառ մը ըլլայ, յատակը ծակ. ծակէն մինչեւ բերանս խողովակ մը, որպէսզի եւ ոչ մէկ կաթիլ վատնուի, ես մահէս վերջն ալ կ'ուզեմ գինովնալ»:

Բոյժքոյր Աննային կը հարցնեմ թէ այդ մարդն ո՞վ է: Իր պատասխանը՝ «Այդ մարդը իր կեանքին բոլոր օրերուն միայն սատանային ծառայեր է, միայն ու միայն սատանան խնդրեցուցեր է, ան դժոխքի ապրանք է, չ'արժեր զբաղել անով»:

«Արդ ժամանակն է որ քնաբեր դեղահատդ կլլես», կ'աւելցնէ ան . . . :

* * *

Առաւօտ է:

Արեւի ոսկի ճառագայթները լուսամուտէն ներս սողոսկեր են, թռչնիկ մը հոն կեցած ապակին կը կտցահարէ, գուցէ ինձ աւետելու թէ՛ իմ խուցէս դուրս կեանքը սովորականին պէս կը շարունակուի: Վայրկենապէս կը մտաբերեմ Օմար Խայեամի իմաստասիրական հետեւեալ քառեակը.—

«Մենք աշխարհէն մեկնինք պիտի, մինչ աշխարհը մնայ պիտի,
Այն ատեններ, մեզմէ անուն ու յիշատակ չըլլայ պիտի,
Առաջուրնէ մենք չկայինք, մեր չըլլալով պակաս չկար,
Ու մեր չեղած միջոցին ալ՝ պակասութիւն չըլլայ պիտի:»

Եւ ինքնիրենս կը խորհրդածեմ, մի՞թէ վերելի փիլիսոփայական մտածումները ճշմարտութեան չեն համապատասխաներ: Քանի որ քանի՛ քանի մեծ դէմքեր եկեր ու գացեր են եւ կարծես անոնց բացակայութիւնը կեանքի բեմին վրայ երբեք զգալի չէ այժմ: Այս խորհուրդներուն հազիւ մտերմացած, երկու հսկաներ պատգարակը սենեակէս ներս կը հրեն:

— Հանդարտ ու զուսպ եղիր, քեզ վիրաբուժական խուցը պիտի տանինք, կ'ըսէ անոնցմէ մին:

Բոյժքոյր Աննան ալ պատկերին մէջ կը մտնէ եւ ինծի մօտենալով՝ «Տէրը հետդ ըլլայ, եթէ շատ մեղքեր չունիս շատ չես տանջուիր. մեղքդ շուտ մը կը քաւես եւ քանի մը օրէն այս քաւարանէն կը մեկնիս ողջ առողջ: Կարծեմ դուն ա՛լ ինծի պէտք չունիս, ես պիտի աղօթեմ որ Տէրն առողջութիւն տայ քեզի . . . :»

* * *

Քանի մը օրեր ետք, իմ վիճակակիցներս քաւարանին մէջ իրենց բախտին թողելով, կրկին կը վերադառնամ իմ սովորական կեանքիս, արեւելքցի մէկ ուրիշ բանաստեղծի մը հետեւեալ մտածումներով.

«Եթէ կեանքը լոկ վայելք է,
Հազար դարեր չեն բաւական,
Իսկ թէ տանջանք, տառապանք է,
Շա՛տ է նոյնիսկ կէս շունչն անգամ:»

«Պայքար», Օգոստոս 14, 1962

ԾՆՈՒՆԴԻ ԽՈՂԵՐ

ՍՐՏԻ ԽՈՂՈՎԱԿՈՎ



Սիրելի՛ Կաղանդ Պապա,

Քանի մը արեւածագէ վերջ, մենք՝ քրիստոնեայ կոչուած արարածներս, միասիրտ ու միահամուռ, անսովոր ուրախութեամբ պիտի դիմաւորենք սովորութիւն դարձած տօնական այն օրը, երբ մարդիկ իրենց կառքերը բիւրաւոր ծրարներով բեռնաւորած եւ անգին առարկաներու տուփեր իրենց անութներուն տակ, «Շնորհաւոր Ծնունդ եւ Բարի Կաղանդ»ի երգը իրենց շրթներուն տունէ տուն այցելելով նուէրներ պիտի բաշխեն իրարու: Անշուշտ մեծահարուստը է՛ն թանկագին եւ էն եզական նուէրը պիտի տայ մեծահարուստ բարեկամին եւ չքաւորներ իրենց չունեցածին առաւելագոյնը պիտի ընծայեն իրենց բախտակիցներուն:

Ո՛վ դու ալեհեր ու բարեսէր ծերուկ, այս գիրս կը յղեմ քեզի, խնդրելու համար որ երբ դուն քու եղնիկներու սայլակովը կամ արագավազ ինքնաշարժովը եւ կամ արագաթռիչ սաւառնակովը հոս, այս երկրամասին, կամ այս ծեր երկրագունդի որեւէ մէկ անկիւնը այցելելու ըլլաս, նախ նկատի ունենաս աշխարհի բոլոր այն մանկիկները, որոնք շերտ մը հացի եւ գաւաթ մը կաթի կարօտն ունին եւ որոնք սնունդի պէտք ունին մեծնալու, որպէսզի ոյժ ամբարեն սպազայ խօլ պայքարին մասնակցելու, անոնք քու առատաձեռնութեան կը կարօտին:

Նկատի ունեցիր այն բոլոր անդամահատները, որոնք տկար ու անկարող անձինք, որոնք թէպէտ կամեցողութիւն ունին այլոց ծառայելու, սակայն տե՛ս, անոնք բախտի ծանր հարուածին զոհերն են, որոնք այդ անարդար հարուածէն դարձեր են անպէտ ու անօգնական: Քու անթիւ ծրարներէդ անոնց բաժինը չմոռնաս:

Պահ մը մոռցիր մեծահարուստը, անոր համար ամէն արեւածագ տօնական օր է արդէն եւ ամէն մայրամուտ խրախճանքի պահ:

Ուշադրութիւնդ կեդրոնացուր ընչազուրկ եւ անբախտ այն ընտանիքներուն, որոնք թէպէտ մարդկային ընկերութեան մէկ մասնիկն են, բայց նոյն ընկերութիւնը անոնց զլացեր է արեւի ճաճանչն անգամ: անոնք իրենց նմաններէն անտեսուածներ եւ մերժուածներ են: Գլթա՛ եւ անհատնում ծրարներէդ բաժին մ՛ալ անոնց հանէ:

Տե՛ս, տես պապիկ, հոն, աշխարհի մութ մէկ անկիւնին մէջ անյոյս եւ անլոյս խրճիթ մը կայ, ուր բարեպաշտ այրի կին մը իր արկածահար զաւկին սնարին քով կեցած՝ դեռ կը հաւատայ, թէ՛ իր աղօթքներու զօրութեամբ պիտի կարենայ բուժել խեղճ պատանիին անբուժելի վէրքերը: Այդ անբախտ կինը հազար

անգամ հազար զոհողութիւններով մեծցուց իր սրտահատորը: Եւ երբ զժբախտ պարագաներու դասաւորումով՝ պատանին ստիպուեցաւ երկաթի ձուլարանի մը մէջ աշխատելու, օր մը յանկարծ ահարկու երկաթէ շերեփը, որ մահացու հեղուկը կը պարունակէր, շրջուելով վառեց ու տաղեց անոր մարմնոյն որոշ մասերը: Այն օրէն ի վեր դուռ-դրացի անոնց դրան չեն մօտեցած, անոնց տան քիւին վրայ երկրային թռչուն մ'անգամ չէ թառած իր ճիւճիւններով անոնց տառապանքը մեղմացնելու: Մայր եւ որդի այս ընկերութեան անարդար օրէնքին զոհերն են:

Ո՛վ կաղանդ Պապա, ծանրաբեռնուած սահնակդ պահ մը հոն կեցուր եւ անոնց քչիկ մը յոյս ու լոյս ընծայէ ու կարեկցութեան երկու խօսք, քանի որ անոնք այս դարուն մոռցուածներն են:

Այս ամէնքէն վերջ, սրտի խողովակով կ'ուզեմ քեզի ըսել, թէ՛ եթէ դուն կուզաս խաղաղութեան բեւեռներէն, ուր կեանքը երկինքի մանրանկարն ըլլալու է անշուշտ, ուստի սորվեցուր մեզի Աստուածային այն կերպերը, որպէսզի մենք եղբայրաբար կարենանք ապրիլ ակնթարթ մը տեւող այս կեանքը: Գէթ այս տարի արդարութիւն եւ հաւասարութիւն բեր հետք, որպէսզի այս անցուկ կեանքին մէջ բոլոր, բոլոր անիրաւուածները պահ մը վայելեն հաւասարութեան ընծայած բարիքները:

«Պայքար», Դեկտեմբեր 22. 1962

ԼԱԻ Է ԸԼԼԱԼ ՊԱՐԶԱՄԻՏ ՔԱՆ ԹԷ ԱՂՈՒԷՍ ՆԵՆԳԱՄԻՏ



Իր անունը Նշան էր. այս անունով միայն զինք ճանչցած էի, եւ խօսակցութեանց ընթացքին նշմարած էի որ ատեն ատեն կը սիրէր փխլխոփայել:

Եւ իմ այս հազուադիւր իմաստասէր բարեկամս ամէնուն հանդէպ սիրալիք վերաբերմունք մը որդեգրած էր:

Իրերը չէր չափազանցեր եւ յաճախ կ'ըսէր թէ՝ «Չափաւորութիւնը աստուածային օրէնք մըն է»:

Իր արժանիքները մէկէ աւելի էին. նախ որ ան կը սիրէր լուրջ խնդիրներով զբաղիլ քան թէ ունայն ու անամէջ բաներով:

Օր մը, երբ սրճարանի մը մէկ մուտք անկիւնը սեղանին շուրջ նստած կը խօսակցէինք, ան մօտաւորապէս հետեւեալ մտածումներն արտայայտեց.

«Դատապարտելի են բոլոր անոնք, որոնք մարդը կը դատեն անոր արտաքին երեւոյթովը: Մինչդեռ պէտք է փորձել թափանցել անոր ներաշխարհին, ուր թաքնուած են մարդկային բուն արժանիքները:

Մարդիկ զիս ալ իմ արտաքին երեւոյթէս դատեցին եւ դատապարտեցին:

Մեղքերս բազմապատկեցին, հոգիս չարչրկեցին, եւ ծաղրեցին զիս, երբ լուրջ մտածումներ կը յանձնէի անոնց:

Ոմանք ալ զիս արժանի դատեցին որակումներու, որոնցմէ մեղազործ բանտարկեալներն անգամ պիտի խորչէին ու վշտանային:

Գտնուեցան մարդիկ որ զիս թերազնահատեցին, իսկ ուրիշներ ճիշդ հակառակը:

Օրրանէս դէպի գերեզմաննոց երկարող ճամբուս ընթացքին, հանդիպեցայ մարդոց որոնք կը նախընտրէին ստել, եւ սուտը իրենց համար ինքնապաշտպանութեան միակ զէնքն էր որ ունէին: Մինչդեռ ճշմարտութիւնը աւելի, աւելի հզօր եւ շատ աւելի ազդու զէնք մըն է:

Եւ շրջապատիս մէջ բազմաթիւ անձեր այն յաւակնութիւնն ունեցան ինձ ըսելու, թէ՛ միայն իրենց մտածելակերպը ճիշդ է: Ես զիրենք ապահովեցուցի, թէ՛ կեանքի թատերաբեմին վրայ ամէն անհատ դեր մը ունի կատարելիք, երբեմն յաջող երբեմն ալ թերի կերպով:

Այս խօսքերս ոմանց հանելուկ թուեցան եւ իմ մտերիմներս անգամ զիս չուզեցին հասկնալ:

Ծանօթներէս ոմանք զարմացան ու զայրացան, երբ պարզ աշխատաւորին իմ յարգանքներս մատուցանեցի: Անոնք ըսին թէ՛ «Նման յարգանք մը միայն քաղաքական բարձր պաշտօնեայի մը կը յարմարի»: Ստիպուեցայ ըսելու, թէ՛ աշխատաւորին ձեռքը աւելի բարիք կը շնորհէ քան թէ՛ քաղաքական պաշտօնատարի մը մշակեալ միտքը: Առանց աշխատաւորի օրհնեալ ձեռքին, ո՛չ այսօրուան եւ ոչ ալ վաղուան հացը մեր սեղանին շուրջ կրնայ գտնուիլ: Ինչպէս

որ երկիրն քի ճոխութիւնները հաւասարապէս բաշխուած են ամէնուն, մեր յարգանքներն ալ նմանապէս պէտք է տրուին թէ՛ արտի տիրոջը եւ թէ՛ իր մշակին:

Ատեն ատեն յայտարարած են թէ նախախնամութեան մեզի տուած բարիքները պէտք է օգտագործուին միայն ու միայն մարդկային օգտին համար: Մարդը պէտք է ճանչնայ ու հնազանդի Արարչին այն անյայտ օրէնքին, թէ՛ աշխարհ ստեղծուած է մարդուն համար, մարդն ալ աշխարհին համար:

Պէտք է մեր նիստ ու կացին մէջ չափաւորութիւնը գերակշիռ օրէնքի մը պէս իշխող դառնայ:

Անշուշտ բնական բան է տակաւ սխալիլ: Բայց սխալներ կրկնելը անհատը իր հաւասարակշռութեան պատուանդանէն վար կը գլտորէ: Այն անհատը, որ իր կարողութենէն եւ տարողութենէն աւելիին կը ցանկայ, իր կեանքն ու երջանկութիւնը գոհ պիտի տայ:

Անշուշտ պէտք է աշխատիլ տիրանալու համար բոլոր այն բաներուն, որոնք մեր գոյակեցութեան կը նպաստեն եւ կը բարելաւեն մեր առօրեայ կեանքը: Բայց չափազանց աշխատութիւնը կը սպաննէ մարդոց ազնիւ հոգին:

Զիս կը մեղադրես, ըսելով թէ՛ «մեկուսացած կ'ապրիմ»: Պէտք է մարդիկ ըմբռնեն, թէ՛ մարդ իր մենութեան պահերուն ալ յարաբերութեանց մէջ է մարդոց հետ: Ամէն մարդ ունի հոգեկան աշխարհ մը: Ինքնամփոփ պահերուն մեր հոգեկան աշխարհին մէջ կը գտնուինք: Մեր հոգեկան աշխարհին մէջ կը գտնուին մեզ առաջնորդող մեր հերոսները, որոնք իրենց անփոխարինելի բարեացակամութեամբ կ'ապրին կամ ապրեն են այս աշխարհին մէջ, որոնք մեր մենութեան վայրկեաններուն մեզ շրջապատելով՝ անոնց հետ կ'ապրինք գերերջանիկ պահեր»:

Այստեղ՝ Պր. Նշան գլանիկ մը վառեց եւ անյագօրէն ծուխը ներշնչեց ու արտաշնչեց: Յետոյ, մեծ յուսախաբութիւններու հանդիպողի մը նման, վերստին սկսաւ փիլիսոփայել:

«Կեանքի մէջ յուսախաբութիւններ չա՛տ կը պատահին. կը յուսախաբուինք, որովհետեւ շատ կը յուսանք, շատ կ'ակնկալենք: Այս դժբախտ պարագաները արձանագրուելու չեն մեր ուղեղներուն մէջ: Երջանիկ ապրելու համար կ'արժէ որ մոռցուին կեանքի դժբախտ պատահարները: Մարդ միշտ պէտք է ապրի յուսալից օրերու եւ նոր արշալոյսներու համար:

Առանց ցաւի եւ տառապանքի ձեռք բերուած երջանկութիւնը կը նմանի այն նուէրին, որուն արժէքը չենք կրնար գնահատել:

Տառապանքով ու երկունքով շահուած երջանկութիւնը աւելի թանկագին է: Օրինակ՝ մայր մը որ երկունքով ծնունդ կուտայ իր զաւկին, իր զաւակը աւելի թանկագին կ'ըլլայ: Անոր մայրական սէրը աւելի խորարմատ եւ անոր կեանքը իր զաւկին համար գոհելու միշտ պատրաստ կ'ըլլայ: Մինչդեռ ամուլ կնոջ մը սէրը հանդէպ իր որդեգիր զաւկին ինքնաբուխ չ'ըլլար, այլ սահմանափակ եւ պարտադիր: Ան ի ցոյց մարդկանց կը սիրէ իր հոգեզաւակը, պախարակուելէ եւ դատապարտուելէ գերծ մնալու մտահոգութեամբ: Այս օրինակով ուղեցինք փաստել, թէ՛ գերագոյն երջանկութիւնը ուրիշներէ մեզի շնորհուած պէտք է ըլլայ, այլ մե՛ր քրտինքով վաստակած բերք մը:

Սակայն այս բոլորը ըսելէ ետք, պէտք է ընդունիլ, թէ՛ անբանաւոր փոքրամասնութիւն մը գոյութիւն ունի որ երբեք չի փորձեր փոխուիլ: Ան կը գոհանայ բնութեան իրեն տուած բնագոյով. ան նոյնիսկ չի փորձեր այդ բնագոյը վերամշակելու»:

Հոս իմաստասէր բարեկամս պահ մը լռելէ ետք աւելցուց.

«Լաւ է ըլլալ պարզամիտ,
Քան թէ աղուէս նենգամիտ»:

*Ես իմ կողմէս՝ «Մի մոռնար, Պր. Նշան, որ մինչեւ իսկ ուղիղ ճամբուն վրայ
քալողները երբեմն կը սայթաքին, այնպէս չէ՞», ըսի:*

«Պայքար», 1962

ԳԻՐՓԵՐՈՒ ՀԵՏ

ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



«Խոհեր»: Ահա գիրք մը, որուն հեղինակին մասին 1936ին մեզի ըսուեցաւ թէ «անոր անունը հայ մատենագրութեան մէջ ոսկի տառերով պիտի գրուի»:

Այդ թուականին վրայէն 26 տարիներ անցեր ու թաղուեր են դարերու մշուշին մէջ:

Եւ այդ թուականէն ի վեր «Խոհեր»ու տաղանդաւոր հեղինակը՝ Անդրանիկ Անդրէասեան, հայ մատենագրութեան յանձներ է «Սպիտակ արդարութիւն», «Կարմիր ասպատակի օրագրէն», «Վերջին կայանը» եւ «Խոհեր», իր վերջին հրատարակութիւնը, որ բիւրեղացած մտածումներու շողերով ողողուած է:

Պէտք է ընդունիլ թէ այս գիրքին ճառագայթարձակ խոհերը բացարձակ ճշմարտութեանց կը համապատասխանեն:

Չորս գիրքերու վաստակաւոր հեղինակը՝ Ա. Անդրէասեան բացայայտ ճշմարտութիւնն է որ կ'արձանագրէ երբ կը գրէ:

«Գաղութահայ գրողը — ան որ սփիւոքի մէջ սկսաւ գրական աշխատանքի — ուրեմն իր նախաքայլին մէջ իսկ կը դիմագրաւէր ահարկու դժուարութիւն մը: Դպրոցական դեղեւուն, յաճախ կէս կատար հայերէն մը միայն գիտէր ան եւ շատ նախնական ծանօթութիւն մը ունէր զինք շրջապատող ժողովուրդներու մշակոյթին մասին: Դեռահաս գրողը պիտի զարգացներ իր հայերէնը, զայն դարձնելու համար ստեղծելու, կերտելու ընդունակ սպորող գործիք մը»:

Բայց ի՞նչպէս, որո՞ւ օգնութեամբ պիտի կարենար հասնիլ իր երազներուն, իր նպատակին. այս հարցումներուն պատասխանները յայտնի պէտք է ըլլայ այն սերունդին որ ահարկու աղէտէն վերապրելով հայկական որբանոցներու մէջ զինք խնամող ու դաստիարակող բարերար հայերու յանձնուեցաւ: Եւ երբ քանի մը շաբաթներ կամ քանի մը ամիսներ հազիւ թէ իր մոռցած հայերէնը վերյիշած, արդէն զանազան երկիրներէ իր մէկ ազգականէն նամակ կը ստանար շուտով իրեն միանալու:

Ահա հայ պատանին, որ քանի մը անհրաժեշտ բառեր նոր սորված կը ստիպուէր իր դպրոցը ձգել ու հեռանալ, գուցէ երթալ Եւրոպա կամ Ամերիկա: Ու երբ բնակութիւն հաստատեց Եւրոպա կամ Ամերիկա, ան արդէն հարկադրուած էր գործարան մը մտնել ի խնդիր պատառ մը հացի: Եւ որպէսզի իր մայրենի լեզուն բոլորովին չմոռնայ, ան պէտք է իր խաղի եւ զբօսանքի ժամերը բոլորովին մոռնայ. ան պէտք է տեղական լեզուին ալ ծանօթանայ. իր մեծերը յաճախ կը պնդեն թէ՛ տեղական լեզուին տիրանալը աւելի կարեւոր է քանի որ իր կեանքի մնացեալ օրերը իր որդեգրած երկրին մէջ պիտի ապրի . . . :

Ուրեմն, օտար երկիրներ հաստատուող հայ պատանին պետք էր երկու լեզուներն ալ մշակել լուկ համարձակ արտայայտուելու մտահոգութենէն զերծ ըլլալու համար:

Եւ անոնցմէ ոմանք աւելի աշխատունակ եւ ուսումնատենչ եւ գրելու հուրով բռնկած, տիւ ու գիշեր ինքնօգնութեամբ, ինքնաշխատութեամբ ինքնակերտ գրագէտներ դարձան, որոնցմէ լաւագոյն ներկայացուցիչն է մեր սիրելի Ա. Անդրէասեանը:

«Ազգայինը գրականութեան մէջ» եւ «Գրական Գերշնչումի աղբիւրները» կտորները ապրող էջեր են, որմէ սկանակներ պիտի կրնան օգտուել ընտրելու եւ մշակելու գրական սեռ մը:

«Օշականի «Պատում»-ին վրիպանքը» շատ արդար դիտողութիւն մըն է, ընդունելով թէ՛ Օշական գրադատութեան կալուածին մէջ գուցէ լաւագոյններէն էր, բայց երբ խստադատ գրադատը իր կալուածէն կը շեղի եւ անարդար դատումներով հայրենի գրականութիւնը «դամբարան»-ի արժանի կը գտնէ, այն ստեն մենք ալ Ա. Անդրէասեանին միանալով կը բացագանչենք:

«Ու դժբախտաբար՝ Օշականի այս գաղափարական կայունացումն է որ լեղի քամահրանքով կ'ողողէ իր գրական դատողութիւնը եւ զինք կը լեցնէ «ՏԱՌԱՊԱՆՔՈՎ», «Գոյնիսկ զայրոյթով» խորհրդահայ որեւէ գեղարուեստական երկի դէմ»:

Մենք կը ծափահարենք Ա. Անդրէասեանի հայրենասիրական նախանձախնդրութիւնը եւ իր քննական ու գրադատական կարողութիւնը:

«Հայ մշակոյթին համար» գրուած իր ներբողականին հետեւեալ հատուածը.

«Գաղտնի կամ խորհրդաւոր զօրութիւն մը չէ, որ այդքան Գերշնչումի մշտանորոգ կարողութեամբ օժտեր է հայ մշակոյթը: Անոր բովանդակ ոյժը այն իրողութիւնն է, թէ ան հարազատ արտայայտիչը եւ մարմնացնողը եղած է մեր ժողովուրդին ամէնէն ազնուական ձգտումներուն ու գեղապաշտ ոգիին, անոր ամէնէն յաւերժական տեսչերուն ու ստեղծարար, ազատ կեանքի մը լուսեղէն տեսիլքին» . . .

«Ուրեմն, մեր մշակոյթին մէջ, հայ ժողովուրդին յատկանիշները եւ առաքինութիւններն են որ կը ցոլանան»:

Արեւի պէս պայծառ այս ճշմարտութեան առջեւ որեւէ հայ իմացական միտք պիտի խաչակնքէր իր դէմքը:

Համառօտ գրախօսականներ ունի՝ Մովսէս Խորենացիի, Խաչատուր Աբովեանի, Յովհաննէս Թումանեանի, Կոմիտաս Վարդապետի, Վահան Տէրեանի, Գրիգոր Զօհրապի, Վահան Թէքէեանի, Երուանդ Օտեանի, Եղիշէ Արք. Դուրեանի եւ Միսաք Մեծարեանցի, որոնց կեանքն ու գործը այսքան կարճ գրութիւններու մէջ յաջողապէս խտացուցեր է:

Հասարակական մասին մէջ իր ուղեւորութիւնը դէպի Հայաստան (1936) մեծ հետաքրքրութեամբ կը կարդացուի: Մանաւանդ եթէ ընթերցող հասարակութիւնը «Պայքար»-ի մէջ հրատարակուող «Սփիւռք եւ Հայրենիք» յօդուածաշարքին կը հետեւի: Որպէսզի Հայաստանի փառապանծ վերելքը կարող ըլլանք արդարօրէն դատելու եւ փառաբանելու, պետք է Դէպի Հայաստան իր ուղեւորութիւնը կարդանք, որը գրած է 1936ին, եւ իր 1962 Տպաւորութիւններ ու դատումներուն հետ բաղդատենք:

«Հայ յեղափոխութեան մասին» Ա. Անդրէասեանի մօտեցումը հայ յեղափոխականներու գործունէութեանց, անոնց յաջողութիւններուն եւ ձախողութիւններուն պատճառները, եւ պարզ ըմբոստութիւններ յեղափոխութիւն

անուանելը եւ մեր յեղափոխութեան գործունէութիւնը զանազան ազգերու յեղափոխութեան հետ իր բաղդատականը, իր մէջ կը յայտնաբերեն միջազգային պատմութեանց եւ օտար ազգերու յեղափոխութեանց հետամուտ պատմասէրը, ուր առողջ դատողութեամբ հայ յեղափոխութեան մասին կուտայ իր արդար վճիռը:

Գրիչդ դալար, սիրելի Անդրանիկ, որ միշտ պատիւ կը բերես քու ազգիդ ու հայրենիքիդ:

ՂԱՐԻՊ ՊԼՊՈՒԼ

«Պայքար», 1962

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՐՕՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԵՒ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ



Պահ մը թողունք այս անգուշակելի, մեքենականացած եւ հիւլէական դարը եւ մեր հայու հոգիով ու մտքով թեւածենք ետ, միանանք ու լուծուինք Աւարայրի ճակատամարտին մասնակցող հայ անձնագոհ մարտիկներուն հետ, զգանք ու ապրինք անոնք հայրենասիրութիւնը, սեփականացնենք անոնց իտէպը, ուսումնասիրենք այդ օրերու հայուն ցաւը, անոնց տառապանքը, անոնց հայ մնալու հերոսական ջանքերը, եւ զայն բաղդատենք մեր օրերուն հայոց տաք ու պաղ վէճերուն եւ անոնց անգործակցութեանց արուեստականացած պատճառներուն հետ:

Մեծն Վարդանի հայրենասիրութիւնն ու կրօնասիրութիւնը ամբօրէն օղակուած են իր հուլթեան հետ: Ան կը հաւատայ թէ՛ «Կրօնք եւ հայրենասիրութիւն անբաժանելի են»: Վարդան ո՛չ միայն զօրավար մըն էր, այլ ազգային ոգիով դաստիարակուած իմաստուն հայ մը: Ան այդ օրերու ուխտապահ կուսակցութեան պետն էր: Ասպետի անթերի նկարագիր ունեցող մեծ անձնաւորութիւն մը: Ան իր անձնաւորութեան մէջ կը ներկայացնէր հայ ազգի կրօնական եւ հայրենասիրական ձգտումները: Եւ «իր քրիստոնեայ սպարապետութեամբ ան հայկական բանակէն պաշտուեցաւ իբր պատերազմի Աստուած մը»:

Իր անշահախնդիր ազգասիրութեան համար, ան հայ ժողովուրդի բոլոր դասակարգներէն ալ սիրուեցաւ ու յարգուեցաւ: Ազնուատոհմ մարդիկ, գիտուններ եւ ունեւորներ հաւասարապէս անոր քայլերուն կը հետեւէին: Եւ «պատիւ կը համարէին մասնակցելու անոր փառաց», շրջապատելով զայն սիրոյ, յարգանքի եւ անայլայլ հպատակութեան համակրանքով:

Վարդան Մամիկոնեան ապացոյց տուած էր սպարապետի փայլուն հանճարին. ան մասնակցած էր քառասուն ճակատամարտներու եւ այս բոլորին մէջ յաղթող հանդիսացեր էր:

Ան՝ իբր կուսակցապետ անձնական փառքի ետեւէ չվազեց, այլ միայն Հայաստանի փառքին ու հայ ժողովուրդի բարօրութեան համար տրամադրեց իր այլազան կարողութիւնները: Եւ անոր նկարագրի այս բարձրութիւնը նկատած էին նոյնիսկ իր հակառակորդները: Ահա թէ ինչու ան կը յարգուէր բոլորէն:

Պարսկական լուծը հետզհետէ կը ծանրանար: Հայ ժողովուրդին վրայ դրուած էին ծանր տուրքեր, անհանդուրժելի թուելու չափ անողոք օրէնքներով: Սասանեան իշխանութիւնը հարկ դրած էր նոյնիսկ հայոց լեռներուն եւ խոպան դաշտերուն վրայ . . . :

Իր իրաւունքին տէր եւ ուրիշներու իրաւունքը յարգող արդարասէր հայը չէր կրնար իր թշնամիին անսակարկելի դրութեանց առջեւ խոնարհիլ:

Ուստի հայեր, պարսիկ իշխաններու անհանդուրժելի սեղմումներուն դէմ ըմբոստութեան դրօշ պարզեցին, եւ ուխտապահ կուսակցութիւնը, Վարդանի առաջնորդութեամբ, իր բոլոր միջոցներով պայքարեցաւ, նոյնիսկ գէնքի դիմեց, թեթեւեցնելու համար պարսիկ իշխաններու խիստ օրէնքներն ու հալածանքները: Պարսիկ Մարզպետը Մոգութեան դարձի հրաւէր մը դրկեց հայ աւագանիներուն: Հայեր ժողով գումարեցին եւ մերժեցին անոր հրաւէրը, ուխտելով կենաց ու մահու գնով հաստատ մնալ հայոց ուղղափառ հաւատքին վրայ: Նոյն ստեն սոյն ժողովը նամակ մը յղեց Մարզպետին ըսելով.

«Այս հաւատքէն զմեզ ո՛չ ոք կարող է խախտել. ո՛չ հրեշտակներ, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր»:

Երբ Արքայից Արքան այս խիստ եւ խրոխտ պատասխանը կարդաց, իսկոյն արքունի հրովարտակով պաշտօնանկ ըրաւ Հայաստանի գլխաւոր հայ նախարարները:

Սեպենք թէ հայերը Մոգութիւնը ընդունէին, ի՞նչ պիտի ըլլային այդ ընդունումին հետեւանքները: Պէտք է ենթադրել, թէ՛ պարսից Արքայից Արքան մոգերու բանակին հետ Հայաստան պիտի դրկէր նաեւ անհամար թիւով գինուորներ, որոնք պիտի տիրէին հայոց հայրենիքին եւ հայ հաւատքը, քրիստոնէական կրօնքը ժամանակին ընթացքին պիտի տկարանային եւ անհետանային մեր հայրենիքէն:

Ուրեմն, որպէսզի մեր հայրենիքը եւ մեր հաւատքը մշտնջենապէս անաղարտ մնային, պէտք էր որ պարսից անհաւասար ոյժին դէմ պատերազմէինք:

Եւ հաւանական է որ այս տրամաբանութեամբ Զօրավար Վարդան եւ իր բոլոր մը հայ քաջասիրտ գինուորները ուխտեցին զոհուիլ իրենց հայրենիքին եւ քրիստոնէական կրօնքին համար:

Աւարայրի պատերազմով հայ ժողովուրդը անգամ մը եւս ցոյց տուաւ իր հայրենասիրական եւ կրօնասիրական զգացումներու անբաժանելիութիւնը:

Վերոյիշեալ դէմքերն ու դէպքերը հայոց պատմութեան հին էջերուն կը պատկանին: Փորձենք եւ տեսնենք, թէ՛ ի՞նչ են իրողութիւններն ու երեւոյթները այսօր:

Հայը նոյն հայրենասէր ու կրօնասէր հայն է. եթէ անցեալին ան պատրաստակամութիւն ունէր իր հայրենիքն ու կրօնքը պաշտպանելու, այսօր, վաղը եւ յաւիտեան ան նոյն անձնուէր ու պարտականութեանց գիտակից հայն է: Հայրենասիրութիւնն ու կրօնասիրութիւնը երէկ անոր էութեան հետ շաղախուած էին. այդպէս է այսօր եւ այդպէս պիտի մնայ յաւիտեան:

Ամէն հայու հոգիին մէջ կայ ու կը մնայ Հայաստան մը եւ Հայաստանէն անբաժանելի ու յաւերժական քրիստոնէական կրօնքը, իր անմահ էջմիածինով:

«Պայքար», Փետրուար 21, 1963

Լ. Ա. ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ



Գնահատելի են Հ. Բ. Ը. Միութեան Նիւ Ինկլլընտի Կեդրոնի վարիչ-ֆար-տուղար Պր. Յակոբ Աղամեանի բուրրանուէր ջանքերը: ան, քանի քանի անգամներ, հայ մշակոյթը հանրութեան ծանօթացնելու համար, նկարահան-դէսներու ոյժ կուտայ եւ քաջալերութիւն կ'ընծայէ: դեռ վերջերս տեղի ունեցաւ իւղաներկ նկարներու ցուցահանդէս մը, որ տեւեց Ապրիլ 2էն 8:

Նկարչական արուեստը գնահատելու մարմաջս գիտ ալ կ'առաջնորդէ Կեդրոն: Եւ բազմազան նկարներով զարդարուած սրահին միջնորդը կը հրճուեցնէ արուեստասէր հոգիները:

Մեր առաջին տպաւորութիւնը այն եղաւ որ՝ նկարիչ Լեւոն Ա. Մնացականեան արուեստագէտի լաւորակ ձիրքերով օժտուած նկարիչ մըն է:

Մնացականեան, «արդի» նկարչութիւն կոչուած նկարչական արուեստը մշուշի մէջ թողած, մեզի կը ներկայանայ իրապաշտ դպրոցին հաւատարիմ եւ իր սեփական ոճով զարդարուն բազմատեսակ ու բազմերանգ նկարներով:

Իր «Սթիլ լայֆ»երը յաջող են: Հոն ամէն առարկայ հարազատ գոյներով ներկայացուած է: Իր դասաւորումներուն մէջ ճաշակը տիրական է:

«Մայր Աստուածածին եւ Յիսուս Մանուկը» գնահատելի գործ մըն է: ո՛րքան աւելի Յիսուս Մանուկը կը դիտենք, այնքան աւելի համոզումը կ'ունենանք, թէ ապագայ հրաշագործի մը դէմ յանդիման կը գտնուինք: Անոր դէմքին անմեղութիւնը եւ անմեղութեան խորքին տակ թաքնուած մտածող Մանուկը մեզ ալ մտածելու կը մղեն: Հմայիչ ու կախարդիչ արտայայտութիւնը թոյլ չի տար որ դիտողներ առանց գոհունակութեան հեռանան:

Մնացականեանի դիմանկարները մեզի կը յիշեցնեն նկարչութեան վերածնունդի դարը, երբ Րաֆայէլ, Լէոնարտո տա Վինչի, Մայքըլ Անճէլօ, նկարչութեան արուեստը գազաթնակէտի մը հասցուցին: Անոր դաշտանկարները լուրջ աշխատանքի գործեր են, որոնց մէջ եւս կը նշմարուին արուեստագէտին նախասիրած երանգները:

«Սեւան»ը իր անհանդարտ երեւոյթով, իր փրփրերախ ալիքներով եւ տարածութեան ծոցին մէջ կղզիի մը գոյութիւնով, հէքեաթային վայրի մը երեւոյթը ստացած է կարծես:

Ուշագրաւ է «Ս. Գրիգոր Նարեկացի»ն, իր ներշնչարան խուցին մէջ, իր նայուածքը յառած սեւեռակէտի մը, իր դէմքը լոյսով ողողուած: Բայց, կարծէք այդ ընդհանուր միջնորդտին մէջ էական բան մը պակաս է: Բան մը որ այդ աղօթող ու քրիստոսատենչ սուրբին «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ» գլուխ-գործոց ստեղծագործութիւնը պիտի վկայէր . . . :

Մեր կարծիքով Սուրբ Նարեկացին աւելի խաղաղ երեւոյթ մը կրնար ունենալ, քանի որ հոգեկան հաղորդակցութիւն մը կար իր եւ Աստուծոյ միջեւ:

Սակայն, անկեղծօրէն պէտք է ըսեմ, թէ Մնացականեան նկարիչը նկարչական արուեստի սիրահար արուեստագէտ մըն է:

Կը մաղթենք իրեն նորանոր յաջողութիւններ:

«Պայքար», Մայիս 7, 1967

«ՊԱՅՔԱՐ»

ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏԻՆ ԼՈՒՍԱՏՈՒ ՋԱՀԸ



Ո՞վ կը յանդգնի հերքել մեր խորագիրը, քանի որ «Պայքար» օրաթերթը, 45 տարիներէ ի վեր, հայ պանդուխտին տունը այցելելով, լոյս ու յոյս բաշխեր է անոր, եւ լուսաւորեր է անոր ընտանեկան յարկն ու մթնոլորտը: Ու հանդիսացեր է հայ հոգիին հետ հաղորդակցութիւն ստեղծող եւ պահող միջոցներէն մին:

Նորեկ նժդեհ հոգիներ իրենց հայրենական կարօտը փնտուեր ու գտեր են անոր սիւնակներուն մէջ:

Հայկական կեանքով հետաքրքրուողներ անոր խորքին մէջ գտած են անշեղ եւ անխարդախ ուղեգրի՞ծը հայ քաղաքական կեանքին:

Հայ գրագէտը իր բիւրեղացած մտածումներուն աճիլն ու ծաղկիլը տեսած է անոր սիւնակներէն ներս, եւ գոհունակութեամբ իր ոյժը տրամադրեր է հայ կեանքին եւ հայ համայնքին:

Անտարակոյս որ ամէն իրաւ հայ պիտի փափաքէր որ օտար երկիրքին տակ հրատարակուող հայ թերթը հայոց կենսատու արեւի ճառագայթներով ջերմացնէր աշխարհի չորս ծագերուն մէջ ցիրուցան եւ դժբախտ հայ բեկորները: Այդպիսիներ իրենց ակնկալութիւնը լիացած գտած են «Պայքար»ի գոյութեամբն ու յարատեւութեամբը:

Հայց. Եկեղեցին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, հայրենակցական միութիւններ եւ զանազան այլ հայ կազմակերպութիւններ հիւրասիրուած են «Պայքար»ի էջերուն մէջ, ի խնդիր եւ յօգուտ հայ հոգիի գոյատեւմանը:

Ահա 45 տարիներու ծառայութեամբն ու գոհողութեամբը մեզի ներկայացող այս թերթը, այս պահուն իսկ մեզի կը հաղորդէ, թէ պատրաստ է ամէն խոչընդոտ չքացնել, ամէն առապար հարթել, որպէսզի հայոց կռունկին նման հայրենական խապրիկ մը հասցնէ հայ հայրենաբաղձ հոգիներուն:

Այսօր այն պահերէն մին է որ ամէն հայ եւ հայ հաստատութիւններ պահիկ մը ունկնդրեն «Պայքար» օրաթերթի վսեմ կոչը եւ դրական ապացոյցներով հաստատեն իրենց սէրն ու յարգանքը հանդէպ այս թերթին, որ շատ մը փոթորիկներու դիմադրեր է իրենց տունը այցելելու իր ջանքերուն մէջ:

«Պայքար» կոչնակին ղօղանջը մեր սիրտի երակներուն պէտք է հպի ու արթնցնէ մեզ որ գիտակցինք ձուլումի վտանգին ահաւորութեանը: Եւ արդէն ընդունուած իրողութիւն է, որ առանց հայ մամուլին, հայ գաղութը շատո՞նց սպառած ու անհետացած պիտի ըլլար:

Այո՛, այսօր է որ ամէն պարտաճանաչ հայ իր ինքնաբուխ նուէրը՝ իր իւրազիրը բերէ այս թերթին, որպէսզի հայ պանդուխտին ջահը մշտնջենապէս վառ մնայ:

«Պայքար», 1967

ՈՂՋՈ՛ՅՆ ՔԵՉ, ԵՐԵԻԱՆ



Ողջո՛յն քեզ, Երեւան, դուն արեւելքի լուսապայծառ աստղը հնադարեան:
Դուն մեր ներկան լուսաշող եւ կովկասեան լուսածագը հրաշալի:

Ահա՛ քու մէկ վտարանդի որդիդ, որ քու հմայքէդ կախարդուած կարօտալի
սրտով քեզի լուգայ, քսանեօթը դարերու փառքիդ առջեւ երկրպագելու եւ հիա-
ցումի ու բարեմաղթութեան աղօթք մը մրմնջելու քու յարատեւմանդ ի խնդիր:

Ներէ՛, եթէ քիչ մը յապաղած է ան, իր քրտինքն ալ աշխատաւոր զաւակ-
ներուդ քրտինքին հետ խառնելու, քու պայծառացմանդ համար:

Ներէ՛, Երեւա՛ն, եթէ իր արիւնէն կաթիլ մը չէ կրցած նուիրել քու
փրկութեանդ ի խնդիր: Արդէն գիտես որ, դաժան ճակատագիրը մրրկախառն
հոսանքներով ցան ու ցիր ըրաւ Արեւմտեան Հայաստանի քու հարազատներդ: Եւ
այս խոնարհ որդիդ ալ, անապատէն բեկորի մը նման, ովկէաններու խելագար
յորձանքներուն հետ, քշուեցաւ մինչեւ հեռաւոր արեւմուտքի օտար ափերը:

Այժմ ան կուգայ քեզի, Երեւա՛ն, հայու հարազատ զգացումներով:

Քեզի կուգայ, քու տառապեալ զաւակներուդ հետ անոնց վիշտը երգելու:

Քեզի կուգայ, յուսավառ ու լուսավառ զաւակներուդ հետ քու այսօրուան
յաղթանակդ եւ անցեալի փառքդ տօնելու:

Քեզի կուգայ, քու երջանիկ ներկադ եւ լուսապանծ ապագադ յաւերժական
երգերով դիմաւորելու:

Քեզի կուգայ, Երեւա՛ն, քու համբերատար եւ ժրջան ժողովուրդիդ հետ քու
բոլոր դարերու արեւածագը օրհներգելու:

Քեզի կուգայ, համբուրելու այն բոլոր շինարար ձեռքերը, որոնք բազմագոյն
ու վարդագոյն տուֆէ քարերով փոխակերպեցին կերպարանքդ, ու վերակեր-
տեցին դարերու բեռան տակ յոգնած կիսափուլ տնակներդ:

Քեզի կուգայ, հայ հանճարին լուսազագաթ ճակատները համբուրելու,
Մատենադարանիդ սրբատաշ քարերուն առջեւ ծնկաչոք խունկ ծխելու սրբազան
փափաքով, որպէսզի քու լուսաշող իրականութիւնովդ իր պանդուխտի հոգին
լուսաւորուի:

Քեզի կուգայ, Երեւա՛ն, հայ ազգին ու հայ հայրենիքին ծառայելու իր
ուխտը վերանորոգելու:

Քեզի կուգայ, քու կենսունակութիւնովդ զօրանալու եւ քեզմով ու քու
հրաշալի յարութեամբդ հաղորդուելու:

Ողջո՛յն քեզ, Երեւա՛ն, արեւաշող դու ոստան, քաղաք անասան:

Ծ.Խ.: Մեր բոլորանուէր թղթակից-աշխատակից ընկեր Խաչատուր Փիլի-
պոսեան Սեպտեմբեր 3, Երեքշաբթի օր, կը մեկնի Հայաստան, իբրեւ անդրանիկ
այցելութիւն: Բարի ճանապարհ եւ անմոռանալի օրեր կը մաղթենք իրեն:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ**
ԵՒ ԱՆՈՐ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ



Ճիշդ յիսնամեակ մը առաջ, հայկական կուսակցութիւններու ղեկավարները իմաստութիւնը ունեցան յղանալու Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հիմնելու սքանչելի գաղափարը: Այս կուսակցութիւններուն միաձուլումով կառուցուեցաւ Ռամկավար Ազատական Կուսակցութեան վսեմ գաղափարականի վիթխարի շէնքը:

Այդ օրերուն, ներկայ Հայաստանը մահամերձի իր պատեանէն նոր դուրս եկած՝ լինելու եւ չլինելու սեւ հարցականի մը առջեւ կը գտնուէր, մինչ անոր կենդանի իրականութիւնը ոմանց կողմէ կը մերժուէր: Սակայն, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, փառապանծ մեր հայրենիքին ստեղծման առաջին իսկ հանգրուանէն, յաւերժական հայրենի հողին գաղափարին փարած, մէկդի դնելով վարչակարգի հարցը, յայտարարեց՝ Հայրենիքը՝ ամէն նկատումէ վեր:

Այդ օրերուն, տարագրութեան սեւ ճակատագիրէն վերապրող հայու բեկորները Ռամկավար Ազատական Կուսակցութեան շարքերուն միանալով, դարձան ազատ մտածողութեան դրօշակակիրները, ինչպէս նաեւ հետազային՝ հայրենիք-սփիւռք հոգեկան կապի առաքեալները:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր հիմնումի առաջին իսկ օրէն, որպէս ուղեգիծ ունեցաւ անշահախնդիր հայրենասիրութիւնը: Հետեւաբար, անընդհատ գրեց, խօսեցաւ եւ գործեց՝ որպէսզի արտասահմանի հայութիւնը կապէ մայր հայրենիքին:

Տակաւին պատանեկան մեր տարիներուն, ընդունելով Կուսակցութեան վսեմաշունչ գաղափարականը, ուխտեցինք ցկեանս ծառայել մեր ազգին եւ հայրենիքին, մեր Կուսակցութեան միջոցաւ: Որովհետեւ, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը արհամարհեց հակառակորդներուն դաւադրական գործունէութիւնները, եւ արտասահմանի հայութիւնը առաջնորդեց յաւերժական հայրենիքի լոյսին:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը հանդիսացաւ մեր գաղափարական դաստիարակութեան առաջին եւ հիմնական դպրոցը: Հոն է որ մենք սորվեցանք թէ՛ հայրենասիրութիւնը սոսկ լորձնաշուրթն արտայայտութիւն չէ, այլ՝ սրբազան գործ: Հոն է որ մենք սորվեցանք թէ՛ ի՞նչ միջոցաւ կարելի է առաւելագոյն չափով օգտակար ըլլալ թէ՛ մեր ժողովուրդին եւ թէ՛ մեր հայրենիքին: Արդարեւ, անոր գաղափարական մեհեանին մէջ սորվեցանք թէ՛ արտասահմանի հայութեան փրկութիւնը կրնայ գալ միայն հայրենի իրականութեան ընդունումով եւ անոր հետ հոգեկան նոր եւ ամուր կապեր հաստատելով: Հայրենասիրութիւնը մեզի

համար դարձաւ հայրենիքին առաւելագոյն չափով օգտակար ըլլալու անշեղ չափանիշ մը:

Մեր անդամակցութեան օրերուն, երբ տակաւին նաեւ պատանի էր Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, մենք հաւատացինք եւ այսօր եւս կը հաւատանք թէ մեր կազմակերպութիւնը գաղթաշխարհի հայութիւնը կ'առաջնորդէ հայրենիքի վերածարկման մեծ իրականութեան՝ անսակարկելի հայրենասիրութեան գաղափարի ճանապարհով:

Մեծ Աղէտի օրերէն տասնեակ մը տարիներ ետք, նոր սերունդը հասակ կ'առնէր, ուժացումի վտանգին առջեւ: Հետեւաբար, Ամերիկայի մեր շրջանակը, գերագոյն գոհողութիւն մը յանձն առնելով, որոշեց անգլիատառ թերթ մը հրատարակել, հայեցի դաստիարակութիւն ջամբել կարենալու համար մեր նորահաս սերունդին: Մօտիկ անցեալի պատմութիւնը ցոյց տուաւ թէ՛ յիշեալ հրատարակութիւնը ունեցած է իր բարերար դերը ձուլումի դէմ մեր բացած պայքարին մէջ: Անոր գնահատանքը շատ բնականաբար կ'երթայ Ռամկավար Ազատական Կուսակցութեան, որ նիւթական մեծ գոհողութիւններու ենթարկուելով յաջողցուց անգլիատառ շաբաթաթերթին հրատարակութիւնը:

Այսօր, յիսուն տարեկանին, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը սրտով եւ հոգիով վերանորոգուած, ինքնավստահութեամբ կը դիմաւորէ ապագան: Ուխտած է աւելի մեծ թափով եւ վճռակամութեամբ ծառայել ազգային մեր գիտակցութեան վերահաստատման, ներկայ սերունդին եւ ապագայ սերունդներուն մօտ, որոնք պիտի շարունակեն ծնիլ օտար երկնակամարի տակ եւ միշտ ենթակայ՝ օտարացումի, այլասերումի:

Սփիւռքահայ իւրաքանչիւր հայրենասէր անհատի պարտականութիւնն է համախմբուել Ռամկավար Ազատական Կուսակցութեան շուրջ, դիւրացնելու առաջադրութեամբ յաջողութիւնը անոր պատմական առաքելութեան: Իր հիմնադրութեան առաջին տարիներէն սկսեալ, եւ մինչեւ մեր օրերը, կազմակերպութիւնը կը հրատարակէ տասնեակ մը թերթեր, նախ բացատրելու համար մեր ժողովուրդին արդար դատը եւ երկրորդ՝ պաշտպանելու համար մեր մշակոյթը, արտասահմանի մէջ խաթարուելու վտանգին դէմ: Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը տարիներով շարունակ օժանդակած է բոլոր այն կազմակերպութիւններուն, որոնք հայրենասիրական իրենց անշեղ ընթացքը հետապնդելով հանդերձ, օգտակար հանդիսացած են մասնաւորաբար գաղթաշխարհի հայկական մշակութային կեանքի վերելքին: Յիշեալ նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը յաճախ հանդիսացած է բախտորոշ, որովհետեւ հակառակ պարագային, նման կազմակերպութիւնները հարկադրուած պիտի ըլլային դադրեցնել իրենց ազգանուէր գործունէութիւնները:

Ներկայ ժամանակներուն դժբախտաբար, սփիւռքահայութեան կեանքը բռնուած է իսկական փոթորիկի: Մեր բոլորին պարտականութիւնն է, ներշնչուելով Ռամկավար Ազատական Կուսակցութեան վեհ գաղափարականէն, յանձն առնելով ամէն գոհողութիւն, փրկել մեր արժէքները ամբողջական կործանումէ:

Հետեւաբար, Միացեալ Նահանգներու մեր հայ համայնքին ուշադրութեան կը յանձնենք այն պարագան, թէ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, որ յիսնամեակ մը ամբողջ ծառայած է մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին, յառաջիկայ Մայիսի 16ին Պոստոնի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ սրահին մէջ պիտի տօնէ իր հիմնադրութեան Ոսկեայ Յիսնամեակը:

«Պայքար», Մայիս 9, 1971

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐԷՆ



Ամերիկացին ընդհանրապես անծանօթ մնաց հայ ազգի ծագման եւ անոր պատմութեան մասին: Այդ պատճառով 1920ական թուականին, Գալիֆորնիոյ մէջ արտօնազիր մը կը մերժուէր հայու մը, այն առարկութեամբ թէ ան . . . մոնկոլ ցեղին կը պատկանէր:

Հարցը լուրջ էր, անոր հետեւանքով ծանր հարուած մը կը կրնար դալ ամերիկահայութեան: Հարցը մեծ հետաքրքրութիւն եւ մանաւանդ մտահոգութիւն ստեղծեց իր ատենին:

Յեղաբաններ կանչուեցան, խնդիրը տարուեցաւ Գալիֆորնիոյ գերագոյն ատենին առջեւ, եւ հոն ստուգուեցաւ հայուն արիական ցեղի ժառանգորդ ըլլալը: Միջազգային պատմագէտներու համաձայն, յայտնի եղաւ որ Քրիստոսէ երկու հազար տարիներ առաջ արիական ցեղեր եկած ու հաստատուած էին Մեծագոյն Հայաստանի ամբողջ տարածութեանը վրայ:

Անշուշտ գտարիւն արիական ցեղի մասին չէ մեր հաստատումը, քանի որ նշանաւոր ցեղաբան Փրոֆ. Մորիս Ճեսարօ յայտարարած է թէ՛ «Չկայ անելի յիմարական պարծանք մը քան պարծանքը ցեղային մաքրութեան, ինչ որ գոյութիւն չունի»:

Ուրեմն պէտք է հետեւցնել թէ՛ բոլոր ազգերն ալ խառն ամուսնութեամբ եւ խնամիական կապերով իրարու հետ կապուած են:

Օրինակ՝ մեր պատմութեան մէջ կը յիշուին դարաշրջաններ, երբ մեր յաղթական թագաւորները պարտուած ժողովուրդներու «ծաղիկն կազմող ազնուազգի դասակարգերն Հայաստան փոխադրել կը ջանային»:

Ու կը յիշուի Մեծն Տիգրանի անունը, որ «Արեւմտեան քաղաքներէն 300 հազար անձեր կը բերէ Տիգրանակերտ, ուր զանոնք բնակակից կ'ընէ հայոց նախարարական գերդաստաններուն»: Ու կ'ըսուի նաեւ որ նոյն թուականներուն 100 հազար հրեաներ Պաղեստինէն ու Աղեքսանդրիայէն կը փոխադրուին Հայաստան եւ կը բնակեցուին Հայաստանի վեց գլխաւոր նահանգներուն մէջ:

Այս պատմական ճշմարտութենէն կարելի է հետեւցնել թէ՛ մենք հայերս, կամօրէն կամ ակամայօրէն խնամութեան կապեր ունինք մեզ շրջապատող բոլոր ազգերուն հետ:

Ուրեմն, պէտք է եզրակացնել թէ՛ թէպէտ գտարիւն ցեղեր գոյունիւն չունին, բայց կան ու կը մնան ցեղային կամ ազգային յատկանիշներ, որոնք ժառանգականօրէն կապուած կը մնան ազգերու կեանքին ու քաղաքակրթութեան հետ, իբրեւ ցեղային հարազատ տիպար կամ նկարագիր:

Մեր պատմութիւնը ցոյց կուտայ, որ մեր ազգը իր նախաքրիստոնէական օրերուն, աւելի խրոխտ ու մարտական նկարագիր ունեցած էր: Անոր նկարագրի յատկանշական գիծերը եղած են դիւզացնական, յարձակողական, տիրապետող, ազատական, յառաջդիմական եւայլն:

Ուրեմն, կ'ենթադրենք թէ նախաքրիստոնէական մեր աշխարհակալական յաջողութիւնները կը պարտինք վերեւ յիշուած ազգային խիզախ նկարագրին եւ այն բարձր յատկանիշներուն, որոնց անդրադարձանք:

Սակայն հետագային երբ ազգովին քրիստոնէական վարդապետութիւնը ընդունեցինք, հայ ժողովուրդի մտածողութեան մէջ յեղաշրջում մը կատարուեցաւ: Եւ նախաքրիստոնէական օրերու իր ուզմական, յարձակողական, անհանդարտ ու անհամբեր բնակողութիւնը տեղի տուաւ նոր մտածողութեան եւ ան դարձաւ խաղաղասէր, համբերող, հպատակող եւ պահպանողական ժողովուրդ մը:

Անշուշտ զարմանալի չէր, քանի որ նոր կրօնքը ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր համարուեցաւ: Յետոյ նոր կրօնքին հետ բերուած էին նոր պատուէրներ, ինչպէս՝ «ընկերոջ սիրէ քու անձիդ պէս» եւ «Մերէ՛ թշնամիներուդ»:

Կրնաք երեւակայել մեր աշխարհագրական դիրքը եւ մեզ շրջապատող այլակրօն ցեղեր, որոնք գայլերու պէս պատրաստ էին միշտ յարձակելու եւ յօշոտելու գառներու վերածուած ժողովուրդ մը:

Անշուշտ մեր ցեղային խրոխտ նկարագիրէն քիչ բան մը մնացած էր, եւ ատոր համար մենք ստրուկներ չդարձանք: Սակայն անուրանալի է որ այդ ժամանակաշրջանին մեր երկիրը արշաւող ոչ-քաղաքակիրթ ազգեր, նկատի ունենալով մեր խաղաղասիրական ոգին, շատ ծանր ճնշումներ ու անմարդկային տնօրինութիւններ հարկադրեցին հայ ժողովուրդին: Եւ քանի մը դար տեւեցին այլազգիներու կողմէ մեզի պարտադրուած հալածանքներն ու չարչարանքները, մինչեւ որ «Ածխացած մոխիրներու տակէն քաջամարտիկ հայուն ուզմական ոգին» անգամ մը եւս իր բուռնցքը բարձրացուց, Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ:

Պէտք է ընդունիլ թէ հայ գիրերու գիւտը մեծ չափով հայ հոգիին վերածնութեան ոյժ ներշնչած էր: Ուրեմն ճակատագրական յարմար վայրկեանին, հայուն բարձր նկարագիրը, անոր արիական ցեղի ոգին, դիմադրական ու ռազմական տրամադրութիւնը, խոր թմբիրէն ազատագրուած, հրապարակ կ'իջնէին անհաւասար ոյժերու դէմ պատերազմելու:

Այս ճակատամարտին ելքը բոլորիդ ալ ծանօթ է: Հոն Վարդան իր քաջամարտիկ գինակից ընկերներով նահատակուեցաւ, սակայն Մամիկոնեան գերդաստանէն Վահան Մամիկոնեանը, երեսուն տարի ասպատակային կռիւր շարունակելով, պարսիկներուն պարտադրեց նպաստաւոր պայմաններով դաշնագիր մը, որ ծանօթ է Նուարասակի դաշնագիր անունով:

Դժբախտաբար հայ ազգին աշխարհագրական դիրքը այնպէս մը դասաւորուած էր որ, օտար արշաւողներու յարձակողական ախորժակը թէեւ երբեք գոհացում չստացաւ, սակայն, մենք ունեցանք շարունակական յարձակումներ, որոնց հետեւանքով մեր ազգը միշտ տկար մնաց:

Բայց հայ ապրելու եւ հայ մեռնելու մեր տրամադրութիւններն ու ճիգերը միշտ անսասան մնացին: Այս կէտը հաստատելու համար, գանք մեր մօտիկ անցեալի թուականներուն, եւ լսենք Խաչատուր Աբովեանը, որ իր «Վէրք Հայաստանի» վէպին մէջ հայ հոգիին ու հայոց նկարագրի տոկունութեան շուրջ խօսելով՝ կ'եզրակացնէ.

«Սար ըլլար կը փլշէր, երկաթ ըլլար կը հալէր, կը մաշէր, հոգւոյ կարողութիւն, որ աշխարհիս ջրհեղեղէն ի վեր՝ մինչեւ այսօր ուրիշ ոչ մէկ ազգ չկարողացաւ ցոյց տալ ու կարող ալ չէ: Ծով ըլլար կը պակսէր, կը ցամքէր, բայց աստուածասէր հայ ազգը մինչեւ այսօր գերօրինակ հսկայութեամբ տարաւ բոլորը եւ իր անունը պահեց:»

Հայ ազգի տոկոնութեան մասին ահա ուրիշ օրինակ մը. պարսիկ զօրավար մը, իր նենգամտութենէն ու չարամտութենէն պարպուած, հետեւեալ խոստովանութիւնը կ'ընէ.

«Հայ ազգը ո՛չ թուրէն կը վախնայ, ո՛չ հրացանէն, ոչ թնդանօթէն: Կրակը կը նետես՝ իր հաւատքը կը պաշտէ: Ծառէն կը կախես, միսը կը պոկես բերանը կուտաս, տակաւին իր խաչը կը պաշտէ, իր Քրիստոսին անունը կուտայ:»

Հայ ազգի նկարագրին տոկոնութեան մասին այսքան պերճախօս վկայութիւններ երբ կը կարդանք, անմիջապէս մեր աչքին առաջ կուգան 1915 թուականի Մեծ Եղեռնի օրերը, երբ հրէշատիպ թուրքը փորձեց բնաջնջել հայ ազգը:

Բայց սուլթաններու, թալաթներու անմարդկային հալածանքներն ու կոտորածները եւ անոնց վայրենաբարոյ խենչութիւնները չկրցան ընկճել մեզ:

Եթէ անոնք իրենց հրէշային ծրագրին մէջ յաջողէին, աշխարհի հանրագիտարաններուն մէջ հազիւ թէ յիշուած պիտի ըլլար հայ ազգին անունը: Այն ալ, հաւանաբար դրած պիտի ըլլային թէ «ատենօք կար ազգ մը, որ հայ անունը կը կրէր» . . . :

Ուրեմն, մենք կրնանք եզրակացնել թէ՛ հայ ցեղի արիական նկարագիրը, անոր դիմադրական ոգին եւ ցեղային բարձր արժանիքները շատ կենսական դեր ունեցան մեր գոյամարտին եւ ապրելուն ու յարատեւելուն մէջ:

Այսուհանդերձ, մեծ ապերախտութիւն պիտի ըլլար չյիշել հայ կիրնը, որ մեր պատմութեան բոլոր շրջաններուն ազգապահպանման մարզին մէջ մեծագոյն դերերէն մին կատարած է:

Օրինակներ շատ կան Մեծ Եղեռնի օրերէն, երբ հայ կիրնը՝ մահուան ճորերուն ու կիզիչ անապատներուն մէջ, անօթի ու ծարաւ, կը թափառէր. իր մահամերձ պահերուն մէջ անգամ իր գաւկին կը սորվեցնէր հայ ազգին՝ թուրքէն ու քիւրտէն գերադաս ըլլալը:

Հայ կիրնը անապատի կիզիչ աւազին վրայ կը քանդակէր Սուրբ Մեսրոպի պողպատեայ այլ ոսկեղէն բառերը, որպէսզի իր մանկիկը՝ իր հայ ըլլալը չմոռնար:

Իսկ աղէտէն ետք, երբ հայ որբերը կը բերուէին որբանոցները, հոն ալ հայ կիրնը իր խնամոտ ձեռքերով եւ մայրական սէրով կը հոգատարէր զանոնք:

Յետոյ սփիւռքահայ բոլոր գաղութներուն մէջ, հայ կիրնը ազգապահպանման կազմակերպութիւններու կողքին՝ առաջին հերթին կրթական օժախներ հաստատեց: Նոյնն է պատկերը այսօր եւս. կը տեսնենք որ հայ կիրնը բաժին ունի քաղաքական, բարեսիրական, կրթական, ծխական, հայրենակցական եւ ուրիշ կազմակերպութիւններու մէջ: Եւ շնորհիւ անոր անխոնջ ու ժրաջան աշխատանքներուն եւ գոհաբերող ոգիին, վստահաբար հայը պիտի ապրի ու գոյատեւէ: Հայ կիրնը կը պարտինք հայապահպանման ամէնէն հզօրաշունչ եւ քաղցրահնչուն պատգամը, որ երբեւիցէ դրուած ըլլայ:

Ուրեմն կարդանք քանի մը տող միայն, Սիլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» ծանօթ ու սիրուած պատգամէն.

Լսի՛ր, որդիս, պատգամ որպէս
Սիրող քո մօր խօսքը սրտանց,
Այսօրուանից յանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ:
Բա՛ց շուրթերդ, խօսի՛ր անգին,
Ժիր դայլայլի՛ր, ի՛նչ սիրասուն,
Թող մանկանա՛յ քո շուրթերին
Մեր պլեհե՛ր հայոց լեզուն . . .
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
Ինչպէս մօրդ կը պաշտպանես,
Թէ սուր քաշեն մօրդ վրայ.
Ու տե՛ս, որդիս, ո՛ր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ր էլ գնաս,
Թէ մօ՛րդ անգամ մտքից հանես
Քո մա՛յր լեզուն չմոռանաս:

«Պայքար», Փետրուար 10, 1972

ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏ ՄԱՐԴԻԿ



Բազմաթիւ են խոնարհ ու պարկեշտ մարդերը, որոնք իրենց ամբողջ կեանքին տեւողութեանը թէեւ լուռ ապրած են, բայց օգտակար ծառայութիւն մատուցած են իրենց պատկանած ազգին ու կազմակերպութեան: Անոնց օգտակարութիւնը եղած է անոնց կարողութեան սահմաններուն մէջ անշուշտ:

Ազգին ու հայրենիքին ծառայելու անոնց հզօր բաղձանքը մղած է զանոնք մինչեւ անձնագոհութեան, ինչպէս Գարեգին Զիթճեան գաղափարապաշտ առաքեալը, որ համակ նուիրումի մեծագոյն ապրող օրինակը հանդիսացաւ, երբ նախընտրեց զոհուիլ, իր գաղափարապաշտութեան ի պաշտպանութիւն:

խոնարհ մարդիկ, կեանքի թատերաբեմին վրայ, իրենց զոհաբերութեան ազնիւ ոգին միշտ թաքուն պահած են, խորշելով լորձնաշուրթն շունդալից արտայայտութիւններէ: Անոնք զոհած են իրենց սրտէն ու քսակէն, միշտ անշուշտ այլ առաւելագոյն չափանիշով:

Պարտաճանաչ մարդը կը յայտնուի նախ իր ընտանեկան յարկին տակ: Ան երեւան կուգայ մարդկային ընկերութեան մէջ, իր յօժարակամութեան ու զոհողութեան ոգիով: Ան օժտուած կ'ըլլայ մարդկութեան ու հանրութեան ծառայելու ջերմ փափաքով, ինչպէս նաեւ պատրաստակամութեան ազնիւ ու կեդրոնաձիգ բաղձանքով: Այս բարեմասնութիւններէն զուրկ անհատը զուրկ կը մնայ նաեւ մարդասիրական բազմաձեւ այն երեւոյթներէն, զորս պիտի յառաջացնէր իր իտէալապաշտ ու անշահախնդիր ոգին:

Մարդ էակը նախ անդամ է մարդկային ընկերութեան. յետոյ նախընտրութիւնը կը տրուի իր ազգային պատկանելիութեան: Այնուհետեւ կը փնտռուի իր մէջ թանկարժէք գաղափարապաշտ ոգին:

Բոլորուիլ մէկ գաղափարի շուրջ կը նշանակէ ըլլալ մէկ ընտանիքի անդամ: Թէեւ միեւնոյն ընտանիքին մէջ ալ տարակարծութիւններ կրնան պատահիլ, աւանդական սովորութիւններու դէմ շեղումներ կրնան ուրուագծուիլ, բայց անոր բաղկացուցիչ անդամներուն սրբազան պարտականութիւնն է իր ոյժերը համադրել եւ միաձուլել, բարիին յաղթանակը ընդմիշտ ապահովելու մտասեւեռումով:

Զինուորական կեանքի մէջ, ամէն զինուորի պարտականութիւնն է իր կեանքի գնով պաշտպանել իր զինակից ընկերը: Նոյնն ըլլալու է գաղափարական բանակէն ներս, քանի որ տարբերութիւն մը եւ առաւելութիւն մը կայ այս վերջինին մէջ: Գաղափարակից ընկերներ, որոնք հոգեկան անյայտ եւ անմեկնաբանելի ոյժով կապուած են իրարու հետ, որոնք կ'ապրին ու կը զոհուին միեւնոյն իտէալին համար, պէտք չէ որ անձրեւ եւ կարկուտ յառաջացնեն, վնասելով իրենց կազմակերպութեան: Ընդհակառակն, այդ տարակարծութիւններէն յառաջ եկած փոթորիկը մեղմելու ի խնդիր տարուելու է լուրջ աշխատանք, պայծառ հորիզոններու վերերեւման սրտագին բաղձանքով:

Նոր ոյժեր, նոր մտաւորականներ նոր երազներով կ'իջնեն հրապարակ: Մեր նորահաս սերունդը առաջնորդուելու նոր մեթոտներ կը պարզեն: Ժամանց ու մշակութային ձեռնարկ իրարու միացնելու այս նորահաս մեթոտով աշխատանք կը տարուի, նոր սերունդը հեռու պահելու համար օտար եւ օտարացնող պարահանդէսներէ եւ այլ հաճոյքի վայրերէ: Ատիկա գուցէ ազգապահպանութեան նոր կերպ մըն է, զոր դժբախտաբար կը թերանանք գնահատելու:

Առաջարկուած այդ նորաձեւութիւնը, ուրեմն, տակաւին իր առաջատները հովին չբացած, նաւակայքին մէջ կը դատապարտուի անշարժանալու . . . :

Աշխարհի պատմութեան մէջ, միշտ ալ տարակարծութիւններ երեւան կուգան հիներու եւ նորերու միջեւ: Օրինակի համար՝ Քրիստոսէ քանի մը դար առաջ, յոյն իմաստուն մը ըսած է «Հոգեկան վատթարացումի օրեր կ'ապրինք»: Ան կը խօսէր իր դարու երիտասարդներուն, որոնք հինը կը մերժէին եւ որպէս երիտասարդներ «ծայրայեղական» մտածումներով կ'ուզէին առաջնորդուիլ եւ առաջնորդել:

Խրիմեան Հայրիկ, իր երիտասարդութեան օրերուն, իր ազատախոհութեանը համար հալածուեցաւ ասանդապաշտ ու ասանդամոլ անձերու կողմէ, եւ որպէսզի ձերբազատուի անարդար հալածիչներու ճիրաններէն, ան որոշեց քաշուիլ մենաստան մը եւ այդ առիթով գրեց. «Մարդս մեծ պաշտօնի գլուխ անցնելով կարող չէ գործել, ինչպէս իւր ազգի փափաքն է. այլ պէտք է խոյս տալ չարազբաղ վիճակէն. խոյս տալ նաեւ հակառակորդ ոսոխներէ: Երթալ ու գործել միայն լուսոյ ու դաստիակարութեան համար»:

Եզրափակենք. անհատը իրաւունք ունի մտածելու եւ գործելու, այնպէս ինչպէս ինք յարմար կը դատէ, պայմանաւ որ սակայն իր աշխատանքին արդիւնքը ըլլայ բարերար, օգտակար եւ օրինակելի: Անարդարութիւն պիտի ըլլար զինք կաշկանդել, ի՛ր իսկ նախաքայլերուն մէջ: Ժամանակ եւ պատեհութիւն տրուելու են որպէսզի մարդը իր գործերով ու յառաջապահ քայլերով ինքզինք արժեցնէ: Ըսենք նաեւ որ այս հիւլէական դարուն մէջ գաղափարապաշտ մարդը պէտք է ըլլայ նաեւ իրատես եւ շրջահայեաց: Բացառիկ ճկունութիւն ունեցող գաղափարապաշտը միշտ ալ կրնայ ունենալ հետեւորդներու բանակ մը:

Ճշմարիտ գաղափարապաշտը փառամոլութենէ զուրկ էակ մըն է. անոր հոգին կը նմանի իր շուրջը լուսաւորող լապտերին. երանի՛ անոնց որոնք գիտեն ծառայել այլոց երջանկութեան համար: Օ՛ն, ուրեմն, դէպի արդիւնաբեր եւ երջանկաբեր աշխատանքի դաշտ:

ՂԱՐԻՊ ՊԼՊՈՒԼ

«Պայքար», Սեպտեմբեր 8, 1972

«ՊԱՅՔԱՐ»Ի ՏՊԱՐԱՆԻՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՑԵՂԻՆ ԶԱՅՆԸ



Պատանի օրերուս, գիշեր մը երազիս մէջ ինծի երեւցաւ սրբազնասուրբ հայ մը՝ իր լուսապայծառ դէմքով, եւ իր բամբ ու հրաշագօր ձայնով հետեւեալ խօսքերը արտասանեց.

«Խեղճ ու բարի տղայ, դուն տառապող ժողովուրդի մը անպատուար անդէկ բեկոր, ո՛րքան ճիգ, ո՛րքան հոգեհալառ աշխատանք կը մատուցանես, ազգային շունչդ պահպանել կարենալու համար: Այս ի՛նչ ծանր լուծ է որ ճակատագրուած է ամէն մէկ հայու ուսին:

«Այն ահաւոր թուականին, երբ դուն եւ քեզի պէս բազմահարիւրներ այլազգիներու խարազանին ներքեւ ստիպողաբար ձեր ոսկեղինիկ լեզուէն սկսած էիք նահանջել, ես ձեզի հետ էի: Այդ ե՛ս էի որ ամէն օր ձեզի կը յիշեցնէի հայ մնալու ձեր պարտականութիւնը:

«Երբ դուն՝ հարկադրուած՝ սկսած էիք մայրենի լեզուդ մոռնալ, այդ լեզուն էր որ քու առջեւ խաւարակուռ ճամբուդ լոյս շնորհեց, եւ որպէս կանխեղ անմահական՝ քու քայլերուդ հետեւեցաւ: Ու սրտիդ ու հոգիիդ մութ անկիւններուն մէջ, անոր անթեղուած կայծերը քեզի ջերմութիւն ու կեանք սրկեցին: Հայոց այբ, բեն եւ գիմը, որոնց մանկութեան օրերուդ ծանօթացար, բոցավառ աստղերու պէս քու էութեանդ ընկերացան եւ քեզի հետ ամէն ամբարտաւան փոթորիկներու դէմ ըմբոստացան ու պայքարեցան, որպէսզի ամբողջապէս չկորսուիս դուն:

«Աստանդական կեանքի մէջ օտարանալու դաժան ճակատագրին սեւ մրուրը քու հոգիէդ սրբելու համար, նետուեցար ազատութեան աղէտալի հոսանքներու գիրկը, եւ գիւղէ գիւղ, աշխարհէ աշխարհ ոստոսելով՝ գտար կայան մը վերջապէս եւ որոշեցիր հաստատուիլ անդ, յաւերժացնելու համար գերդաստանիդ շառաւիղը եւ հայու հոգին:

«Նկատի առ, սակայն, թէ այս նոր ոստանը ուր բոյնդ պիտի շինես, հո՛ն ալ օտարանալու եւ ձուլուելու վտանգները նոյնքան եւ աւելի ահարկու են:

«Տասնեւվեց դար առաջ նախատեսելով հայ հոգին լափող այս ահաւոր վտանգները, յանուն ինքնապաշտպանութեան հայ ազգին յանձնեցի բոլոր դարերու մեծագոյն գէնքը, գէնք մը որ քանդելու ոյժը չունի, այլ աղամանդ մըն է, անգին ու թանկագին: Ան հայ հոգին լուսաւորող ու տեւականացնող ամենէն ազդու գիւտն է, զոր կը կոչենք հայուն այբուբենը:»

* * *

Այդ սուրբ մարդը յանկարծ անյայտացաւ: Ընդոստ արթնցայ. աչքերս բացի եւ գօրաւոր փափաք մը զգացի կրկին լսելու գինք:

Եւ իրօք իր ձայնը նորէն լսելու առանձնաշնորհումն ունեցայ:

«Հայը, օտար երկիրն քնքրու տակ, իր լեզուին ու մշակոյթին պահպանումով է որ պիտի յաւերժացնէ իր գոյութիւնը: Հայաստառ թերթերու անխախտ հրատարակումով կարելի կ'ըլլայ հայ սրտերը իրարու կապել: Եւ որքան ատեն որ ծովամոյն չէ եղած հայոց այբուբենի հրաշագործ գօրութիւնը, հայը կրնայ հայեցիօրէն ապրիլ տիեզերքի բոլոր անկիւններուն մէջ, հաստատ ու անվախ:»

Սուրբին լուսապայծառ դէմքը, որ շատ նման էր Մեսրոպ Մաշտոցի դէմքին, վեհաթուիչ արծիւի մը խրոխտ թեւերը թափահարելով վեր բարձրացաւ:

Այն ատեն վեր բարձրացայ եւ Արշակ Զօպանեանի «Գեղօն ի պատիւ հայ լեզուին»-ի հետեւեալ պարբերականը կարդացի:

«Ո՛վ մեր լեզուն, հայելի՛ մաքրութեան, գորովի ու արութեան, դուն մեր հոգին ես, դուն մեր գրահն ու մեր փառքն ես: Դուն ամենէն բարձր երեւոյթներէն մէկն ես տիեզերական ոյժին: Որքան ատեն որ կեանքը երկրի վրայ տեւէ, դուն պիտի շարունակես յաղթականօրէն քու վեհանձն ու պայծառ գնացքդ ժամանակին անծայր դաշտերուն մէջէն:»

. . . Եւ այս տողերէն մխիթարուած եւ համոզուած՝ կոչ կ'ընեմ հայու անուն կրող իմ ազգակիցներուս՝ որպէսզի իրենց զոհաբերութիւններով եւ հնչուն պատասխաններով օժանդակեն, «Պայքար»-ի տպարանին 100 հազար տոլարի արշաւը յաջողութեամբ պսակելու համար:

«Պայքար», 1975?

ՔԱՂՑՐ ԼԵԶՈՒ ՀԱՅԿԱԶԵԱՆ



Մայր աստուածատուր, դուն քաղցրահնչիւն եւ հօրաշունչ բարբառ հայկազեան:

Բխած մօրս թանկագին շրթներէն, հպեցար իմ սրտիս լարերուն, երբ ես հանգստուէտ օրրանիս մէջ անմեղօրէն ձեռք կ'երկարէի արեւի ճառագայթներուն, շլացած անոր գրաւիչ փայլէն: Եւ դուն մօրս ձայնին հետ ներդաշնակուած աւելի հօր թուեցար քան այն լոյսը որ երկինքէն կուգար: Կարծեցի թէ հոգեհաճ ու մեղրահոս նուազ մըն էր որ մայրիկիս էութենէն կը բխէր: Այդ սկզբնական պահէն ի վեր, քու քաղցրալուր հնչիւններդ, սրտիս ամենէն խորը թաղուած, անվերջ կը յուզեն կեանքիս ովկիանոսը:

Ժամանակը անզգալաբար սահեցաւ: Քանի՛, քանի լիալուսիններ երկնակամարիս վրայ ծնան ու մեռան: Ես մեծցայ: Եւ որպէսզի կեանքիս բոլոր օրերուն հետ դո՛ւն ալ ինծի հետ ըլլաս, եւ որպէսզի ես քու օրհնեալ լոյսովդ առաջնորդուիմ, զիս տարին գիտութեան խորանի սրբազան աւազանին, ու հոն քու անմահական շողերովդ մկրտեցին զիս:

Փա՛նք էութեանդ ու գոյութեանդ:

Քու լուսաղբիւր նեկտարին երեսունեւվեց աղամանդեայ կաթիլները ըմպելով՝ իմ հոգիս անոնց լոյսովը ողողուեցաւ:

Երբ իմ հայրենի տնակէս բռնութեամբ զիս վտարեցին, դո՛ւն ալ որպէս մասնիկը իմ էութեանս, ինծի հետ գաղթեցիր տառապանքի ու խաչելութեան անյոյս հորիզոնները:

Եւ մենք՝ տարագրութեան մութ ու ասաւոր տարիներուն հոգիով ու էութեամբ իրարու միացած՝ միասին տարինք անմարդկային բոլոր անասանելի չարչարանքները: Թէպէտ պահեր եղան որ դուն սրտիս խորը, մէկ անկիւնը լուութեան դատապարտուեցար: Կեանքիս ուղին, սակայն, քեզմո՛վ լուսաւորուած՝ ես քալեցի աննկուն ու անվեհեր կամքով մը, միշտ դէպի յուսալից ու բարի արեւածագը:

Քու մեծութիւնդ փառաբանելուս համար, բորենիներ զիս գանակոծեցին, բայց դուն սրտէս դէպի գանկս, գանկէս դէպի սիրտս ուղեւորութեանդ պահուն աննուաճելի զօրութիւն մը շնորհեցիր ինծի: Եւ ես քեզմով զօրացած՝ տոկացի աւելի ծանր խաչելութիւններու քան խաչեալ Աստուած Որդին:

Յարգա՛նք ու երկրպագութի՛ւն քեզ, ո՛վ իմ սրբազնասուրբ ու քաղցր լեզու հայկազեան:

Վաթսուն գարուններ ետք, իմ հոգիիս հետ դո՛ւն ալ տարագիր աստղ մը, օտար երկինքներու վրայ մերթ կը բոցավառիս որպէս սրբազան խարոյկ եւ մերթ ալ կը բոցկլտաս մոխրածածկ կրակի մը պէս:

Այս օտար ու դաժան երկինքներու տակ պանդուխտ հայեր հազիւ բուռ մը աղամանդներ՝ թէպէտ կը ձգնին իրենց փայլը յաւերժացնել, բայց ի՞նչպէս կարելի է այդ ընել բազմամիլիոն աստղերու շլացուցիչ շողերուն ի տես:

Ժամանակը իր դաժան ժանիքներով ատենն անգամ մը մահացու հարուած մը կ'իջեցնէ մեր հէք աստղիկներուն, որոնցմէ ոմանք ասուպներու պէս կը փչրուին ու անհունին մէջ կ'անհետին, եւ անոնց հետ քու էութենէդ ալ փչրանք մը կ'իյնայ, աւա՛ղ:

Փա՛ռք վերածնած հայրենիքին: Հոն դուն պիտի ապրիս եւ արեւի կենսատու ճառագայթներովդ անմահութիւն պիտի շնորհես ազգիս հայոց բոլոր զաւակներուն, որոնք քու յաւերժութեանդ անյողդողդ պահակներն են:

«Պայքար», 1975

ՎԵՐՁԻՆ ԸՆԹՐԻՓԸ



Խաղաղասէր ու բարեպաշտ ընտանիք մը, սեղանին շուրջ բոլորուած՝ ճաշելու կը պատրաստուի: Ճաշը սկսելէ առաջ ընտանիքին հայրը կ'աղօթէ. «Փառք քեզ, երկնաւոր բարի Աստուած, որ մեր տունը վտանգէ գերծ պահեցիր ու շնորհեցիր մեր այսօրուան հացը, որ ու . . . տ . . . »: Իր աղօթքին վերջին բառը՝ «ուտենք»ը չկրցաւ լրացնել: Պիտի աւելցնէր նաեւ «եւ յաւիտեանս փառաբանենք քու սուրբ անունդ»: Ուղեկորոյս հրթիռ մը իր նշանակէտին չհասած, ինկեր էր այդ սրբակեաց ընտանիքի տունէն ներս: Ակնթարթի մը մէջ մեռած էին հայր, մայր եւ վեց տարեկան մանչ զաւակը: Փոքրիկ աղջնակ մը՝ հազիւ վեց տարեկան, ձախ ձեռքը փշրուած՝ գետին ինկած, օգնութիւն կ'աղերսէր:

Հիւանդատար կառքը գինք կը տանի բուժարան, ուր հարիւրաւոր վիրաւորեալներ ցաւատանջ կը տառապէին:

Խեղճ աղջնակը անդադար կուլայ, կը պաղատի, կ'ուզէ իր հայրը, իր սիրելի մայրը եւ մա'նաւանդ իր խաղընկեր եղբայրը:

Վեց գարուններ ունի իր կեանքին կապուած: Ան տակաւին չի գիտեր թէ այս լայնատարած երկրագունդին մութ խորշերուն մէջ իրեն նման բիւրաւոր դժբախտներ կան: Թէ ատեն ատեն եղբայրասպան կռիւներ կը բռնկին: Այդ անիմաստ կռիւներուն զոհ կ'երթան բիւրաւորներ, մանուկ, տարեց, հիւանդ ու անկար, ինչպէս նաեւ բարեպաշտ եւ աստուածավախ մարդիկ:

Իր մեծ հայրը, մեծ աղէտի վերապրողներէն մին, Լիբանան հաստատուած էր: Իր հայրն ու մայրը այդ երկրի լուսաշող արեւին տակ ծնած ու մեծցած ըլլալով, չէին ճանչնար ուրիշ երկիր եւ այլ կեանք:

Լիբանան . . . : Երբեմնի դրախտ կարծեցեալ երջանիկ երկիր, այսօր տխուր ու սրտակեղեք պատկեր մը կը ցուցադրէ: Երկիր մը, ուր բնակչութիւնը հաւասարապէս մեծ թշուառութեան մատնուած կը տառապի:

Որբացած աղջնակը չի կրնար տրամաբանել թէ չար եւ ընչաքաղց բուռ մը մարդիկ փողոց ինկած, կը կոտորեն ու կը թալանեն երէկուան իրենց բարեկամներն անգամ:

Մանուշակ — այս էր իր անունը եւ իսկապէս հեզ ու համեստ մանուշակ էր — աչքերը փակած քնանալ կը փորձէ: Յանկարծ քովընտի սենեակէն ձայն մը կը լսէ. մեծ մարդու ձայն մը՝ որ գրեթէ կը մռնչէր. «Սա ո'չ պատերազմի կը նմանի եւ ոչ ալ քաղաքացիական կռիւի, այլ պարզապէս ոճրագործութիւն է: Քանի մը խելագարներ եւ օրինազանց մոլորեալներ աննպատակ դատ մը կը հետապնդեն: Ա'խ, որքան ծաղիկ հասակներ փճացան ու տակաւին խաղաղութիւն չունեցանք»:

Մանուշակ իր ծնողքին ողջութեան շատ անգամներ անոնց հետ ծունկի եկած եւ աղօթած էր Աստուծոյ: Հիմա, որ որբութեան մակդիրը ազուցուած էր իր անունին, առաւել անկեղծութեամբ կը սիրէր աղօթել:

Խեղճ որբուկը իր մահիճին մէջ ծնրադիր, աչքերը դէպի երկինք յառած հագիւ լսելի ձայնով մը կը մրմնջէ:

«Ո՛վ Տէր, Արարիչը տիեզերքին, ստեղծիչը բոլոր արարածներուն, ինչո՞ւ չարն ու բարին նոյն շրջանակին մէջ կ'ապրին: Ո՞վ պիտի հսկէ այս անուղղաներուն եւ զսպէ զանոնք: Աստուած պապա, ես առանց հայրիկի ու մայրիկի ի՞նչպէս պիտի մեծնամ . . . »:

Մանուշակ երբ իր սրտաբուխ աղօթքը վերջացուց ու փորձեց քնանալ, կարծես քաղցրաչունչ ձայն մը լսեց, որ կ'ըսէր.

«Ո՛վ դուք, տանջահար ծաղիկ կեանքեր, ձեր փճացումը գիս ալ կը յուզէ ու կը խռովէ: Ծիչդ է որ ես մարդը ստեղծեցի եւ ամբողջ աշխարհ մը շնորհեցի իրեն, որպէսզի ան իր լուրջ աշխատանքով ու իմացական գորութեամբ դրախտի վերածէ իր ոստանը: Իր մտքին տուի երեւակայութիւն ու թռիչք, եւ իր բազուկներուն՝ անսպառ ոյժ: Նաեւ գինք օժտեցի հօր բանականութեամբ, որպէսզի չմոլորի: Այսպէս, առաջին մարդը երբ աչքերը բացաւ եւ աշխարհը տեսաւ, կատարուած հրաշակերտութեան մասին իր գոհունակութիւնն ու սքանչացումը յայտնեց: Այդ օրուընէ աշխարհը կապեցի օրէնքի զսպանակի մը, որ ամէն բան այդ օրէնքին ենթարկուի եւ անոր ծիրէն չչեղի: Օրինազանցութեան մը արդիւնքը պիտի ըլլար թշուառութիւն ու տառապանք»:

Մանուշակ չգիտցաւ թէ ձայնը ուրկէ՞ կուգար եւ ո՛վ էր խօսողը: Բայց սիրեց այդ քնքուշ ձայնը եւ համարձակօրէն տուաւ հետեւեալ պատասխանը.

«Ո՛վ ես դուն, ուրկէ՞ կը խօսիս: Եթէ դուն իմ բարեգութ Աստուածն ես, աչք մը պտտողը սա Լիբանանի վրայ եւ զթա՛ աղէտահար ժողովուրդին: Տե՛ս, տուներ կը կործանին, բիւրաւոր մարդկային կեանքեր կը փճանան: Զէնքերու անվերջ խլացուցիչ պայթիւններ եւ հրթիռներու որոտումներ կը լսուին, որոնք զարհուրելի հետեւանքներ կը պատճառեն: Ո՛հ, ես սիրելի մայրիկս կ'ուզեմ . . . աղբարիկս կը կարօտնամ: Ես դեռ ծաղիկի կոկոն՝ արեւին օրհնութիւնը չվայելած չար ոգիներ ոտնահարեցին գիս: Տե՛ս, փոքրիկ եւ արդար մանուկներ հաց կ'ուզեն, ջուր կը խնդրեն: Հիւանդը դեղ ու դարմանի պէտք ունի: Իսկ մահամերձը «նախ կեանքը, ապա լացող մը իր վրան»: Այս բոլորին ո՛վ պիտի նայի ու խնամէ: Տէ՛ր, եթէ դուն ես գիս ունկնդրողը, կը պաղատիմ որ անմիջական դարման մը տաս այս թշուառութեան: Բիւրաւոր վիրաւորներու ու տառապողներու լացերուն ձայները ականջներս կը ծակծկեն: Մարդիկ իրենց բոյներէն հալածուած թռչուններու նման անտուն ու անբոյն թափառականներ դարձած են եւ քու ողորմութեանդ կը սպասեն, ո՛վ իմ Տէր Աստուածս»:

Մանուշակ այս բոլորը մրմնջելէ ետք աչքերը փակեց: Կը ջանար քնանալ, սակայն կրկին միեւնոյն քաղցր ձայնը հասաւ իր ականջներուն, որը կ'ըսէր. «Դարեր առաջ, քանի՛ քանի բարոյագէտներ եւ իմաստուն փիլիսոփաներ զրկեցի աշխարհ: Անոնք հատորներ գրեցին մարդերը դաստիարակելու եւ երջանկացնելու համար: Բարեմտութեամբ օժտուածներ պահ մը հետեւեցան բարոյագէտներու պատգամներուն, ապա՝ դիրք փոխեցին: Մարդ էակը իր իմացականութեան գորութեամբ կրցած է բնութեան մութ գաղտնիքներուն տիրանալ, բայց չէ կրցած տիրել երջանիկ կեանք մը ապրելու գաղտնիքին»:

Յոգնած տանջահար խեղճ աղջկան քունը իր աչքերը փակած էր: Ա՛լ չէր լսեր իր խօսակցին քարոզին վերջին մասը:

Այժմ կը գտնուէր երազներու աշխարհին մէջ: Կը տեսնէր թէ ունեւոր մարդիկ թշուառին դժբախտութիւնը մեղմացնելու կ'աշխատին: Կը տեսնէր թէ կարեկցող սիրտը աղաւնիի կերպարանք առած երկինքէն կ'իջնէր հարուստներու

եւ անտարբերներու սրտերուն դռները բախելու եւ ըսելու անոնց՝ թէ Աստուծոյ կամքն է որ անտարբերներ իրենց թմբիրէն արթննան եւ ունեւորներ չքաւորներուն օգնեն, անօթիին՝ հաց եւ մերկին՝ զգեստ հայթայթելով:

Մանուշակ կը տեսնէր թէ քարէ ու պողպատէ սիրտ ունեցողներ կը խոնարհէին Աստուծոյ կամքին առջեւ: Հակառակ անոնց բարեսրտութեան ու բարեկամեցողութեան՝ թշուառութիւնը չէր հեռանար, մահացու գէնքերը չէին լռեր:

Աղջիկը իր երազին մէջն անգամ իր աներեւոյթ խօսակցէն կը խնդրէր որ գթայ տառապող մարդկութեան:

Երազը կը շարունակուէր: Որպէս թէ տարիներ սահած ըլլան: Ինք մեծցած արդէն, պատկառելի ծերունիի մը հետ աւերակներուն մէջէն կը քալէր եւ բոլոր մոլորեալներուն հսկայածաւալ Աւետարան մը կը յանձնէին, որուն մէջ ոսկի տառերով գրուած էր մարդկայնական հետեւեալ ազդու պատգամը.

«Վրէժ չպահես քու ժողովուրդիդ գաւակներուն դէմ, հապա, ընկերդ սիրես անձիդ պէս»:

Մանուշակին տունէն ներս, ճաշասեղանին վրայ հացն ու ապուրը դրուած տեղերնին կը սպասեն: Ո՞վ պիտի միջամտէ որ այս սրտամորմոք դէպքէն ետք վերջին ընթրիքներ չպատահին:

«Պայքար», 1976

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԶԱՐԹՕՆՔԸ



Քանի մը դարեր շարունակ Հայաստան բաժնուած մնաց տարբեր տէրութիւններու միջեւ. արեւմտեան մասը՝ թուրք իշխանութեան ծանր թաթին տակ. իսկ պարսկական կառավարութիւնը կը տիրապետէր արեւելեան Հայաստանին, որ 1828 թուականին ազատագրուեցաւ ցարական զինուորներու յաղթանակով:

Հասկնալի է, անտարակոյս, որ վերոյիշեալ երեք պետութիւններու տիրապետութեան շրջանին, հայ մշակոյթը գրեթէ հնարաւորութիւն չունեցաւ ծաղկելու ու զարգանալու:

Հակառակ այն իրողութեան որ խիստ գրաքննութիւն գոյութիւն ունէր, բայց եւ այնպէս 1848էն մինչեւ 1870ական թուականները, Գրիգոր Օտեանի եւ Մատթէոս Մամուրեանի նման իմացական կարողութեամբ օժտուած ազատատենչ հայեր իրենց լուսաւոր հոգիներէն պտղունց մը լոյս կաթեցուցին հայ արուեստի անդաստանին վրայ: Նոյն հորիզոնին վրայ կար Մկրտիչ Պէշիկթաշլեան, որ իր լուսարծարծ գրիչով հայ մշակոյթին կը յանձնէր հոգեհաճ քերթուածներ: Ապա՝ հայ երկնակամարին վրայ երեւցաւ պատանի այլ հանճարեղ նոր աստղ մը, յանձին Պետրոս Դուրեանի:

Այսուհանդերձ, անժխտելի իրականութիւնն էր որ՝ հայ տաղանդը դարերով լուսութեան դատապարտուեցաւ, քանի որ բռնակալ տէրութիւնները չէին հանդուրժեր հայ մշակոյթի ծաղկումին:

Հայուն խանդեռանդ տաղանդը, ուրեմն, լուեց ակամայ (բայց մնաց արթուն) եւ հետեւեցաւ արտաքին աշխարհի մեծագոյն գրողներու գործերուն: Ու երբ ազատութեան ճառագայթները նշմարելի դարձան, հայ գրողը իր գրիչը թաթիսեց իմաստութեան թանաքամանին մէջ եւ արուեստի հրապուրիչ գործերով ողողեց հրապարակը:

Ի՞նչ էր այդ ազատութեան ճառագայթը: Ոչ ուրիշ բան, այլ թրքական սահմանադրութիւնը, որ թէ՛ կեղծ էր եւ թէ՛ ժամանակաւոր: Այսուհանդերձ, այդ նոր շունչին տակ, հայ գրողը հզօր թափ մը տուաւ իր ստեղծագործութեանց, որով հայ մշակոյթը ծաղկեցաւ ու զարգացաւ: Այդ շրջանը ոմանց կողմէ որակուեցաւ հայ մշակոյթի երկրորդ Ոսկեդարը:

Սահմանադրութիւնը հուշակուած օրերուն, հայ մտաւորականութիւնը, փոքր ու մեծ տաղանդներ հաւաքուեցան Կ. Պոլիս: Եւ Պոլիսը դարձաւ հայ հանճարին ձուլարանն ու հրաշակերտութեան բազկերակը:

Ազատութեան շեփորին ձայնը արեւմտեան Հայաստանէն կը հասնէր արեւելեան Հայաստան, ուր տարիներ առաջ Միքայէլ Նալպանդեան իր ազատաշունչ փողը հնչեցուցած էր հետեւեալ իր երգով:

Ազատն Աստուած այն օրից
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգեւել:

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ' կրկնեմ
Անդադար ազատութիւն:

Դժբախտաբար ցարական կառավարութիւնն ալ՝ երկաթէ շղթաներով ազատութեան թեւերը կապած՝ կը հալածէր ու կը բանտարկէր բոլոր անոնք որոնք կը յանդգնէին ազատօրէն ըսել իրենց խօսքը: Բանտարկուեցան Մ. Նալպանդեան, Յ. Թումանեան, որ իր գլուխ-գործոց քերթուածներէն մէկը՝ «Կաթիլ մը մեղր»ը գրեց բանտին մէջ: Եւ բանտարկուեցաւ նաեւ վիշտի երգիչ Ա. Ահարոնեանը, որ պիտի գրէր:

Սեւ խաւարը իմ ընկերն է անբաժան.
Ես չգիտեմ ինչ ասել է պայծառ օր,
Բայց այսօրուան խաւարն է խոր, հոգեհան.
Դիակները փսփսում են անաւոր,
Եւ պատմում են իրենց ցաւերն անպատում,
Որից Աստուած գուցէ դողայ երկնքում:

Անմահն Վարուժան իր գրչեղբօր համար կը գրէր.

Հոն կապանքի տակ հայրենիքն ունի հանճար մ'ողջակէզ
Գրիչը մատերուն մէջ խորտակեցին ճառագայթի պէս:

Կասկած չկայ որ՝ արեւմտեան թէ՛ արեւելեան Հայաստանի մէջ հայ հեղինակներու բանտարկութեամբ մեր ազգային մշակոյթը մեծապէս կը տուժէր: Սակայն, ինչպէս վերեւ նշեցինք, թրքական նոր սահմանադրութեան գոյառումով՝ հայ գրողին առջեւ կը բացուէր նոր ուղի մը, ուրկէ՛ յառաջանալով ան սկսաւ ստեղծագործել ակներեւ յաջողութեամբ:

Բայց կար գաւառը. Ակն, Վան, Տիգրանակերտ եւ այլ վայրեր: Գաւառի գրականութեան հանդէպ մեծ քաղաքի կարծիքը թիւր էր եւ թերահաւատութեան շունչ մը կար այն բոլոր գրողներուն հանդէպ, որոնք կը բացակայէին Կ. Պոլսէն:

Գաւառ կոչուած հեռաւոր մէկ վայրն ալ խարբերդն էր, որուն մէկ մութ անկիւնէն անծանօթ անուն մը գլուխ-գործոց երգ մը կը յանձնէր լոյս աշխարհին, երգ որ խարբերդի բերդէն ու ոսկի դաշտերէն մինչեւ Պոլսոյ խաներուն մութ անկիւնները ապրող սիրահար հոգիներու շրթներուն վրայ երկար ատեն յամեցաւ որպէս քաղցրահամ մեղր: Նոր Պետրոս Դուրեան մըն էր ան, Գարեգին Պէշկէօթիւրեանը, որուն հոգիէն կը բխէր:

Եկ, իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին,
Նիհար շրթներդ, ո՞հ, երերուն,
Դիր դալկահար իմ շրթներուն,
Երգենք ու լանք, լանք ու երգենք տրտմագին:

Եւ ուրիշ հնչեղ ձայն մը կը հասնէր Կ. Պոլիս: Ատիկա մեծ դաստիարակ թլկատինցիին ձայնն էր, որ գիւղին կեանքը կը ներկայացնէր պատկերալից ոճով: Ահա օրինակ մը իր մտածումներէն.

Թագաւորն ի՞նչպէս է, մամի, թագաւորն ալ մա՞րդ է մեզի պէս, ու ի՞նչպէս, ան ալ հաց կուտէ՞, ջուր կը խմէ՞, բնական տունն ալ ի՞նչպէս մեծ ու աղուոր է արդեօք:

Արտաշէս Յարութիւնեան իր հրաշունչ յօդուածով կը գռռար որ գաւառը չմոռցուի, այլ գիւղագրութիւնն ալ մաս կազմէ հայ մշակոյթի վերելքին: Եւ իսկապէս գաւառի հեռաւոր գիւղերէն շեփորներու ձայնը կը հասնէր Կ. Պոլիս: Ռուբէն Զարդարեան աւելի ուժեղ հնչեցուց իր շեփորը քան՝ պոլսահայերէն ոմանք: Անոր «Յայգալոյս»ը նոր շունչ մըն էր, որուն մէջ գիւղական կեանքը իր հարազատ պատկերներով կը ցոլցար: Անոր «Բռնաւորին արցունքը», «Եօթը երգիչները», «Հօրենական տունս», «Պուտ մը ջուր» պատմուածքները ունին խորք եւ փիլիսոփայական մտածում, որոնք գրուած են պերճաբարբառ հայերէնով:

Գաւառէն կը լսենք ուրիշ Ռուբէնի մը ձայնը.

Հոգիս, սակայն, կը յիշէ քեզ.
Դո՛ւ, ծաղկաւէտ գիւղիս ճամբան,
Ուր քալէինք գառնուկս ու ես,
Դէպի պուրակն ու բուրաստան
Անմեղութեան երագին պէս:

Այս մէկը Ռուբէն Որբերեանն էր, որուն համար Զարդարեան կը գրէր. «Բոլոր յետին մանրամասնութեանց մէջ իսկ մշտնջենապէս կը մնաս բանաստեղծ»:

Կը տեսնենք որ գաւառն ալ իր տուրքը տուած է հայ մշակոյթի գոյատեւման:

Եզրափակենք. Կ. Պոլիս թէ՛ գաւառը ապրող տաղանդաշատ գրագէտներ քանի մը տարուան «ազատութեան» շունչին տակ իրենց կեանքի գնով յաւերժական նպաստ մը բերին հայ մշակոյթի զարթօնքին:

Փա՛նք ու յարգա՛նք իրենց անմոռանալի եւ անուրանալի վաստակին:

«Պայքար», 1977

ՎԵՐԱԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ



Գարուն է:

Վերակենդանութեան հրաշագործ շունչէ թելադրուած ու քաջալերուած, ծիլ ու ծաղիկ երջանիկ տրամադրութիւնով օծուն լոյս ու ժպիտ կը սփռեն իրենց շուրջ:

Գարուն է:

Փողփողուն արեւը իր թաւշային կենսատու ճառագայթներով բնութիւնը ողողած է երջանկութեան անհաւատալի խոստումներով:

Մօտիկ անցեալին մեր գիւղին արեւը կորսուեր էր կարծես. ուստի մեր գիւղը ձիւնին ու փոթորիկին հարուածներուն տակ կը հեւար ու կը տառապէր, նման այն մարդուն, որ հոգեվարքի ցաւերով կը բռնուի:

Այժմ արեւը իր ոսկի շողերով ներկած է քիւ ու տանիք, դաշտ ու լեռ: Եւ իր ջերմութենէն մեր սիրտերը անհուն երջանկութիւնով կը բաբախեն: Փա՛ռք արեւի լոյսին ու ջերմութեան:

Գարուն է:

Բնութիւնը ծերութեան իր հին ու սգեղ ձեռքերը ետին թողած, անգամ մը եւս լոյսին մէջ կը խայտայ, եւ իր ուրախութենէն կը վազէ, կը պարէ նման այն պատանիին, որ անյուսօրէն կորսուած իր սիրուհին կը վերագտնէ: Եւ նման այն երիվարին, որ, իր աչքերը ախոռի մութին վարժուած, երբ դուրս կը բերուի եւ յանկարծ իր աչքերը արեւի լոյսը կը խմեն ու իր լայն թոքերը գարնան հեշտաւէտ ու զովաշունչ օդը շնչելով կը լայնան ու կը կենսաւորուին, այս անծանօթ նոպաներու շոյանքէն ան իր ուրախութենէն կը դառնայ անզուսպ ու անհնազանդ:

Գարուն է:

Ու գարնան օրհնեալ շունչէն յարութիւն առած են չոր ու ցամաք պարտէզներ, պտղածառերու ճիւղերուն վրայ կոկոններ լայն ժպիտով մը կ'աւետեն մեզի կեանքի յաղթանակը մահուան չար ժանիքին ու անոր անյագ ախորժակին դէմ:

Գարուն է:

Թռչուններ՝ իրենց գաղթէն վերադարձած, ճռուողիւններով ու երջանիկ ապրումներով կը նորոգեն իրենց հին ու խարխլած բոյները եւ անսալով բնութեան մեծ խորհուրդին ձու կ'ածեն, ձագեր կը բերեն աշխարհ, թերեւս իրենց տոհմը յաւերժացնելու տրամաբանութեամբ:

Գարուն է:

Կայ մարդը, բնութեան ու գերագոյն զօրութեան մը հրաշակերտ առարկան, գլուխգործոց մը, որ մտածելու ու գործելու աստուածային շնորհներով օժտուած է: Կը ծրագրէ ու կը գործէ, կը շինէ ու կը քանդէ, իր քանդածը կրկին շինելու միշտ պատրաստ: Ինչպէս որեւէ շնչաւոր էակ, մարդն ալ գոյատեւելու տենդէն բռնուած՝ ծնունդ կուտայ գինք յաւերժացնող սերունդներու: Կը հաւատայ թէ՛ «կեանքը շարժում է եւ շարժումը կեանք», ուստի անդադար զբաղուած է,

չենթարկուելու համար այն տաղտկալի պահերուն, որոնք կապ ունին իր առօրեայ կեանքին հետ:

Վերոյիշեալ բոլոր պատկերներէն զատ, կայ այլ պատկեր մը, կախարդական ու հմայիչ, որ իր կենսանորոգ ներկայութիւնով մեզ կը խանդավառէ եւ երջանկութիւն կը պարգեւէ: Ատիկա մարդկային ցեղը յաւերժացնող մեր մանուկներն են, մարդկային կեանքը վերակենդանացնող մեր գարուններու ծաղիկները, որոնք միշտ գարնանային տրամադրութիւնով օժտուած եւ գարնան կենդանարար եւ կենսատու արեւէն ուժեղացած միշտ ջրվէժի հոսանքն ի վեր կը թռչտին կարծես, նման յանդուզն եւ խելացնոր ձուկերուն:

Գարուն է:

Բնութիւնը՝ իր խոր մրափէն արթնցած՝ կը ներկայանայ մեզի աստուածային պատկերով մը, որուն շնորհիւ ապերջանիկը քիչ մը երջանկութիւն ու անմխիթարը քիչ մը մխիթարութիւն կը ստանան, եւ մարդիկ իրենց մսած սրտերուն մէջ քիչ մը լոյս ու ջերմութիւն կ'ամբարեն, այս գարնան կենսատու արեւոտ օրերէն:

Գարուն է: Վերակենդանութեան շունչ մը կայ . . . : Փա՛ռք արեւին եւ անոր կենդանարար ջերմութեան:

«Պայքար», 1977

ՄԵԾ ԱՍՏՂ ՄԸ ՇԻՋԵՑԱԻ ՀԱՅՈՑ ԵՐԿԻՆՔԷՆ



Կոչնակներու տխուր զօղանջը կսկծալի ու անհաւատալի գոյժ մը տարածեց հայ տուներէն ներս. մահազոյժ մը որքան տխուր՝ այնքան ցնցիչ:

Ի՛նչպէս հաւատալ թէ՛ այդ կենսախայտ ու առողջ բանականութեամբ օժտուած անձը մահուան չար թաթով լռութեան դատապարտուած է առ յաւէտ . . . :

Իր անունը մեզ հպարտացնող երգի մը նման մեր շրթներէն չհեռացաւ:

Սարուխան. ո՞վ չէ լսեր այս անունը, որ քառասուն հազար նկարներու վրայ մեծ աստղի մը պէս փայլեցաւ:

Բազմահազար հայեր ու օտարներ հիացումով դիտեր են իր հայաշունչ երգիծանկարները եւ կամ միջազգային թատերաբեմի վրայ դիւանագիտութիւն խաղացողներու դիմանկարները, միշտ իւրայատուկ ձեւով նկարուած:

Սարուխան. ան ոչ միայն մեծ արուեստագէտ մըն էր, այլ էր նաեւ մեծ դաստիարակ մը, գրիչի ու վրձինի տէր վարպետ մը:

Իր դաստիարակ ըլլալը հոս մէջբերումով մը հաստատենք. պահ մը լսենք իր խօսքերը՝ բանգէտի մը նկարագրութիւնը կատարող.

«Բանգէտ մը, շատերէն մէկը, հաւաքոյթէ մը ետք բռնեց զիս եւ յանկարծ հարցուց.

« — Բարեկամիս հետ կը վիճաբանէի՞նք: Ան կը պնդէր թէ հայ նկարիչները նկար կը ծախեն իրենց կազմակերպած ցուցահանդէսներու ընթացքին. իրա՞ն է:

« — Կատարելապէս:

« — Օտարներուն անշուշտ:

« — Օտարներուն ալ, բայց մա՛նաւանդ հայերուն:

« — Անկարելի բան է, հայերը նկարի դրամ չեն տար. բայց տե՞ս, օտարները:

« — Կը սխալիս բարեկամ, հայերը այսօր լաւագոյն նկար գնողներու համայնք ճանչցուած են, մինչեւ իսկ իրենց՝ օտարներու խոստովանութեամբը:

« — Չեմ հաւատար:

« — Այդպէս պնդելու մասնաւոր պատճառ մը ունի՞ք անշուշտ. յաճա՞խ կ'այցելէք նկարահանողէսներ: Հայ կամ օտար:

« — Այցելելու ի՛նչ պէտք կայ. ամէն բան գիտեմ:

«Այդպէս է բանգէտը. ամէն բան գիտէ եւ պէտք չունի «գիտցածը» վերստին գիտնալու»:

Խոնարհենք մեր գլուխները եւ բացագանչենք. կեցցէ՛ Սարուխան:

Մեր հանգուցեալ ընկերը կը հաւատար թէ հայ կեանքի մէջ կազմակերպուած թիւնը զօրութեան երաշխիք մըն է: Եւ իր խօսքերով ու գործերով ան հաստատեց իր մտածումները: Ուսումնասիրելով չէզոք մարդոց մտայնութիւնը եւ անոնց ներաշխարհին թափանցելով արտաբերեց անոնց իսկական արժէքը: Թէ՛ իր գրի-

չով եւ թէ իր վրձինով: Եզրակացնելով թէ «չէզոքը մէկ ջուրով կը լուայ թէ՛ չարագործները եւ թէ՛ ոստիկանը»:

Հինգ տասնեակ մը տարիներ միջազգային ցուցահանդէսներու ընթացքին ան եղաւ հայ ժողովուրդին դեսպանը, Լոնտոն, Փարիզ, Մոնթրէալ եւ ուրիշ մայրաքաղաքներ ցուցադրելով իր երգիծանկարները:

Ան հաւատաւոր կուսակցական մը եղաւ Ռամկավար Ազատական կուսակցութեան ընտանիքէն ներս: Եւ որպէս դեկավար անդամ մը քանիցս ստանձնեց պատասխանատու պաշտօններ:

Ընկեր Սարուխանին հանդիպելէ շատ առաջ զինք ճանչցած էի իր վրձինի եւ գրչի ստեղծագործութիւններով, որոնց մէջ գտած էի իմաստուն սէրի եւ նոր մտածումներու իրական մարդը եւ անսակարկ ազգասէրը: Նաեւ՝ հայ ժողովուրդին արժանիքն ու արժէքները զնահատող ու փառաբանող անձը:

Ոչ միայն իրական մեծ արուեստագէտ մըն էր իր ասպարէզին մէջ, այլ գազաթ մը հայաշխարհի երգիծանկարիչներուն մէջ: Սերունդներ իր մեծութենէն հմայուած հետեւեցան անոր հետքերուն, փորձելով նմանիլ անոր արժեչափին:

1971 թուականին Հայաստանէն վերադարձիս Պէյրութ հանդիպեցայ, թէքէեան Մշակութային Միութեան 25րդ տօնակատարութեան մասնակցելու: Եղբայրաբար ողջագուրուեցանք Սարուխանին հետ: Իմ առաջին տպաւորութիւնս հիացում ու յարգանք եղաւ այդ մեծ արուեստագէտին հանդէպ: Խոնարհ մարդու երեւոյթին տակ տեսայ մեծ հոգի մը:

1973 թուականին, Ռ.Ա.Կ. Ամերիկայի եւ Գանատայի Շրջանակի 53րդ Պատգամաւորական ժողովին գլխաւոր ատենախօսը ինքն էր: Այդ պարագային իմ առաջին տպաւորութիւնս իր մասին վերահաստատուեցաւ: Նոյն թուականի Հոկտեմբերին՝ զինք հիւրասիրեցի իմ բնակարանիս մէջ: Ուրեմն այն մօտիկութիւնը ինձի առիթ ընծայեց որ զինք ա՛լ աւելի մօտէն ճանչնամ: Նախկին համոզումներուս վրայ գումարուեցան հետեւեալ բարեմասնութիւնները. թէ՛ ան մարդկայնական զգացումներով օժտուած բարի հոգի մը կը կրէր. նաեւ հայրենասիրական եւ ազգասիրական ոգի մը, որ ամբողջական հայաշունչ համանուագ մը ըլլար կարծես: Իր մեծութիւնը կը կայանար իր համեստ ու խոնարհ կեցուածքին մէջ: Ան բծախնդիր ու նախանձախնդիր հայ մըն էր, զոր պատիւը ունեցայ ճանչնալու:

Իր բարի յիշատակին առջեւ խոնարհելով կ'ոգեկոչեմ «Արքայութեան արժանի հոգիդ անվերջ թող առաջնորդէ հայ մոլորեալները: Հանգի՛ստ աճիւններուդ, եւ խունկ ու արցունք թարմ հողակոյտիդ»:

«Պայքար», Փետրուար 17, 1977

ՅԱՐԳԱ՛ՆՔ ՀԱՅՈՑ ՏԻՊ ՈՒ ՏԱՌԻՆ



Մանկութեան օրերուս՝ դեռ հազիւ մտերմացած ձեր յաւերժափայլ լոյսին — ո՛վ սեւ բախտ — յանկարծ մոռթ ու փոթորկալից ամպեր կուտակուեցան եւ ձեզ խլեցին ինձմէ: Այնուհետեւ, երկար տարիներ, լեռներ ու ձորեր չափեցի, որոնելով ձեր հետքը . . . : Խիճեր ու ապառաժներ վերցուցի, քննեցի, յուսալով գտնել ձեզ, ու որպէս կարօտալի հոգեհատորներ սեղմել ձեզ իմ անվհատ ու ջերմ կուրծքիս: Բայց աւա՛ղ . . . : Եւ սակայն, ներաշխարհային ձայն մը ձեր անմահութիւնը կը յանկերգէր անդադար եւ ես անկեղծօրէն հաւատացի անոր:

Եղան պահեր որ կը զգայի թէ դուք՝ որպէս անթեղուած կայծեր՝ իմ հոգիէս ներս յանկարծ պիտի հրահրուիք եւ նորէն ձեր բոցավառ լոյսէն՝ լոյս ու ջերմութիւն պիտի շնորհէք փոթորիկէն ջախջախուած իմ էութեանս:

Եւ այդ հաւատքը բնաւ զիս չլքեց: Թէպէտ ծանր ու տառապալից օրեր ապրեցայ, նոյնիսկ երբեմն ալ ա՛յնքան հոգետանջ, որ Յիսուսի Գողգոթման կը յիշեցնէր ինձի. եւ սակայն երկնային ձայն մը յամառօրէն կը հնչեցնէր ձեր աստուածային զօրութիւնն ու անմահութեան անսասանութիւնը:

Ու որքան կը յապաղէր ձեր վերայայտնութեան պահը, այնքան աւելի անմիթարօրէն հոգիս կը տառապէր ի ինդիր ձեր տեսքին:

Գիտեմ թէ դարերով դուք ալ հալածուեցաք, նախանձոտ ու չարամիտ մարդիկ ու չաստուածներ մահուան վճիռ արձակեցին ձեր բոլորիդ դէմ: սակայն ես հաւատացի թէ յաւերժական լուսատու աստղերը կարելի չէր մահացնել: Փա՛ռք ձեզի, ո՛վ դուք հայ հոգիին աստղերը շողշողուն. փա՛ռք որ անսասան մնացիք որպէս հայ հոգիին անառիկ բերդերն Հայկազեան:

Երկար տարիներ ետք վերջապէս գերութեան շղթաներու կապանքներէն ազատուած, հեռաւոր վայր մը, հայու մը տանը դուռը բախեցի: Եւ օտար լեզուով բարձրագոյ ըսի. «Հայ եմ ես» . . . :

Անոր կասկածոտ նայուածքը վրդովեց զիս:

— Հայ ըլլալդ պէտք է որ փաստես, ըսաւ ան:

Եւ դէն զնաց ու վերադարձին մատեան մը ձեռքին մէջ ինձի երկարեց եւ գոռ ձայնով մը՝ «Ա՛ռ եւ կարդա՛ . . . », ըսաւ ինձի:

Ո՛վ դուք սրբազան տառերն մաշտոցեան, երբ տարիներ ետք առաջին անգամ աչքերուս հանդիպեցաք, իմ էութեանս մէջ հայու հոգին հրճուեցաւ աստուածային խրախճանքով մը. եւ ձեր հրաշագործ մէկ արարքով շրթներուս կապանքը յանկարծակիօրէն փշրուեցաւ, ու ես համարձակօրէն յարեցի. «Եղբայր, հոս երեք գիրքեր կան որ ինձի ծանօթ են, ահա. այբ, բեն, գիմ», եւ հեկեկացի:

Արցունքներս երբ կաթեցան ձեր կանթեղին մէջ, ձեր լոյսը՝ փոխանակ մարմրելու՝ իսկոյն բոցավառեցաւ եւ իմ սրտիս ու հոգիիս նոր յոյս ու նոր լոյս

չնորհեց: Անկէ ետք՝ ձեզ իբր քաղցրահնչիւն երգ ընդմիշտ շրթներուս ու հոգւոյս վրայ պահեցի:

Այբ, բեն, գիմի անյաղթահարելի երեք կարապետները զիս առաջնորդեցին հայ դպրութենէն ներս, ուր ծանօթացայ հայ ազգին անմահութեան վրայ հսկող մնացեալ երեսունըերեք սուրբասուրբ պահակներուն անասան:

Այդ բարեբախտ օրը, դուք ինծի համար դարձաք երգ եւ սրբազան համանուագ, եւ շունչ մխիթարական:

Թող յաւերժ ապրին անոնք, որոնք ձեզմով կ'աղօթեն առ Աստուած եւ ձեր անմահական շունչով հայ ազգին յաւերժութիւնը կ'երգեն ու կը փառաբանեն այժմ եւ յաւիտեան:

«Պայքար», Հոկտեմբեր 28, 1978

ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ



Առանց բանաւոր պատճառի մարդիկ երբեմն յանկարծ կը դադրեցնեն իրենց բարի եւ օգտաշատ ծառայութիւնները եւ անտրամաբանականօրէն կ'որդեգրեն անսխորժ ու կատաղի դիրք՝ իրենց կեանքին թէ աշխարհին նկատմամբ: Իրենց զգացումներուն գերին կը դառնան, փոխանակ ապաւինելու իրենց պայծառ բանականութեան, որ կրնայ զիրենք առաջնորդել դէպի հոգեկան խաղաղութիւն՝ ուրախ ու երջանիկ պահերով համեմուած:

Աւելի'ն՝ փոխանակ վստահելու իրենց գիտակցութեան, անոնք կը տարուին իրենց ենթագիտակցութենէն, որ կ'առաջնորդէ զիրենք ոլորապտոյտ ու մութ կածաններու եւ անել հանգրուանի:

Ի հարկէ, եթէ փորձեն շրջադարձ մը կատարել, ոչ թէ դեղահատերով ու թմրեցուցիչներով, այլ իրենց բնատուր շնորհներով ու կամքի զօրութեամբ, այն ատեն ապահովաբար ինքնաճանաչման ճանապարհով անոնք պիտի հասնին իրենց նպատակակէտին, այսինքն՝ ինքնապաքինումի:

Հասկնալի է որ՝ տնտեսական անապահովութիւնը եւ երբեմն ալ անլոյս ու անյարմար շրջապատ մը կրնան վատ հակազդեցութիւն գործել այդպիսիներու հոգեկիճակին վրայ: Բայց չէ՞ որ մարդ կոչուած արարածը օժտուած է մտածելու եւ տրամաբանելու կարողութիւնով: Հետեւաբար, ան միաժամանակ ընդունակ է ինքզինք յարմարեցնելու ամէն տեսակ կացութեան: Ինչո՞ւ ուրեմն ումանք խոյս կուտան այդ տրամաբանական միջոցներէն եւ կը նախընտրեն մութին մէջ խարխափել, լոյսի ճրագ մը որոնելով հոն ուր ոչինչ կայ:

Իդձ, փափաք, նախասիրութիւն գոհելու պատրաստակամութիւն մը պարբերաբար օգտակար կրնայ հանդիսանալ, նոյն ատեն շրջապատը գուարթացնելով:

Յաճախ կը հանդիպինք անձերու, որոնք իրենց հզօր երեւակայութեան ոյժով իրենց համար ծնունդ կուտան հոգեկան ու մարմնային ցաւերու, որոնցմէ թէ՛ իրենք կը տառապին եւ թէ՛ իրենց հարազատներ: Մինչդեռ միեւնոյն երեւակայութիւնը, առողջ ուղղութեան մը հետեւելով, կրնար կառուցանել լուսաւոր յպարանք մը՝ բուրումնաւէտ ծաղիկներով շրջապատուած:

Երեւակայական ցաւերը կարելի է վանել, եթէ տառապողը ճիգ մը ընէ զբաղուելու այլազան նիւթերով, փորձէ հեռանալ այն մղձաւանջէն, որ զինք կը տառապեցնէ: Միթէ մանուկներու վրայ կատարուած միեւնոյն փորձը լաւագոյնս չ'ապացուցանե՞ր որ շեղումները կարգ մը պարագաներու տակ կրնային օգտակար հանդիսանալ:

Մարդ արարածը ստեղծուած է, այս ընդարձակ երկրագունդին վրայ կոխկռտելով քալելու համար: Կան խորհողներ, սակայն, որոնք կը կարծեն թէ՛ աշխարհը իրենց քամակին առած պէտք է քալեն մինչեւ իրենց տխուր հանգրուանը: Ով որ փորձած է այս երկրագունդը իր ուսերուն վրայ առնել թէ՛ հոգեպէս եւ թէ՛ մարմնով ընկճուած կը զգայ ինքզինք: Այդպիսի ողբալի

երեւոյթներու առջեւ մարդկային ընկերութեան վրայ բարոյական պարտք կ'իյնայ աչալուրջ հսկելու, որպէսզի աղէտը պատահելէ առաջ կարելի ըլլայ փրկել բոլոր անոնք որոնք փրկուելու բարի տրամադրութիւն յայտնած են:

Ծնած ենք լայն ու լուսաւոր աշխարհին մէջ, ապրելու եւ մեզի տրուած շնորհներով զայն ծաղկեցնելու համար, որպէսզի ապագայ սերունդներուն նպովքին չարժանանանք:

Երկինքէն երեք աստղ թող իջնեն երկիր. մէկը գրողին, միւսը ընթերցողին, իսկ երրորդն ալ օգտուողին համար:

ՂԱՐԻՊ ՊԼՊՈՒԼ

«Պայքար», Փետրուար 13, 1981

ԹԷ՛ ԹԱԳԱԻՈՐ, ԹԷ՛ ԾԱՌԱՅ



Քաղաքակրթութիւնը երբ տակաւին անծանօթ բառ մըն էր մարդ կոչուած արարածին, երբ մարդիկ քարայրներու մէջ բնակութիւն հաստատած կ'ապրէին, այդ մարդուն վիճակուած էր աշխատիլ ու հայթայթել այն ինչ որ կենսական էր ապրելու ու գոյատեւելու համար:

Կենթադրենք թէ այդ դարերուն այդ մարդը իր տան գլխաւորն էր, որ որսորդութեամբ ուտեստեղէն կը ճարէր եւ իր հնարամտութեամբ անասուններու մորթին զգեստ կը պատրաստէր, եւ ապրիլ կարենալու համար, գերմարդկային ճիգ կը սպառէր: Ի հարկէ իր քրտնաջան աշխատանքին իր մասնակցութիւնը կը բերէր նաեւ իր լծակիցը — տան մայրը:

Դժուար է քարայրաբնակ մարդոց կեանքին ու աշխատանքին հարազատ պատկերը տալ: Բայց մասամբ մեր երեւակայութեան վստահելով գէթ կրնանք ըսել թէ՛ այդ օրերուն մարդիկ աւելի քաջասիրտ, յանդուգն ու տոկուն էին:

Կարգ մը ընկերաբաններ կը հաստատեն թէ՛ ներկայ քաղաքակրթութիւնը 13րդ դարուն սկիզբ առած է եւրոպական երկիրներու մէջ: Իսկ տուն եւ ընտանիք կազմելու գաղափարը մարդուն հետ ծնած բնազդ մըն է, որ դարերու ընթացքին յեղաշրջումներով բարեկարգութեան հունին մէջ մտած է:

Երբ մարդը հայր ըլլալու բախտին կ'արժանանայ, ինքնաբերաբար քաղցր պարտականութիւն մը կը թառի իր ուսերուն վրայ: Ուստի գիտակցաբար եւ հարկադրաբար կ'ընդլայնէ իր պարտականութեան սահմանները: Բնազդը կը հարկադրէ, իսկ իմացականութիւնը կ'առաջնորդէ զինք աւելի ծանր ու կենսական պարտաւորութեանց:

Ըսուած է թէ «հայր մը իր տան թագաւորն է»: Ըլլայ թագաւոր թէ ծառայ, ան շատ կարեւոր դեր մը ունի կատարելիք իր տան յարկէն ներս, քանի որ իր ծառայութեամբ հանգիստ ու երջանիկ կեանք մը կը պարգեւէ իր զաւակներուն. իսկ իր թագաւորական դերով ան զանոնք կ'առաջնորդէ դէպի բարին, որպէսզի անոնք մարդկային ընկերութեան մէջ բարի դեր մը կատարեն:

Հօր մը կոչումը անհուն ու անսահման տիեզերքին կը նմանի, քանի որ իր բոլոր զոհողութեանց կարգին՝ ան պատրաստ է նաեւ նուիրելու իր կեանքը: Իր անսահման նուիրումով ու հոգածութեամբ է որ իր հարազատները ապահովութեան ու երջանկութեան ովասիսը կը վայելեն:

Հայր մը իր այգեստանին պահապանն է, իր պարտէզին մշակն ու պահակը: Ան իր արթնամտութեամբ կը հսկէ տան խաղաղութեան վրայ: Ան հաճոյքներէ կը զրկէ ինքզինք, բազում յանձնառութեանց առջեւ չընկճուիր, այլ կը փորձէ արժեւորել հայրական բարձր կոչումը:

Աստուածաշունչին մէջ կայ հատուած մը, որ թողութիւն կուտայ այն հօր, որ օրինազանցութեամբ իր զաւակները սովամահութենէ կը փրկէ, ինչու որ մարդասիրական գործ մը կատարելու մտահոգութեամբ էր որ ան կը գործէր նման մեղք մը:

Եւ մարդկային բարոյականը ի հարկէ կը դատապարտէ այն հայրերը, որոնք իրենց վաստակին մեծ մասը անպէտ հաճոյքներու համար կը վատնեն, զրկելով իրենց հոգեհատորները շատ մը կենսական պահանջներէ:

Իրական ու պարտաճանաչ հայր մը իր բոլոր տրամադրելի միջոցները գործի կը լծէ, որպէսզի իր հոգեհատորները սեւ օրերու չհանդիպին:

Ըսուած է թէ, մարդ կայ, մա՛րդ ալ կայ: Նմանողաբար կարելի է ըսել թէ՛ հայր կայ, հա՛յր ալ կայ: Յարգա՛նք այն բոլոր հայրերուն, որոնք կը գիտակցին իրենց կոչումին եւ լիովի կը կատարեն իրենց պարտականութիւնները:


Խրիմեան հայրիկ իր «Դրախտի ընտանիք» գրքին մէջ իրաւամբ գրած է.

«Տուն եւ ընտանիք փոքր թագաւորութիւն են: Թագակիրներն են հայր եւ մայր: Այս ընտանեկան յարկին տակ ո՛չ ոստիկան կայ, ո՛չ սուր եւ ոչ ալ բռնութիւն, այլ կայ հայրական սէր ու հոգածութիւն եւ մայրական գուրգուրանք»:

«Պայքար», Յունիս 18, 1981

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿԸ

(ՏՈՒՔԹ. ՆՈՒՊԱՐ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ
ԵՒ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ
ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)



Տոքթ. Նուպար Պերպերեան
(Լուսանկար «Պայքար» օրաթերթի)

Ո՞վ է ան որ լուսածագէն մինչեւ երեկոյեան տարածամերուն գրասեղանին փակած, գլուխը կախ, տեղական թերթերէ լուրեր կը քաղէ եւ կը թարգմանէ, հայ ընթերցողին մատուցանելու համար, եւ կամ նոր ստացուած անընթեռնելի յօդուած մը զոր պէտք է կոկէ ու սրբագրէ միշտ բծախնդրօրէն որ անթերի հայերէնով լոյս աշխարհին բարեւէ:

Հայ խմբագիրն է ան որ անխախտ հաւատքով քառասուն տարիներ սիրտ եւ աչքի լոյս տրամադրած է հայոց տիպ ու տառին, միշտ անխոնջ կերպով ու հաւատարմօրէն:

Գուցէ խորհողներ ըլլան թէ՛ այդ բոլորը խմբագիրին պարտականութեան մաս կը կազմեն: Մեր համոզումով՝ նախ առաքելութիւն մըն է անոր յանձնառութիւնը, ապա պարտականութիւն մը: Այսուհանդերձ, աստիկա ըլլայ պարզ աշխատութիւն թէ առաքելութիւն, ունի որոշ դժուարութիւններ, երբեմն հոգեմաշ եւ տհաճելի:

Օրինակ՝ աչքի առջեւ ունինք շատ տկար կերպով գրուած յօդուած մը, յաճախ նոյնիսկ անհասկնալի. հայ խմբագիրը պարտաւորուած նորը կը գրէ, քանի որ հայ դպրոցի մը կամ հայ կազմակերպութեան մը կողմէ ղրկուած կ'ըլլայ: Ուրեմն, նորը գրուելէ ետք կը յանձնուի գրաշարին, քիչ ետք կը վերադարձուի խմբագիրին, վերջնական սրբագրութեան համար: Ահա ասոնք եղած են հայ խմբագիրին քառասուն տարիներու տաժանակիր աշխատանքն ու զոհողութիւնը, զորս առաքելութիւն որակեցինք:

Հին օրերուն կար «գրիչ խաղցնող» սերունդ մը, որ պարտականութիւն ստանձնած կ'ըլլար յաճախ երեւելու թերթի սիւնակներուն մէջ, բայց ոչ փառքի համար, այլ իր ազգասիրութեան ոգին արթուն պահելու եւ հայ հասարակութեան մէջ հայրենասիրութեան կայծը վառ պահելու առաջադրութեամբ:

Այդ սերունդին բացակայութիւնը պէ՞տք է զգացուի այսօր:

Արդեօք կը ներուր՞ մեզի ըսելու թէ՛ ներկայիս որ ունինք դպրոց տեսած սերունդ մը, լայն կարողութիւններով օժտուած, ինչո՞ւ այդ կարողութիւնները ազգին տրամադրելու կը դժկամակին անոնք: Յարգանք անոնց որ բացառութիւն կը կազմեն:

Ի հարկէ ունինք փաղանգ մը մտաւորականներու, որոնք գրելու եւ առաջնորդելու արտակարգ կարողութիւններով օժտուած են: Անոնցմէ ոմանք, սակայն, կը նախընտրեն իրենց անառիկ բերդէն դուրս չելլել: Ինչո՞ւ. արդեօք որպէսզի ազա՞տ մնան ազգային մտահոգութիւններէն ու ցաւերէն:

Եւ ահա վերոյիշեալ բացականերուն պատճառաւ երեւան կուգայ նոր եւ թերեւս աւելի՛ բարդ հարց մը, որուն դէմ պէտք է հայ խմբագիրը մաքառի: Ատիկա հետեւեալն է. պրպտել այլ թերթերն ու պարբերականները, օրուան պատշաճ յօդուածները հիւրընկալելու համար. նման աշխատանք մը՝ ինքնին՝ թանկագին ժամերու կը կարօտի. ստիպողական պահանջ կը դառնայ, սակայն, յօդուածագիրներու չգոյութեան պատճառով:

Եզրափակենք. Տոքթ. Նուպար Պէրպէրեան անձնուէր ու ազգանուէր այն քիչ հայ խմբագիրներէն է, որ քառասուն տարի անընդհատ աչքի լոյս սպառեր է, ծառայելով հայ ժողովուրդին եւ հայոց տիպ ու տառին: Անոր գաղափարապաշտ մարդ մը ըլլալը գոհունակութեամբ կ'արձանագրենք հոս: Ազգին ծառայելու իր վճռական որոշումը, հայ մամուլին հետ սրտով ու հոգիով իր անխախտ կապը կը հարկադրեն մեզ ըսելու.

«Յարգանք քեզի, Տոքթ. Նուպար Պէրպէրեան եւ վարձքդ կատար:»

«Պայքար», Նոյեմբեր 24, 1981

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱԻԷՐ



«Կոռ'ուկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կոուկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս»:

Հայրենակարօտ հայը միշտ իր տամուկ աչքերը յառած հայրենիքէն արտասահման ժամանող հայ անհատներու եւ կամ կառավարական պաշտօնեաներու, «Կոուկ» երգը շրթունքին միշտ հարց կուտայ՝

«Կոռ'ունկ, մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս»:

Արտասահման վերջին այցելողը եղած է Խորհրդային Հայաստանի մեծա-յարգ նախագահը, Շմաւոն Առուշանեան:

Սփիւռքի հայութեան համար մեծ պատիւ մըն է զայն իր հետ ունենալ եւ անոր խանդավառող ներկայութիւնը վայելել, ու լսել իր յուսադրիչ խապրիկները իր բռներով:

«Որպէս հայ ժողովուրդի մէկ զաւակ եւ հայրենիքի ծառայ, կը բերեմ ձեզ սփիւռքի հայ քոյրեր ու եղբայրներ, հայ բանուորից ու աշխատաւորից ողջոյցի խօսքը:

«Մենք չենք մոռցած ձեզ, մենք միշտ կը մտածենք ձեր մասին: Հայրենիքի մէջ կը պատրաստենք բնակարաններ եւ գործ ձեզի համար, որպէսզի երբ հայրենիք գաք, մեզ չյանդիմանէք»:

Ապա, պէտք է «այցելել Ս. Հայաստան ծանօթանալու հայ իրականութեան, տեսնել ու խօսիլ, ոչ ատելից ոչ պակաս, ըսել պատմել այն ինչ որ կայ . . .»

Հինգ դարերու հայ մարտիրոսութեան ու տառապանքին եւ հայոց քաջերու ոգիներն են որ վերակենդանացած եւ մարմնացած հայոց նախագահին մէջ մեզի կ'աւետեն հայ երկրին կամեցողութիւնը եւ հայ կառավարութեան բաղձանքներն ու ծրագիրները . . . :

Ուրեմն շատ հաւանական է որ մօտ ապագային հայրենադարձի հրաւէր մը եւս ստացուի հայ պետութեանէն: Մինչ այդ հայ պանդուխտներ ուխտաւորներու կարաւանին միացած, երբոր Հայաստան այցելեն թող իրենց աչքին առջեւ ունենան հինգ դարերու դժբախտութիւնն ու թշուառութիւնը, եւ թող բաղդատեն զայն 38 տարուայ Խորհրդային Հայաստանի վերածաղկման ու վերելքին հետ:

Երբ ոեւէ հայ Հայաստան այցելէ, օտար թղթակիցներու աչքով թող չի դիտէ-դատէ Հայաստանը:

Երբ ոեւէ հայ Հայաստան երթայ իր մէջ գոյութիւն ունեցող թշնամական ոգին թող պահ մը քնացնէ եւ բարեկամաբար եւ հայրենասիրաբար տեսնէ ու դատէ հայոց հայրենիքը:

Վերջերս զրոյց մը շրջեցաւ թէ ծանօթ հայ մտաւորականի մը հրաւէր ղրկուած է Ս. Էջմիածին եւ Հայաստան այցելելու համար: Երանի թէ այդ մտաւորականը ի սէր Հայաստանին եւ ի սէր հայ ժողովուրդի միասնակա-

նութեան արձագանգ տար այդ հրաւերին եւ ապա արտասահման վերադառնալով իր խղճով առաջնորդուած մեզի պատմէր իրականութիւնը, որպէսզի յաւիտենական թերահաւատներուն միտքերն ու աչքերը բացուէին քիչ մը, եւ որպէսզի հայուն վէրքերը խորացնելու տեղ ջանք մը թափուէր զայն խնամելու ու վերջնականապէս դարմանելու համար:

Միշտ գնահատելի են անոնք որոնք հայրենի հրաւերներու արձագանգ կուտան, ցոյց տալով թէ իրենք հատուածի մը կալանաւորներն չեն եւ իրենց հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը մակերեսային չէ երբեք:

Ով որ պատեհութիւն ունի, որուն որ պատեհութիւն կը տրուի, թող այցելէ, տեսնէ եւ վերադառնալով՝ պատմէ մեզի ինչ որ իրականութիւն է. ինչ ալ ըլլայ Հայաստանը, իր եղածով՝ անցեալ հինգ դարերու հետ չենք փոխեր:

«Պայքար»

ՀԱՅ ԵՄ ԵՍ



Հայոց պատմութիւնը անթիւ հերոսական դրուագներով լեցուն է. ամէն հայ աստուածային բացառիկ շնորհք մը պէտք է համարէ իր հայ ըլլալը: Անշուշտ ունեցեր ենք պարտութիւններ ալ, սակայն, միայն եւ միայն այն պարագաներուն երբ կուուելու պարտաւորուած ենք անթիւ, անհամար ու անհաւասար ոյժերու դէմ:

Խաղաղասէր ժողովուրդ ենք: Եւ մենք մեր ցեղային շնորհները ալ աւելի երեւան կը բերենք խաղաղութեան ընթացքին:

Ահա մեր ամենուս յաւերժական Հայաստանը. կը տեսնենք թէ ի՛նչ ասեղ թափով կ'աճի, կը զօրանայ եւ կը յառաջդիմէ ան: Եւ այսօրուան անոր արագաթուիչ վերելքը մեզի այն յոյսը կը ներշնչէ, թէ հեռաւոր ապագային, քաջակորով եւ ազատատենչ հայ պատանի մը, հայոց սեփական Արարատի երկնամերձ սէգ կատարին վրայ յաղթական դիրքով հաշուեյարդարի կանչէ մեր դարաւոր թշնամին:

Եւ ըսէ. «Հայ եմ ես, շառաւիղը այն հայերուն որոնք կացինահար ինկան այսօրուան բնակած քու երկրիդ սահմաններուն մէջ: Եւ որոնց աճիւնները մինչեւ հիմա անգերեզման կը մնան:

Մի՛ մոռնար, ո՛վ ջարդարար, ո՛վ դահիճ, թէ այդ երկիրը որուն մէջ կ'ապրիս իմ պապերուս երկիրն է: Վկայ այն բազմահազար վանքերն ու եկեղեցիները որոնց խաչերը թաղուած կը մնան անոնց աւերակներուն տակ:

Հայ եմ ես:
Ո՛վ անարգ թուրք, հայ եմ ես,
Սուրէ, հուրէ չվախցող
Աստուածապաշտ հայն եմ ես:

Հայ եմ ես:
Կողոպտիչ թուրք, հայ եմ ես.
Իմ վաստակիս ու կեանքիս
Իրաւատէր հայն եմ ես:

Հայ եմ ես:
Ո՛վ զազիր թուրք, հայ եմ ես.
Բիւր զոհերու արիւնին
Վրիժառու հայն եմ ես:

Հայ եմ ես:
Ազատութեան սիրահար.
Հայոց ինչքին ու հողին
Պահանջատէր հայն եմ ես:

«Պայքար»

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ



Այս աշխարհի մէկ անկիւնին մէջ տառապանքի ընկեր մը ունիմ. ան սրտով, հոգիով ու զգացումներով իրաւ հայ մըն է. թէպէտ մեր գաղափարական ուղիները, եւ որոշ կէտերու շուրջ մեր աշխարհահայեացքը, քիչ մը կը տարբերին իրարմէ, բայց համոզուած եմ եւ խորապէս կը հաւատամ թէ ան ալ հարազատ հայու մը նման մեր ազգային վերքերուն համար կը յուզուի, կը տխրի ու կը տառապի: Եւ անշուշտ, կը հրճուի ու կ'ուրախանայ, երբ ուրախանալու երեւոյթներ նշմարուին հայ կեանքէն ներս:

Ան ալ — ինչպէս բոլոր հայերը — կը յուսար թէ 1965ի Ապրիլեան Եղեռնի յիսնամեակին առթիւ բոլոր հայերը, բոլոր քաղաքական կազմակերպութիւնները, բարեգործական թէ հայրենակցական միութիւնները, կրօնական թէ կրթական բոլոր հաստատութիւնները, մէկ ճակատ կազմելով, միահամուռ եւ միասիրտ պիտի գործէին Հայ Դատին համար: Քանի որ այս հարցին շուրջ ո'չ տարակարծութիւնը եւ ո'չ ալ անջատողութիւնը յաջողութիւն կրնան ապահովել:

Այս խնդրոյն շուրջ ան կը գրէ:

«Սփիւռնաբաշայ մամուլին մէջ Հայկական Դատին մասին շատ բան գրուեցաւ: Բայց այդ բոլոր գրուածքներուն մէջ մէկ ակնբախ բան կը պակսէր — ազգային միութեան մը կազմութիւնը, որ կարենար յուշագիրներով ու խնդրագիրներով ազգը ներկայացնել ուր որ անկ է:»

Եւ կը շարունակէ.

«Զըլլայ թէ հայ կազմակերպութիւնները նման ծրագրի մը շուրջ բանակցած եւ բանակցութիւնը ձախողած ըլլայ: Եթէ նման քայլ մը առնուած է եւ մեր նախաքայլերուն մէջ ձախողած ենք, ուրեմն Հայ Դատը անջատաբար հետապնդելը աւելորդ պէտք է նկատել: Նման ազգային դատ մը ազգովին հետապնդելու է: Քանի որ հայը հայ է, ինչ գոյն ալ ունենայ, ուստի Հայ Դատը բոլոր հայերուն կը պատկանի. մէկ ու միացեալ ճակատով:»

Իր կասկածներուն մէջ աւելի խորանալով կը շարունակէ ըսել.

«Կրկին եւ կրկին պէտք է ըսել թէ արտասահմանի հայ թերթերուն մէջ երկինքի աստղերուն չափ անհուն ու անհամար բառեր գործածուեցան Հայ Դատին շուրջ. բայց ինչ որ կ'ակնկալուէր, դեռ չձանուցուեցաւ: Միթէ շատ է սպասել եւ յուսալ որ մեր մեծապատիւ ազգայինները, մեր կրօնապետները եւ այլ հաստատութեանց հայ ազգային ջոջերը միատեղ սեղանի մը շուրջ նստած ծրագրիներ մշակէին Հայ Դատի յաջողութեան համար:

«Ու քանի որ հայ մամուլին մէջ դեռ չէ ձանուցուած ազգային միութեան մը կազմութիւնը, կը տարակուսիմ թէ միացեալ ճակատով որեւէ քայլ պիտի առնուի: Եւ հէնց ասոր համար իմ հայու հոգիս սկսած է կրկնակի տառապիլ եւ յուզուիլ: Եւ իմ կամքէս անկախ՝ կ'ուզեմ գոռալ — ո՞ւր է մեր դարաւոր քաղաքակիրթ ազգ մը ըլլալու յաւակնութիւնը. մինչեւ ե՞րբ Հայկական Դատը բռն մը հայերու տարակարծութիւններուն զոհը պիտի ըլլայ:»

Իմ տառապանքի ընկերս՝ ենթակայ իր հոգեկան փոթորիկներուն՝ յանկարծ սա եզրակացութեան կը յանդի:

«Արդէն Սփիւռ. քահայր կը նմանի այն ուղեկորոյս անձին, որ ամպերուն տակ թաքնուած առաջնորդող աստղին կը սպասէ, իր ուղիղ ճանապարհը գտնելու: Եւ առաջնորդող աստղը կը դեղեւի հրապարակ ելլել:»

Եթէ բոլորովին ճշմարտութիւն չեն իր ըսածները, սակայն պէտք չէ ուրանալ թէ իր արտայայտութեանց մէջ ճշմարիտ ու ճշգրիտ կէտեր չատ կան:

Եթէ գաղթահայ կեանքը ուսումնասիրութեան ենթարկենք, հոն զարմանալու եւ զայրանալու երեւոյթներ չատ պիտի տեսնենք:

Անշուշտ կարգ մը հայեր պիտի ըսեն, թէ մեր ազգը նման պարագաներ չատ անցուցեր է, թէ անհասկացողութիւններէ յառաջ եկած տխուր պահերը կուգան ու կ'անցնին, բայց հայը կայ ու կը գոյատեւէ:

Արտասահմանի հայուն համար նման մտածում մը աղէտալի է, քանի որ օրէ օր կը տեսնենք որ մեր կրթական խնամակալութիւններուն սպառած ճիգերուն արդիւնքը նուազագոյն տոկոսով միայն կը վերադարձուի հայ ազգին: Հայ տղեկը, իր ծաղկահասակ տարիքին իսկ, ինքզինք կը գտնէ ուժացման ծովուն մէջ, եւ, հակառակ իր ճիգերուն ու մաքառումներուն, վերջ ի վերջոյ տեղի կուտայ ահաբողոք հոսանքին առջեւ եւ հայկական շրջանակէն հեռանալով շատ յաճախ հայկականութենէ կը պարպուի:

Ապահովաբար արտասահմանի հայութեան միացեալ ճիգերը, աւելի նպաստաւոր պայմաններ ստեղծելով, գուցէ պիտի կրնան այս վտանգաւոր պարագան բարեփոխել, ի խնդիր հայ ցեղին գոյատեւման: Ուրեմն.

Ազգապահպանման մեր բոլոր ճիգերն ու աշխատանքները եթէ կեդրոնական միութեան մը հովանաւորութեամբ կատարուին, ինչպէս նաեւ եթէ հայ դատն ալ միացեալ ճակատով հետապնդուի, այն ատեն հայուն տառապող հոգին այդ փառաւոր ու եզակի երեւոյթին առջեւ խոնարհելով բացազանչէ:

— Փա՛ռք հայոց միութեան. միութեամբ պիտի զօրանանք եւ զօրութեամբ պիտի յաղթանակենք:

«Պայքար»

ՄՈՒՐԱՑԻԿԸ (ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ)



Մեծ քաղաքներու բանուկ փողոցներուն մէկ անկիւնը կը հանդիպինք զանազան տիպի մուրացիկներու, որոնք արեւածագէն մինչեւ մայրամուտ նոյն տեղը նստած՝ օրեր շարունակ իրենց մաշած շրթներով անյուսահատօրէն նոյն յանկերզը կը յեղձեղեն. «Աղքատին դրամապանակը մի՛ մոռնաք, ինչ որ դուք կուտաք, Աստուած անոր կրկինը պիտի տայ ձեզի»: Եւ ուզեալով կենդանի քաղաքներու մէջ թէեւ ուրիշ մուրացիկներու ալ հանդիպած եմ, բայց այն մէկը, զոր տեսայ աշխարհի ամենաբազմամարդ քաղաքին երկնաքեռ շէնքերու կիսամութ պատերուն տակ, իմ յիշողութենէն բնաւ չեմ կրնար վանել:

Այս մէկը շատ տարբեր էր միւսներէն: Ան իր գլխուն վրայ ունէր անկարգ ու ըմբոստացող մագերու խուրձ մը, որ իրեն կը շնորհէր հպարտ առիւծի մը երեւոյթը: Տարօրինակ ակնոց մը կը կրէր իր լայնաուունգն քթին վրայ, ակնոց որուն ապակիներէն մին գունաւոր ըլլալ կը թուէր, իսկ միւսը՝ խոշորացոյց ապակիի նմանող բան մը:

Իր երեւոյթը կը ստիպէր ինծի մտածելու թէ՛ խեղճը արդեօք միականի՞ էր, թէ՛ ոչ իր իսկական պատկերը կը կեղծէր, որպէսզի մարդիկ խղճահարէին իր այդ խղճալի երեւոյթին:

Եւ այս մուրացիկը վիճասէր էր:

Երբ իրեն տրուած նուէրները իր ակնկալածէն պակաս ըլլային, ան իր նուիրատուները կը խարազանէր շատ աժան ածականներով:

Բազմաթիւ անցորդներ նշմարած էին արդէն իր ապերախտութեան ոգին եւ ուրիշ շատ անհաճելի յատկութիւններ: Եւ որպէսզի իննայուէին իրենց հասցէին նետուած անպատկառ ածականները, կը խուսափէին անոր հետ յարաբերութիւն ստեղծելէ:

Օր մըն ալ տեսանք որ մուրացիկը իր վիզէն կախեր է նշանատախտակ մը, որուն վրայ կար Տասնաբանեային նմանող պատուիրանքներու շարոց մը: Տասնաբանեային առաջինը կը կարդացուէր. «Ձեր առատաձեռնութիւնն է որ կը հետաքրքրէ զիս . . . — նիւթը անէծք կրնայ ըլլալ, եթէ դժկամակութեամբ կը յանձնուի դրամապանակին» . . . : Եւ կար ուրիշ հատուած մը, որ կը կարդացուէր. «Ձեր կարեկցութեանը կ'ապաւինիմ, ձեր բարի կամեցողութիւնն է որ զիս իմ նպատակիս պիտի հասցնէ»:

Այս «դիմակաւոր» մուրացիկը իրեն սահմանուած անկիւնովը չէր գոհանար: Ան կը շրջէր քովընտի փողոցները. դռներ կը բախէր, կապելաներ կ'այցելէր, ամէն դաւանանքի աղօթարաններէն ներս կը մտնէր, այնպէս որ իր բարեպաշտ ձեւանալն անգամ կեղծ կը թուէր, ինչպէս իր ակնոցի ապակիին հարազատ ըլլալը:

իր յաճախակի տեղափոխութիւնը չէր նպաստած իր յաջողութեան. ան յայտնօրէն դժգոհութիւն ցոյց կուտար եւ ապերջանիկ էր:

Ապերջանիկ: Բայց ինչո՞ւ: Նախ անոր համար որ իր ամենօրեայ նուիրատուները սկսան խոյս տալ իր անկիւնէն: Եւ անշուշտ կային այլ պատճառներ ալ, զորս հոգեբաններու վերլուծման կը յանձնենք:

Եւ սակայն այս բոլոր անհաճելի արտաքին երեւոյթները բան մը սորվեցուցած չէին: Ուրեմն համեստ ըլլալու փոխարէն աւելի անառակ եւ անզուսպ դարձած էր, եւ յաճախ բարձրաձայն կ'աղաղակէր. «Մուրացկանութեանս բարձր յատկանիչները բոլորովին կ'անտեսէք ու չէք գնահատեր զիս . . . : Ապերախտներ»:

Անցորդներ լաւ հասկցած էին մուրացիկին «միտք բանի»ն: Գիտէին նաեւ թէ անոր մուրալը փառաց պսակին հասնելու նպատակին կը ծառայէր: Գիտէին նաեւ թէ իր ծպտումները կեղծ էին: Եւ ուրեմն կը զլանային իրենց նուէրները:

Մուրացիկը կը զգար թէ իր նախաձեռնութիւնները սկսած էին ձախողել: Իր հոգեկան գանձերը սկսած էին սպառիլ: Սակայն առանց նահանջի ան կը շարունակէր իր կեղծ «առաքելութիւնը»: Նոյն յանկերզը յօրանջելով կ'արտասանէր. «Նպատակիս հասնելու համար ձեր բարեացակամութեանը կը կարօտիմ, հաճեցէք օգնել այս ձեր ծառային»:

Իր վիզէն կախուած նշանատախտակին հետեւեալ տողերը ուշադիր անցորդներուն աչքերէն չէին վրիպեր.

«Դուք որ իմ լուսաւոր մտքիս լուսատու էջերը խաւարումի ենթարկեցիք, կ'այպանեմ ձեզ . . .

«Դուք Աստուծոյ ինծի շնորհած շնորհներն անգամ փոշիի վերածեցիք . . .

«Մուրացկանի դերս լաւ կատարելու համար անհունօրէն տառապեցայ . . . սակայն, ձեր գուլթն ու կարեկցութիւնը անբաւարար եղան միշտ . . . »:

Եւ Տասնաբանեան կը շարունակուէր այլեւս այլ միտքերով:

Անցան քանի մը օրեր. առաւօտ մը երբ սովորական ժամուն մուրացիկին անկիւնէն կ'անցնէի, հոն իրարանցում մը կար. կանգ չառի, քանի որ կը շտապէի գործատեղիս հասնելու համար: Յաջորդ առաւօտ նկատեցի որ մուրացիկը կը բացակայէր իր անկիւնէն: Ինծի ընկերացող կղերականի մը հարցուցի. «Ըսէ՛ք, խնդրեմ, մուրացիկին ի՞նչ պատահեցաւ»:

Բարի կղերը աչքերը երկինք ուղղեց եւ երեսը խաչակնքելով ըսաւ.

— Ինչպէս որ հաստաբուն կաղնիներ փոթորիկներու ոյժին առջեւ կը խոնարհին, ու նաեւ անսասան թուող հսկայ արձաններ իրենց պատուանդաններէն վար կը թաւալին երկրաշարժի ատեն, այնպէս ալ մեր մուրացիկը երէկ անյայտ ոյժի մը առջեւ իր գլուխը խոնարհեցուց եւ ալ չկրցաւ բարձրացնել գայն:

Խ. ՏԻԳՐԱՆ

«Պայքար»

ՆՕԹԵՐ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԷՆ

«ՎԵՐՁԻՆ ՈՏԱՆԱԻՈՐԸ»



— Դերենիկին հետ դուռ դրացի էինք. նոյն տարիքի տղայ. դպրոցի մէջ դասընկերներ. փողոցը խաղընկեր, համալսարանի տարիներուն սերտ բարեկամ եւ նուիրեալ ընկերներ: Հայրենական պատերազմի օրերուն մեր ուսումը կիսաւարտ միասին ղրկուեցանք ուազմաճակատ:

Այսպէս սկսաւ իր պատմութիւնը, երբ Երեւանի Յաղթանակի Պարտէզին մէջ ծառաշուքին տակ նստած հին, հին յուշեր կը փոխանակէինք:

Ըսաւ թէ Արամ է իր անունը. համալսարանի ուսանող էր, երբ հայրենական պատերազմի հզօրականչ փողը հնչեց:

— Արամ — ըսի — պատմութիւնդ շարունակէ. գիտեմ թէ կրակի մկրտութիւնը, զոր ունեցաք, անոր մասին շատ մը ըսելիքներ ունիք:

Արամ դժկամակեցաւ. չէր ուզեր վերադառնալ այն ահաւոր օրերուն ուր շատ մը ծաղկահասակ ընկերներու տխուր յիշատակը անթեղուած կար իր սրտին եւ մտքին մէջ:

Խնդրեցի որ, գէթ մէկ պատկեր միայն կարենայ նկարագրել:

Խորունկ շունչ մը քաշեց, աչքերով շրջապտոյտ մը ըրաւ պարտէզի լայնութեան վրայ, եւ սկսաւ իր պատմութիւնը:

— Այդ խեւ եւ խաւար ուղեղով պատերազմասէր Ֆիւհրերը իր զօրապետներուն խստօրէն հրահանգեր էր որ երբեք չնահանջեն: Եւ ուրեմն Լեհաստանի անձանօթ գիւղի մը դաշտերուն մէջ կատաղի կռիւներ մղուեցան: Թշնամի վայրագ գինուորներուն հետ սուր սուրի, կուրծք կուրծքի եկած (պահ մը մոռնալով թէ սպանութիւնը ոճիր է) թէ՛ անոնք եւ թէ՛ մենք շատ զոհեր տուինք: Ճակատամարտը տեւեց արեւածագէն մինչեւ արեւամուտ: Ինչպէս անոնք, նոյնպէս եւ մենք որոշեր էինք մեր դիրքերէն մատնաչափ մը չզիջիլ: Այս պահուն անկարելի է որ այդ կռիւին սարսափելիութիւնը իր ահաւորութեամբը կարենամ նկարագրել: Մութը դեռ չկոխած Ֆիւհրերի անպարտելի կոչուած գինուորները սկսան փախչիլ, լքելով իրենց վիրաւորները, մեծ թիւով ուազմամթերք եւ բիւրաւոր անձանաչելի դիակներ:

Աշուն էր եւ ցուրտ: Երկինքը թուխ ամպերով քօղարկուած՝ ձիւնափոշին գետին չհասած հովը իր հզօր շունչով կը տանէր այլուր: Եղաւ գիշեր: Սեւ խաւարի թանձրութիւնը դանակի շեղբով կարելի էր շերտաւորել: Զէնքերը լռեցին: Մեր վիրաւորեալները փոխադրեցինք վրաններու տակ: Ու մեր պարտականութիւնը լիովին կատարած, օրհնեալ խաղաղութեան պահը օգտագործելով քաշուեցանք պահ մը հանգստանալու:

Ձինուորներէն շատեր յոգնած ու ուժասպառ քանի մը վայրկեանի մէջ քնացած էին արդէն: Մանկութեան ընկերս Դերենիկը մտահոգ նստած կը հսկէր: Ձեռքին մէջ ունէր ձեռքի մեծութեամբ կտոր մը թուղթ եւ շարչարուած գրիչ մը: Աչքերը յառած էր հեռաւոր կէտի մը վրայ եւ ատեն ատեն գլուխը կախ կը գրէր: Այդ հսկայ դաշտին հեռաւոր մէկ անկիւնը խրճիթ մը կ'երեւէր, ու ճրագ մը կը պլպլար եւ ստուերներ անդադար կը շարժէին հոն: Կարծես Դերենիկ հոգեկան կապ մը հաստատեր էր այդ անծանօթ խրճիթին հետ:

Արամ յուզուած փորձեց վերջ տալ իր պատմութեան: Ըսի թէ պատմութիւնը լման կ'ուզեմ լսել: Թէ ի՞նչ պատահեցաւ Դերենիկին: Երբ Դերենիկին անունը յիշեցի նկատեցի որ Արամին այտերուն վրայէն արցունքներու կաթիլներ կը գլորուէին դէպի վար: Պահ մը լուռ մնաց, իր ոյժերը հաւաքեց եւ իր պատմութիւնը շարունակեց:

— Այդ օրերու պատկերները նկարագրելու կը սարսափիմ: Քաղաքակիրթ կարծուած մարդը կռիւի ընթացքին կը դառնայ վայրենի գազան. անխղճօրէն կը յօշոտէ, կը փճացնէ դիմացի ճակատէն եկող ամէն մարդ, ամէն ստուեր: Իրեն համար պատերազմ կը նշանակէ «մեռցուր որ ապրիս ու յաղթանակը տօնես եւ կամ մեռիւր հերոսի տիտղոսին արժանանալու համար»:

Հայրենական պատերազմը երբ սկսաւ Դերենիկին կիներն ալ ուզեց զինուորագրուիլ: Դերենիկը ընդդիմացաւ ըսելով, թէ մէկ ընտանիքէն մէկ զոհ բաւական էր:

Դերենիկ այդ գիշեր լուրջ մտահոգութիւն մը ունէր եւ կարծես նախազգացում մը գիներ կը նեղէր:

— Ի՞նչ է Դերենիկ ջան, ինչո՞ւ այդքան ընկճուած ես այսօր, հարցուցի:

Ըսաւ թէ հայրենիքէն հեռու գտնուող զինուորը տան կարօտէն կը տառապի, մանաւանդ լուռ գիշերներուն. անկարելի է նկարագրել այն զգացումը որուն կենթարկուի ամէն մէկ զինուոր երբ թիկունքին հետ իր յարաբերութիւնն ու հարողակցութեան միջոցները կը խզուին:

— Ա՛հ, Երեւան . . . : Մեր փողոցը . . . : Հոն ծնանք, հոն ապրեցանք, տակաւին հոն պէտք է ըլլան հայր, մայր, կին, ազգականներ — ի հարկէ եթէ ողջ են տակաւին. եւ լուռ կը մնան. ոչ մէկ գիր, ոչ մէկ բացիկ. կռուակն անգամ վերեւէն կը սուրայ առանց խապրիկ մը տալու մեզի:

Դերենիկ իր խօսքերը վերջացուց, բայց մինչեւ այսօր անոր ձայնը դեռ կը դողանջէ ականջներուս մէջ:

Կէս գիշերին ամպերը երկինքի մակերեսէն հեռացան, եւ լիալուսինը բլուրի մը ետեւէն սկսաւ նորահարսի մը պէս նազանքով վեր բարձրանալ: Ռազմադաշտին վրայ տեղ, տեղ ձիւնափոշի հաւաքուած կար, որը նախախնամական կարգադրութիւն մը կարծես, մեռելային այդ ահուելի պատկերին ամենէն տիուր մասը վարագուրելու կը ծառայէր:

Դերենիկ դուրս ելաւ վրանէն, եւ ըսաւ թէ նախազգացում մը սկսած է գիներ տանջել:

— Կը կարծեմ թէ կիներն Վանիկն ալ բանակին միացած է: Այդ զգացումը քանի օր է որ էութենէս չի հեռանար: Յետոյ, — Արա՛մ, լսէ: Ներքին ձայն մը շարունակ կը շնչայ թէ այսօր իսկ դիպուածով մը պիտի մահանամ: Եւ ուրեմն Վանիկին համար ոտանաւոր մը գրեցի. գուցէ այս վերջինն ըլլայ: Իսկ, եթէ յանկարծակիօրէն մահանամ այս ոտանաւորը թղթապանակէս կ'առնես եւ սիրելի կնոջ՝ Վանիկին կը յանձնես: Երդուէ՛, որ այս կամքս պիտի կատարես:

Բաւական մը հեռու խրճիթի մը ծխնելոյգէն ծուխը բարակ թելի մը նման վեր կը բարձրանար: Լուսնի լոյսի տակ ծուխը իր սեւութենէն շատ բան կորսնցուցած էր: Դերենիկ իր քայլերը ուղղեց դէպի այդ խրճիթը, քանի որ ջուլթակի մը հեծեծանքը կը հասնէր մեզի: Այդ հեռաւոր կէտին երթալու փափաք յայտնեց Դերենիկ. ես ընդդիմացայ ըսելով թէ — յարմար ժամանակը չէ եւ վտանգաւոր կը թուի ինձի: Ան պնդեց թէ կ'ուզէ երթալ եւ անվախ ու յարուռն քայլերով սկսաւ յառաջանալ. կ'երեւի թէ ճակատագիրը զինք հոն կը մղէր: Հարկադրուած ես ալ իրեն հետեւեցայ. չէ՞ որ մենք անբաժան ընկերներ եղած էինք:

Երբ խրճիթին մօտեցանք նշմարեցինք որ երկու բոյժքոյրեր վիրաւոր գինուորի մը վրայ կը հսկէին: Բոյժքոյրերէն մին պահ մը դադար առաւ եւ անհետացաւ: Ակնթարթ մը յետոյ ջուլթակ մը առած վերադարձաւ վիրաւոր գինուորին քով եւ սկսաւ նուագել «Կռունկ, ուստի՞ կուգաս»: Ո՛հ, այդ երգը որ խաղաղ գիշերին մէջ լալագինօրէն կը տարածուէր արիւնաներկ դաշտին վրայ: Ինչ չար մարդ պիտի ըլլար որ կարենար գսպել իր արցունքը: Մենք շարունակեցինք լուսամուտէն ներս դիտել. ջուլթակահարուհին ընդհատ ընդհատ նուագեց քանի մը խռովայոյց եւ հոգեհաճ կտորներ:

Դերենիկը յանկարծ. — «Արամ, այդ բոյժքոյրը շատ կը նմանի իմ կնոջս Վանիկին, կինս ալ ջուլթակի սիրահար էակ մըն էր»:

Հաստատեցի որ Դերենիկը չէր սխալած, ջուլթակահարուհին շատ կը նմանէր իր կնոջ ժպիտ, արտայայտութիւն այս ամէնքը վաւերական: Սակայն աղօտ լոյսը մասամբ արգելք կը հանդիսանար կատարելապէս համոզուելու: Իր դէմքին վրայ վախի ու սարսափի ստուեր մը կար: Ան, ջղադրգիւ նոպաներու տակ իր աղեղը լարեղուն վրայ կը սահեցնէր, եւ նոյն ատեն կարօտի երգ մը կ'երգէր հուսկ մեղմ ձայնով մը:

Պահ մը խոր լուսութիւն: Եւ ապա այդ փոքրիկ նուագարանէն հայու հզոր հոգին դուրս պոռթկաց: Այն հոգին որ տաժանելի բոլոր պայմաններուն մէջ անգամ պարտութիւն չէ ճանչցած, այլ մնացեր է անընկճելի: Այն հոգին որ դարեր շարունակ ջարդեր եւ անմարդկային ինչ խժոժութիւններ տեսաւ բայց մնաց վեհ ու վսեմ, աննուաճ ու աննկուն:

Յանկարծ անսպասելի պայթիւն մը այդ հոգեզուարճ եւ զուարթ պահը տիրութեան ու լացի փոխեց: Դերենիկի ոտքին տակ ական մը պայթած էր եւ խեղճ տղան թաւալգլոր գետին ինկած մահուան դէմ կը պայքարէր: Ջուլթակահարը սարսափած դուրս եկաւ տնակէն. լուսարձակին լոյսը երբ վիրաւորեալին վրայ հանգչեցուց անսպասելի ճիչ մը արձակեց եւ կարծես տիեզերքը իր հիմքէն ցնցուեցաւ: «Ա՛խ կեանքիս լոյսը, Դերենիկ ջան, այդ դու ես»: Այդ աղետարչ աղաղակը կարծես Դերենիկի սրտին հասաւ ու հոն կեցաւ: Այդ ձայնը ծանօթ ձայն մըն էր. այնքան ծանօթ որ Դերենիկ համոզուած թէ Վանիկն էր՝ ակնթարթ մը իր աչքերը բացաւ եւ բացագանչեց. «Ա՛խ իմ Վանիկ, իմ աղուոր ու անոյշ Վանիկ . . . դուն հոս . . . ըսէ՛, Հայաստանէն ի՞նչ լուր . . . » եւ լռեց:

Դերենիկ ալ չխօսեցաւ: Բայց իր գրիչը եւ իր բանաստեղծի հոգին շատ բան թողած են աշխարհին: Երանի՛ ես մեռնէի . . . : Ան լաւ բանաստեղծ էր: Չեմ կրնար մոռանալ իր գրած վերջին ոտանաւորը, ինչքա՛ն սրտի մօտ, ինչքա՛ն զգայուն:

Ահա այդ ոտանաւորը, ըսելով Արամ սկսաւ արտասանել.

ԹԷ ՄԱՐՏՈՒՄ ԸՆԿՆԵՄ

Թէ մարտում մեռնեմ, տխուր մի մնայ,
Անսէր մի մնայ, սիրիւր դու մէկին.
Թող ջահել սիրտդ սիրով արբենայ,
Ափսոս է վարդը թռչնի գարունքին:

Ես հող կը դառնամ դաշտում սիգաւէտ,
Կը դառնամ ծաղիկ, անուշ կը բուրեմ,
Դու եկ ինձ այցի նոր սիրածիդ հետ,
Քաղիւր ինձ, որ քո ձեռքը համբուրեմ:

Համբոյրով վերջին կարօտս առնեմ,
Իսկ դու իմ անուշ բոյրով արբենաս.
Ու քո ձեռքի մէջ թող ես թառամեմ,
Ա՛խ, կ'ուզեմ դու միշտ անթառամ մնաս:

«Պայքար»

ԲԱՐԻ ՎԱՅԵԼՈՒՄ ՔԵԶ, ՄԱՐԳԱ՛Ր



Մարգար Աղբար Խարբերդ նահանգի Իջմէ գիւղին մէջ բացառիկ դէմք մըն էր: Բացառիկ իր ծուռ վիզով եւ ծայրայեղօրէն իր նիւթապաշտ նկարագիրով: Անոր վիզին ձախ կողմը՝ կտրուածքի լա՛յն ու խոր գիծ մը կար: 1895ի Ջարդին վատաբարոյ տաճիկ մը գուռ դաշոյնով փորձեր էր մորթել գայն, եւ անոպայ թուրքը խորհելով թէ իր զոհը մահացեր է, լքած էր դիակը միւս ջարդուածներուն մէջ ու անբան գազանի մը յոխորտանքով հեռացեր էր եղերավայրէն: Մարգար Աղբար այդ չարաղէտ օրերուն հրաշքով մը մահէն ու մեռելներէն խոյս տալով իր ծուռ վիզով մինչեւ մեր պատանեկութեան օրերուն դեռ կ'ապրէր:

Մարգար Աղբար այնքան նիհար էր որ «երբ քիթը բռնէին իր հոգին կ'ելլէր»: Ան բարտի հասակով, ջլապինդ կազմով, անխնամ պեխով, անժպիտ, մտահոգ ու խստադէմ երեւոյթով մէկն էր: Եթէ ըսենք իր կեանքի աշնան մէջ կը գտնուէր, չենք սխալիր, քանի որ այն քանի մը թել մագերը որ իր գլխուն վրայ կը կրէր անոնց մէջ աւելի ճերմակ դերձան կային քան թէ սեւ:

Ան ունէր կին ու զաւակներ. իր կնոջ բարութենէն երկինքի հրեշտակներն անգամ պիտի ամչնային: Գիւղին հրեշտակն էր Սրբուհին: Սրբուհին՝ սուրբ մըն էր, իր վարք ու բարքով անբիծ ու անարատ: Ան կ'աշխատէր իր անունը արժեցնել, որպէսզի հայոց սուրբերը իր տունը չար աչքերէ հեռու պահեն: Բայց Մարգար Աղբօր համար Սրբուհին պէս կին մը ունենալը այնքան կարեւոր չէր. անոր համար է՛ն կենսականը իր այգին էր: Այգին ամէն բանէ առաջ կուգար. իր էութեան հետ կապուած բան մը չկար որ այնքան սիրելի ու անփոխարինելի թուէր, որքան իր այգին: Իր այգին շօշափելի հարստութիւն էր որմով ատեն ատեն կրնար պարծենալ: Եթէ թագաւոր մը իր երկրին բանակով ինքզինք անպարտելի կը կարծէր, Մարգար Աղբար ալ իր այգիով ինքզինքը անմահներու շարքին կը դասէր:

Անշուշտ իր զաւակներն իր տան սիւներն էին: Բայց տանը կեդրոնական սիւնը իր այգին էր: Ան ո՛չ թէ կը կարծէր այլ համոզուած էր թէ՛ առանց իր այգիին տունը կը փլչէր, եւ իրենք անտուն կը մնային: Մէկ խօսքով, Մարգար Աղբօր համար միակ բարի եւ արդար Աստուածը իր այգին էր: Ան էր որ իր քսակը պարարտ կը պահէր, եւ ան էր որ իր գինիի տակառները կը լեցնէր քաղցրահամ գինիով:

Վստահաբար ան աւելի կը հպարտանար իր այգիով քան իր դրացի Բրոտ Մինասը, որ երկու մեծ արտերու եւ վեց գոմէջներու տէր էր: Երբեմն Մարգար Աղբար աւելի անմատչելի ու գոռոզ կը դառնար քան պճնասէր այն կինը՝ որուն նշանախօսութեան մատանիին վրայ լիալուսնի մեծութեամբ աղամանդ մը կը փայլէ: Եթէ իր այգիէն աւելի հարստութիւն մը եւ այլ աներեւոյթ պատճառներ ունէր հպարտանալու՝ այդ ալ գաղտնիք մը կը մնար, քանի որ Մարգար Աղբար դրամ եւ գաղտնիք դուրս տալու չէր հաւատար:

Մարգար Աղբօր աչքերը իր այգիէն դուրս բան չէին տեսներ: Իր այգին իր արեւն էր, շէ՛ն, պայծառ ու հրապուրիչ:

— Ծօ, ես իմ այգիս հազար գոմէշներու հետ չեմ փոխեր: Գոմէշն ի՞նչ է որ, այսօր կայ, վաղը չկայ, բայց իմ այգիս անխախտ է, միշտ կայ, միշտ ալ պիտի ըլլայ: Եթէ դուք երկիրնքի աստղերուն չափ մանր տաւար ալ տաք ես կի՛նա իմ աննման այգիէն վազ չեմ անցնիր — ան յաճախ այսպէս կը գեղգեղէր:

Մարգար Աղբօր մասամբ իրաւունք ունէր այսպէս արտայայտուելու եւ նոյնիսկ իր այգիով պարծենալու, քանի որ իր անգուգական այգիէն հարիւրաւոր կողովներով ոսկեհատիկ խաղող կը ստանար, խաղող՝ ծանրագլուխ ողկոյզներով որոնց նմանը անկարելի էր որ ուրիշ որեւէ տեղ գտնել: Ողկոյզներ կային, որոնց վրայ գտնուող խաղողի հատիկները Բրոտ Մինասին կաթնտու մատակին աչքերէ աւելի խոշոր էին եւ անոնցմէ աւելի լուսաւոր, եւ յետոյ ան իր այգիէն կը ստանար զանազան արեւահամ միրգեր ալ: Իսկ անկէ եկած գինին՝ որ արիւնի չափ թանձր եւ բնականօրէն մեղրահամ էր: Այդ գինիէն բաժակ մը գինի ստանալու համար չէ՞ր որ գիւղին քահանան ամէն խաղողօրհնէքի մասնայատուկ աղօթքով մը կ'օրհնէր Մարգար Աղբօր լայնատարած այգին:

* * *

Օգոստոս ամսուան սկիզբները Մարգար Աղբօր իր այգիէն ալ չէր հեռանար: Հարիւրաւոր թուփերուն կ'այցելէր: Ամէն մէկ թուփի անուն մը տուած էր: Ոմանց չփչփուն կով կը կոչէր, ոմանց ձերմակ արջ: Կար նաեւ որթատունկ մը որ իր գաճաճ ըլլալուն համար Բրոտ Մինաս կը կոչէր զայն:

Շատ տարիներ այգին բերք տուած էր, բայց այս տարուան բերքը շատ աւելին պէտք էր ըլլար, ինչու որ որթատունկերը սովորականէն աւելի բեռնաւորուած էին:

Այգեկուծքի օրերը կը մօտենային: Խեղճ որթատունկերը յղի կիներու նման իրենց ծանրութենէն յոգնած կարծես թէ մէկ բաղձանք ունէին այլեւս, այդ էր ազատուիլ այդ ահաւոր ծանրութենէն:

Այգեկուծքէն քանի մը օր առաջ Տիկ Սրբուհին աշխատաւորներ կը ճարէր եւ այգեկուծքի օրը թափօր կազմելով երգ ու պարով կ'իջնէին այգին:

Մարգար Աղբօր աշխատաւորները կէս ժպիտով մը կը դիմաւորէր, պատուէր եւ հրահանգներ տալէ վերջ, զանոնք խուճբերու կը բաժնէր ու կը ցրուէր այգիին զանազան մասերը:

Այդ օր այգեկուծքներուն հետ այգին եկած էր Բրոտ Մինասին մէկ հատիկ աղջիկը՝ Արփինէն: Արփինէ 17 գարուններ տեսած գարնան օրերու պէս գեղեցիկ, արեւոտ աչքերով, գեղակերտ մարմնով չքնաղ աղջիկ մըն էր:

Մարգար Աղբօր տղան Կայծակը՝ իր հետախոյզ աչքերով հետեւեր էր Արփինէին: Տեսած էր որ Արփինէ ծիրանի ծառին շուքին տակ մտած խաղող կը փրցնէր:

Օգոստոսի կիզիչ արեւը իր ամբողջ զօրութեամբ փռուեր էր այգիին եւ բանուորներուն վրայ, եւ ամէն ոք արեւին շողերէն պատսպարուելու մտածումով իրենց մարմնով որթատունկի շուքը նախընտրած էին:

Կայծակը կողովը ձեռքին՝ ամէն այգեկուծի կ'այցելէր ու խաղողի ողկոյզները հաւաքելով խուղին քով փռուած ձերմակ սաւանին վրայ խնամքով կը դիզէր:

Ու երբ Արփինէին կը մօտենար անոր քաղած խաղողները իր կողովին մէջ լեցնելու համար, երկվայրկեան մը իր ամբողջ հուստեամբ անոր երկնատուր աչքերուն մէջ կը խորասուզուէր:

Եւ արդէն Արփինէ ալ իր դրացի Կայծակին հետ քանի մը խօսք խօսելու համար եկած էր իրենց այգին:

— Արփինէ, յանկարծ խօսեցաւ Կայծակ, քու հոգիդ սուրբ տաճար մըն է ուր ամէն արթնող պիտի ուզէր ծունկի գալ եւ խաչ մը հանել անոր զօրութեան առջեւ:

— Ի՞նչ կ'ըսես Կայծակ, քու սէրդ ալ գինիով լեցուն թաս մըն է եւ ով որ խմէ իսկոյն կը գինովնայ, մըմնջեց Արփինէ:

— Արփինէ, դուն լուսատու ասող մ'ես . . . եւ քու սէրդ հոգեբոյժ Աստուած մըն է . . . : Քու հրահանգովդ մեռելներն անգամ յարութիւն կ'առնեն . . . աւելցուց Կայծակ:

— Վա՛յ խենդուկ, առ այս ճեռ մը խաղողը որ էրուած սիրտդ պաղշտըկի . . . եւ Արփինէ Կայծակին երկարեց ողկոյց մը խաղող որ տասնեւեօթը պտուղ ունէր վրան:

Ժամանակը շատ արագ սահեր էր: Արեւը դէպի մայրամուտ թեքուեր էր արդէն եւ իրիկնային սուր ճառագայթները շեշտակի մխուեր էին խաղողի դէզերուն մէջ: Մարգար Աղբար ճերմակ սաւաններով ծածկեց խաղողի դէզերը արեւի ճառագայթներէն եւ բզզացող իշամեղուններէն պատսպարելու մտօք:

— Քը մարդ, ալ հերիք չէ՞ բանինքս բանուորները խոնճեցան, մեղք են, մաս մ'ալ թող վաղուայ մնայ, վաղը կուգանք կը լմնցնենք — Մարգար Աղբօր կիներ էր խօսողը:

Մարգար Աղբար իր կնոջ միջամտութիւնը չսիրեց, եւ իր կինը կշտամբելով կտրուկ մը ըսաւ.— Խոնճենալ, մոնճենալ չեմ գիտեր, դուք կ'երթաք գացէք, ես հոս տի կենամ մինչեւ գործս գլուխ հանեմ:

— Մուրս գլխուդ, պատասխանեց Սրբուհի:

— Հա՛ կնիկ, ինչո՞ւ չէ, մուրդ թող գլխուս ըլլայ: Աշխարհը գիս կ'անիծէ դուն պակաս մի՛ մնար: Ախ ինչ ընեմ, ունիմ չունիմ այգի մը ունիմ: Ես էս հագիին համար ստեղծուեր եմ. ապրիմ ալ, մեռնիմ ալ հոս տի կենամ:

Մարգար Աղբօր խօսքը խօսք էր, իր որոշումներն ալ վճռական. Սրբուհին այդ լաւ գիտէր, իր մարդը շատ լաւ ճանչցած էր, ուստի իր էրկան դառնալով.

— Ինչա՞տ մարդ ես. օր մը այդ ինչատութեանդ գոհը պիտ ըլլաս, այս ըսելով բանուորներուն հետ իրենց ծրարները հաւաքելով այգիէն հեռացան:

Արեւը կիսովին թաղուած էր հորիզոնէն ներս, եւ ինչպէս որ կրակարանի մէջ վառուող բոցավառ փայտերը կրակէ լեզուներ կ'արձակեն դէպի վեր, այդպէս ալ արեւը իր բոցավառ շողերով ամբողջ հորիզոնը կարմիր ներկեր էր:

Եւ երբ արեւի վերջին ճառագայթը մթութեան տեղի կուտար, Մարգար Աղբօր կիներ եւ աշխատաւորները գիւղ կը մտնէին:

Ոչ ոք տուն կ'ուզէր երթալ, առանց մեծ աղբիւրէն բուռ մը ջուր խմելու:

Մարգար Աղբօր քաջասիրտ տղան Կայծակ՝ այգին կեցեր էր իր հօրը օգնելու, այն յոյսով թէ քիչ վերջ իրենք ալ տուն պիտի երթան:

Թէեւ Մարգար Աղբար արդէն շատոնց որոշեր էր որ այդ գիշեր Կայծակին հետ միասին իրենց այգին մնան, բայց իր կնոջ բան մը չէր ըսած այդ մասին:

Ատենէ մը ի վեր էր որ մութը բոպիկ ոտքերով եւ անշշուկ եկեր ու գիւղն ու այգին շրջապատեր էր:

Մարգար Աղբար խաղողի դէզին քով կեցած լուսնի մանգաղը կը դիտէր, երբ տեսաւ որ փիղի երեւոյթով ամպ մը եկաւ ու շողացող արծաթէ լուսինին շեղբը խափանեց:

— Աղբար, այսքան խաղողը ի՞նչպէս հոս թողուլ եւ տուն երթալ, թէ որ գողերը հգին մտնեն եւ մեր դատած, բանած բերքը կրեն ու տանին. է՛հ, տարի մը լման գործէ չարչրկուիլ, քրտինք թափէ եւ յետոյ, թոյլ տուր որ ուրիշներ վայելեն: Մէ՛, չէ՛, ես ալ, տղաս ալ այս գիշեր հոս տի կենանք . . .

Այս վերջին բառերը ասագանգի մը պէս զարնուեցան Կայծակին ականջներուն, իր սրտին զարկը բազմապատուեցաւ եւ՝

— Հայրի՛կ, այս ասաւոր մուծին մէջ գործ չի տեսնուիլ, ու քանի որ երկինքն ալ ամպոտեց, իմաստութիւն է որ տուն երթանք, ըսաւ ան:

— Տղա՛ս, ձա՛գս, քու գարուն արեւիդ մեռնիմ. այս ոսկի դէզերը ի՞նչպէս հոս թողունք ու տուն երթանք: Գէշ ժամանակ է, մարդոց վստահիլ չըլլար, մեր հոս չեղած ժամանակ կուգան ամէն բան կը տանին: Այս հարստութիւնը մենք մեր կեանքով պէտք է որ պաշտպանենք: Արդէն վախնալու հարկ չկայ, քանի որ հրացան ալ ունինք:

Մարգար Աղբար այս ըսելէ վերջ, հայր ու տղայ մուծին մէջ հոս հոն թուփերուն զարնուելով հասան խուղը, եւ խաւարին թանձրութիւնը վանելու համար փոքրիկ կրակ մը վառեցին:

Զօրաւոր հով մը սկսած էր դուրսը եւ կարծես ատեն ատեն խշրտուկ մը կը հասնէր իրենց ականջին: Մարգար Աղբար հրացանը խլեց եւ դուրս ելաւ. խաւարի ասաւոր թանձրութեան մէջ բան մը չի նշմարեց. վերադարձաւ խուղը:

Մերթ ընդ մերթ հովը կը սաստկանար եւ կարծես առիւծի մը պէս կը մռնչէր. հովի ոյժին առջեւ օրրանի մը պէս կ'օրօրուէր խուղը: Հայր եւ որդի երկու սֆինքսներու նման նստած տխրօրէն մտիկ կ'ընէին մահերգի մը սկզբնաւորութեան որ կը մօտենար ու կը հեռանար, կրկին ու կրկին կրկնելով նոյն ասաւոր դերը:

Փոքրիկ կրակին լոյսով կարելի էր Մարգար Աղբօր դէմքին վրայ նշմարել տխուր նախազգացումի մը սարսափը եւ որպէսզի Կայծակն ալ մահասարսուռ զգացումով չի պաշարուի Մարգար Աղբար անոր դառնալով՝

— Կայծակ, տղա՛ս, քեզ դպրոց դրկեցի որ բան սորվիս, բայց գիտես տղա՛ս դպրոցին մէջ ինչքան ալ սորվիս կեանքի դպրոցին տեղը չի բռներ. այսօր քեզի խրատ մը պիտի տամ, խրատս ականջիդ օղ թող ըլլայ: Գիտես տղաս ըլլայ շուկան կամ որեւէ տեղ երբ կը քալես աչքերդ միշտ գետինը պահէ. աշխարհի մէջ շատ անհոգ մարդիկ կան, որոնք պիտանի բաներ կը թափթփեն ու կը հեռանան: Տղաս, դուն այդ պիտանի բաները ժողովէ եւ տուն բեր, է՛հ, ի՛նչպէ՞թ օր մը պէտք կ'ըլլայ . . .

Կայծակ թէեւ իր հօրը կարգ մը յուրի յատկութիւնները չէր հաւնէր, նոյնիսկ ծիծաղելի կը գտնէր, բայց հեզ ու խոնարհ որդիի մը նման այդ խրատներու վրայէն կը նախընտրէր լուռ անցնիլ:

— Կայծակ, տղա՛ս, խօսի՛ր, բան մը ըսէ, շունը որ շուն է երբ խօսինք իր պոչը կը շարժէ, խօսիր տղա՛ս . . . :

Մարգար Աղբար չկրցաւ իր ըսելիքը լրացնել. երկինքէն ասաւոր կայծակ մը եկաւ եւ երկվայրկեանի մը համար ամբողջ այգին լուսաւորեց. ապա ակնթարթ մը վերջ որոտում մը, որուն հետեւեցան ճռնչող ձայներ եւ Մարգար Աղբար ձեռքը նետեց հրացանին ու,

— Կայծակ շուտ դուրս, խու . . . դը կը . . . փ . . . լ . . . ի . . .

Կայծակ արծիւի մը պէս դուրս թռաւ:

* * *

Գիւղին աքլորները արդէն կանչեր էին: Անձրեւի ու կարկուտի հատիկներ կը գարնուէին թղթածածկ լուսամուտներուն: Հովին ու որոտումին ձայներէն գիւղացիներէն ոմանք պատշգամներէն դուրս կը դիտէին. հովի գորութեան առջեւ հսկայ նոճիներ գետին խոնարհելով արմատախիլ կ'իյնային: Դարաւոր տուները իրենց հիմերէն կը ցնցուէին. հովը ալ աւելի կը զօրանար եւ անձրեւը հեղեղի մը պէս կ'իջնէր երկինքէն, եւ այս թոհ ու բոհին մէջ այգեստաններէն օգնութեան աղաղակ մը կը հասնէր գիւղացիներու ականջին:

— Օգնութի՛ւն . . . օգնութի՛ւն . . . բայց այս բառերուն հետեւող բառերը հովի մուկնչին ու որոտման ձայնին մէջ կը խեղդուէին:

Օգնութեան աղաղակը կը շարունակուէր եւ գիւղացիք ահ ու դողի մատնուած իրենց ընելիքը չէին կրնար որոշել:

Գիւղին քաջերը փողոց նետուեցան, ոմանք զգեստաւորուած, ոմանք գիշերազգեստով. անոնց հետեւեցան ուրիշներ:

— Հէ՛յ գեղացիք . . . Աստուած սիրէ՛ք շուտ . . . պա՛պս, պա՛պս . . .

Գիւղացիք ճանչցան ձայնը: Մարգար Աղբօր տղուն՝ Կայծակին ձայնն էր, որ լալահառաչ եղանակով օգնութիւն կը խնդրէր գիւղացիներէն:

— Ծօ Մարտօ, գեղացւոց ձէն տուր: Էդ ձէնը Մարգար Աղբօր էգիէն կուգայ. այսպէս հրահանգողը Մարօ Պաճին է որ իր առնացի ձայնին համար գիւղացիք երբեմն Մարօ էՖէնտի անունով կը կանչէին գայն:

Եւ Տէլի Մարտօն իր անախորժ ձայնը օգին մէջ արձակեց.— Հէյ գեղացիք էլէք հա էլէք, Մարգար Աղբօր էգին գող է մտեր. էլէք հա էլէք . . .

Տէլի Մարտոյին ձայնին հոսանքը հասաւ ամէն տուն. ամէն տունէ մարդ մը կամ կին մը դուրս թռաւ: Գիւղի Ֆէտային իր հրացանով, տէրտէրն իր խաչով ու աւետարանով, վարժապետը իր գաւազանով, հիւսնը իր մուրճով, կօշկակարը կօշիկ դարձնելիք փայտով, մշակը իր մասայով՝ այս բոլորը հաւաքուեցան մեծ աղբիւրին հրապարակը:

«Օգնութեան բանակը» կազմուած էր. յանկարծ տէրտէրը ձայն տուաւ Մարօ Պաճինին.

— Մարօ Պաճի, Մարգար Աղբօր էգին երթալու համար կետուկէն պիտի անցնինք:

Թէեւ ան լաւ գիտէր թէ ո՛ր ճամբով պէտք էր առաջնորդէր, քանի որ ամէն տարի խաղողօրհնէքին ան վայելեր էր Մարգար Աղբօր էգին խաղողը, գինին, նաեւ անոր բացառիկ հիւրասիրութիւնը:

— Քա մեղայ տէրտէր, տէ հայտէ՛, աւելորդ խօսքեր մի՛ խօսիր: Հոն էգին կեանքի ու մահու ըոպէսներ կ'ապրի խեղճը: Էդ մարդը որ մեռնի խաչդ ու աւետարանդ ի՞նչ օգուտ պիտի ունենայ:

Մարօ Պաճին այսքան ըսաւ ու լռեց:

Յանկարծ մութիւն մէջէն.— Ծօ լոս ըրէք, ոտքս քարին դպաւ, պոռաց մէկը: Դարձան որ Մարտօն է, քիչ մը խեղկատակութիւն կը փորձէր ընել:

Հեռաւոր այգիէն սրտակեղծ ձայնը կրկին լսուեցաւ, այս անգամ ա՛լ աւելի աղերսական, ալ աւելի նուաղկոտ . . . եւ կրկին ու կրկին՝

— Հէ՛յ գեղացիք, խողը փլա՛ւ, հասէ՛ք, շուտ հասէ՛ք: Պապս . . . կը . . . խեղդուի . . . հասէ՛ք, հա՛ հասէ՛ք . . .

Մենչող հովին մէջ տղուն աղերսը կիսախեղդ ձայն մըն էր այլեւս, որ գիւղացիներուն ալանջը հասնելով կը ծանրացնէր անոնց մտահոգութիւնը:

— Հէ՛յ ժողովուրդ, ժիր կեցէք, ընկրկելու ժամանակ չէ. ամէն գնով պէտք է յառաջանանք, ձեռք ձեռքի տուէք, այս հովը պէտք է յաղթահարենք: Տէրտէրը այս խօսքերէն վերջ դարձաւ ժամկոչին:

— Ծօ՛ Հայկազ, գիւղ դարձիր եւ ժամուն կոչնակը ժիր մը ծեծէ:

Գիւղին օգնութեան բանակը երկուքի բաժնուած սկսած էր վիճիլ. ոմանք կ'ըսէին թէ՛ Մարգար Աղբօր կեանքը փրկելու համար շատ ուշ է. ուրիշներ՝

— Աղբար, այդ մարդը որո՞ւ մազի չափ օգակար եղած է որ այս հովին ու փոթորիկին իրար անցեր ենք անպիտանի մը կեանքը փրկելու:

Տէրտէրը դէմ կեցաւ այդ գաղափարին, դժգոհները յանդիմանեց ըսելով՝

— Մարդ որքան կ'ապրի պարտաւոր է իր նմաններուն օգնելու: Մանաւանդ որ՝ Մարգար Աղբար մահուան թակարդին մէջ ինկած է: Անոր այս խօսքերէն վերջ ամբողջ միաբոլոր սկսաւ յառաջանալ:

Երկնքի ամպերը պատառ պատառ սկսած էին ցրուիլ: Լուսաբացը մօտ ըլլալու էր, աքլորներու կանչը այդ կը հաստատէր արդէն:

Օգնութեան աղաղակը ամէն անթափանց վարագոյր ճեղքելով կրկին կը հասնէր անոնց ալանջին, այս անգամ պարզ եւ յստակ:

— Ախ պեպախտներ, ինչո՞ւ կ'ուշանաք, պապս խեղդուեցաւ:

Երբ օգնութեան բանակը այգին կը հասնէր հովը դադրած էր, ու Մաստառ լերան կողերէն արեւի ճաճանչներն սկսած էին արեւազալը աւետել: Գիւղին կոչնակը սկսաւ յամբօրէն տխրութիւն մը սփռել իր շրջակայքը:

Մարգար Աղբար խուղի աւերակոյտին տակ թաղուած էր, գլուխը կիսովին դուրս, գերան մը իր վզին կտրուածքին վրայ: Գիւղացիք փրկութեան գործը երբ վերջացուցին, Մարգար Աղբար միայն մէկ անգամ իր աչքը բացաւ, եւ խաղողի դէզին վրայ յառելով, — Կայծակ, տղաս, խաղողը վնասուեր է, թէ չէ . . . անգամ մը նայէ, ձագուկս: Ալ չի կրցաւ խօսիլ:

Արեւը հրեղէն գնդակի մը պէս Մաստառի երկնաբերձ գագաթէն վեր կը բարձրանար, երբ Սրբուհի աղէտավայրը կը հասնէր իր դրացիներուն հետ: Ու երբ տեսաւ որ Մարգար Աղբօր դիակը խաղողի դէզին քով անհոգ ու անցաւ կը հանգչէր, գրեթէ խելակորոյս, — Բարի վայելում քե՛զ, Մարգար, փափաքիդ հասար մը, հըպը իմ հալս ի՞նչ պիտի ըլլայ:

«Պայքար Եռամսեայ»